Գեղամ Մ. Բադալյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Մաս ութերորդ: Սասուն պատմաաշխարհագրական մարզը և Բաղեշ (Բիթլիս) քաղաքը

Բանալի բառեր – Առաջավոր գյուղեր, Հոլոյան–Պետոյան, Տալվորիկ, Խութ–Բռնաշեն, Հազո քաղաք, Խուլփ, Իսյանի իշխանություն, Խարզանի իշխանություն, Թաղի գլուխ, Կարմրակ Սուրբ Նշան առաջնորդանիստ եկեղեցի, Ավեր մեյդան, Ավեխու թաղ, Ծապրկորու թաղ, Գոմոց թաղ, Ամլորդվո (Ամիրդոլի) Սուրբ Հովհաննես Մկրտիչ, Խնդրակատար Սուրբ Աստվածածին:

Մուտք

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագրին նվիրված ուսումնասիրության **վերջին մասը** կազմված է 2 բաժիններից: Շարունակելով Բիթլիսի (Բաղեշի) նահանգի նախաեղեռնյան ժողովրագրական պատկերի ուսումնասիրությունը՝ նախ ներկայացվում է Հայոց պատմական հիշողության մեջ հավերժացած **Սասուն** պատմաաշխարհագրական մարզը՝ համապատասխան քարտեզով, և ապա՝ նահանգային կենտրոն **Բաղեշ** (<**Բաղաղեշ**) կամ **Բիթլիս** քաղաքը:

Ա. Սասունի հայությունը Մեծ եղեռնի նախօրեին

Սասուն պատմաաշխարհագրական մարզն ընդգրկում էր Բիթլիսի (Բաղեշի) նահանգի հարավարևմտյան խոշոր հատվածը: Թեև պաշտոնապես այն մասնատված էր Բիթլիսի, Գենջի, Մուշի և Սղերդի սանջակների միջև, սակայն հայկական ավանդական ներքին վարչական բաժանումը կենսունակ է եղել և պահպանվել է անգամ 20–րդ դարասկզբին: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք համարում Սասունը ներկայացնել ըստ հնուց եկող հետևյալ բաժանման. 1. **Առաջավոր գյուղեր** (**Առաջավորաց Սասուն**), 2. **Շատախ** և **Ծովասար**, 3. **Տալվորիկ** (**Քարակ**), 4. **Իշխանձոր**, 5. **Գավառ** (**Կավառ**) կամ **Բուն Սասուն**, 6. **Փսանք** կամ **Փսանաց**

*Ընդունվել է տպագրության 28.05.2017:

գավառ (Բուսանաց գավառ), 7. **Խութ–Բռնաշեն**, 8. **Մոտկան**, 9. **Մարաթուկ** կամ **Խարզանք (Վերին Խարզան)**, 10. **Հազո–Խաբլջոզ** կամ **Հազվան**, 11. **Խիանք**, 12. **Խուլփ**, 13. **Գազկու գավառ** (**Գավառ**) կամ **Հավեդան (Հավեդիկ)**, 14. **Խարզան** (**Ղարզան**):

Սասունում հայերն ընդհուպ մինչև Մեծ եղեռն կազմել են երկրամասի բնակչության բացարձակ մեծամասնությունը՝ 55000–60000 մարդ: Ընդ որում, Սասունի կենտրոնական և հյուսիսային շրջանները՝ **Վերին Սասուն**, **Առաջավոր գյուղեր**, **Շատախ**, **Ծովասար**, **Փսանք**, **Տալվորիկ**, **Իշխանաձոր** (**Իշխնձոր**) գավառակներով կամ գյուղախմբերով, զուտ հայաբնակ էին (չնչին բացառություններով): Սա պատահական չէր, քանի որ երկրամասի այս հատվածում մինչև 19-րդ դ. 70–80-ական թթ. պահպանվել էր հայկական պետականության արտահայտություն համարվող Սասունի կիսանկախ իշխանությունը: Վերջինս մի շարք կառավարող (իշխանական) տոհմերի դաշնություն էր, որոնցից էին **Հոլոյենց** (**Պետոյենց**), **Քաջառենց** կամ **Քաջհայրենց**, **Տալվորիկցիների (Դալվորցիներ)**, **Բերմցիների** (**Պերմցիներ**) ընտանիքները: Մոտավոր հաշվարկներով **Վերին Սասունի** իշխանությունների զինական ուժը կազմում էր 4000–4500 մարտիկ: Սասունի որոշ շրջաններում, ինչպես, օրինակ՝ **Խութում**, **Կուսգետի** ձորագավառում, ստեղծվել էր առանձնահատուկ կարգավիճակ՝ ի դեմս հայ-քրդական, իսկ **Խարզանում՝** հայ-եզդիական համադաշնությունների: Ի դեպ, անգամ **Սասունի** արևմուտքում՝ **Խուլփում,** և արևելքում՝ **Հազոյում**, ուր 16–17-րդ դդ. ձևավորվեցին քրդական իշխանություններ (թրք. hükümet), ինչի հետևանքով եկամուտ քուրդ ավագանին աստիճանաբար գրավեց գերակա դիրքեր, տեղի հայ իշխանական ընտանիքները հիմնականում պահպանվել էին և օժտված էին արտոնյալ դիրքերով ու իրավունքներով: Այս հանգամանքով պայմանավորված՝ 19-րդ դ. վերջերից, երբ նոր թափ ստացավ հայկական ինքնավարությունը հետզհետե վերացնելու Բ. Դռան քաղաքականությունը (որի համար վերջինս օգտագործում էր հարավից երկրամաս թափանցած քրդական վաչկատուն ցեղերին), Սասունը և առանձնապես **Վերին Սասունը** վերելք ապրող հայ ազատագրական շարժման գլխավոր կենտրոններից մեկը դարձան: Թուրքական պետությունը միայն կանոնավոր բանակային և «համիդիե» զորամիավորումների կիրառմամբ 1894 թ. և 1904 թ. ճնշեց սասունցիների ապստամբությունները: Այնուամենայնիվ, մինչև Մեծ եղեռն **Վերին Սասունը** կարողացավ պահպանել իր արտոնյալ դիրքերը: 1915 թ. մարտ-օգոստոս ամիսներին Սասունը կրկին վերածվեց անօրինակ հերոսամարտի կենտրոնի: Ցավոք, թշնամու բոլոր առումներով հսկայական գերակշռությունը (միայն կանոնավոր բանակային ուժերը կազմում էին 30000 զինվոր ու սպա), զինամթերքի խիստ անբավար լինելը, ինչ-որ տեղ նաև ինքնապաշտպանության ղեկավարների թույլ տված որոշակի սխալները, հնարավորություն չտվեցին հաղթական ավարտին հասցնել հերոսամարտը, ավելին, օգնության հասնել Մուշ-Տարոնին: 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին թշնամու հետզհետե սեղմվող օղակը հարկադրեց ինքնապաշտպանության ջոկատներին և խաղաղ բնակչությանը ծանր կորուստներով նահանջել **Անդոկ-Կեփին** լեռների շրջան: 1915 թ. օգոստոսին ճնշվեցին նաև տեղի դիմադրության կենտրոնները, որից հետո գազազած թշնամին անխնա հաշվեհարդար տեսավ ողջ մնացած սասունցիների մեծագույն մասի հետ: Կատարյալ «հայաորս» ծավալվեց 1915–1916 թթ. ձմռան ամիսներին: Սարսափելի չափերի հասան նաև սովամահությունը և ցրտահարությունը: Միայն 1916 թ. փետրվարին ռուսական բանակի կողմից Մուշի գրավումը հնարավորություն տվեց Եղեռնը վերապրած հայերին (տարբեր տվյալներով՝ շուրջ 11000 մարդ) լեռներից իջնելու Տարոն, որտեղից էլ անցնելու Արևելյան Հայաստան:

Սասուն պատմաաշխարհագրական մարզի բնակավայրերի ցուցակները կազմելիս օգտվել ենք այլևայլ տպագիր և անտիպ (արխիվային) աղբյուրներից: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն 1912–1914 թթ. վիճակագրական նյութերը: Մանրամասնությամբ և բավականին բարձր հավաստիությամբ աչքի է ընկնում հատկապես Մշո առաջնորդարանի նախկին քարտուղար, իսկ 1914–1915 թթ.՝

Սասունի գավառի ելևմտից վարչության գանձապահ (թրք. sandık emini) **Նազարեթ Մարտիրոսյանի** վիճակագրությունը[1]: Սասունի վերաբերյալ հիրավի հայրենանվեր գործ է կատարել հայտնի մանկավարժ, պատմաբան, բնիկ սասունցի **Վարդան Պետոյանը,** որը տարիների տքնաջան որոնումներով, փաստորեն, անվերապահ կորստից փրկել է իր բնօրրանի պատմական աշխարհագրությանը վերաբերող ահռելի և հազվագյուտ նյութ[2]: Վ. Պետոյանի աշխատություններն առանձնակի կարևորություն ունեն Սասունի ինչպես բնակավայրերի, այնպես էլ մանրատեղանունների, սրբավայրերի (վանքեր, եկեղեցիներ, ուխտատեղիներ) ուսումնասիրությունը լրացնելու տեսանկյունից, ինչի շնորհիվ կարող ենք ավելի ամբողջական պատկերացում ունենալ երկրամասի հայ բնակչության կրոնամշակութային կյանքի վերաբերյալ:

Մեծ կարևորություն ունեն ցեղասպանության ականատեսների վկայությունները, որոնք հրատարակել է Հայաստանի ազգային արխիվը[3]: Սասունի տեղագրության մասին արժեքավոր տեղեկություններ են հանդիպում նաև ժամանակի հայկական պարբերական մամուլում: Մասնավորապես կցանկանայինք առանձնացնել 1894 և 1904 թթ. ապստամբությունները լուսաբանող մի շարք հոդվածներ, ուր ներկայացված են նաև վիճակագրական բնույթի հետաքրքրական նյութեր[4]: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մեր կողմից նախորդ հոդվածներում բազմիցս հիշատակված **Ա-Դոյի** հայտնի գործը[5]: Ուշագրավ են նաև արևմտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ **Վարազդատ Տերոյանի** հայթայթած վիճակագրական բնույթի տեղեկությունները[6]: Խութ-Բռնաշենի մասին հետաքրքիր տեղագրական և վիճակագրական տվյալների ենք հանդիպել նաև 20-րդ դ. սկզբին Բիթլիսի անգլիական հյուպատոս (նախապես՝ փոխհյուպատոս) **Արշակ Սաֆրաստյանի** ուղեգրություններում[7]:

Սույն ուսումնասիրության մեջ ևս կարևոր տեղ ենք հատկացրել սրբավայրերին: Հարկ է նշել, սակայն, որ գործը բարդանում է նրանով, որ այս առումով հրապարակում չկա ամբողջական և համապարփակ տվյալներ պարունակող որևէ սկզբնաղբյուր: Դա է պատճառը, որ անհրաժեշտ նյութերը քաղել ենք մեզ հասու այլևայլ աղբյուրներից: Դրանց շարքում կցանկանայինք առանձնացնել **Գարեգին Սրվանձտյանի** «Թորոս աղբար» աշխատասիրության մեջ զետեղված նյութերը Սասունի արևմտյան և կենտրոնական գավառ-գավառակների (Խուլփ, Խիանք, Տալվորիկ ևն) հայկական սրբավայրերի մասին[8]: Կարևոր է նաև **Արիստակես Տեկանցի** աշխատու-

1 Տես **Մարտիրոսեան Ն.**, Սասուն, «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, N 13, էջ 6-7: **Նույնի՝** Բռնաշէն-Խոյթ.- Նույն տեղում, թիւ N, էջ 8: **Նույնի՝** Խիանք և Խուլբ.- Ն. տ., N 15, էջ 8: **Նույնի՝** Մօտրկան.- Ն. տ., 1917, N 7, էջ 8-10: Հմմտ. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 397 (Գևորգ Մեսրոպի), ցուցակ 1, գործ 1: Թէոդիկ, Գողգոթա Հայ հոգևորականութեան և իր հօտին աղէտալի 1915 տարիին, Թէհրան, 2014, էջ 126-128, 133-138: **Raymond H. Kévorkian,Paul B. Paboudjian**, Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille de Genocide, Paris, 1992, pp. 477-490. «Վիճակագրութիւն Մուշ-Սասունի (քաղուած Մշոյ դաշտի դպրոցական վիճակագրութիւնից, դպրոցական) վերատեսուչ Ռուբէնի, [1]914, Մայիս 1)». - Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ, գ. 145, թթ. 1-5:

2 Տես **Պետոյան Վ.**, Սասունի և Տարոնի պատմա-աշխարհագրական տեղագրությունը, Եր., 2005: Հմմտ. նույնի Սասուն, Եր., 2016:

3 Տես «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ», փաստաթղթերի ժողովածու, հատոր 2 (Բիթլիսի նահանգ), Եր., 2012:

4 Տես «Սասունի կռիւը».- «Դրօշակ», Վիեննա, 1895, N 1: «Սասուն».- Ն. տ., N 11: Հմմտ. «Ցուցակ Սասունի աւերուած գիւղերի 1894 թ. (Արժանայաւատ աղբիւրից)».- «Մուրճ», N 8, էջ 1154-1155: «Սասուն: Վիճակագրական».- «Դրօշակ», ժնև, 1904, N 4-5:

5 Տես **Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները, Եր., 1912:

6 Դրանք գրանցված են Վ. Տերոյանին պատկանող՝ Ա-Դոյի վերը նշված գրքի տարբեր էջերում: Այդ մասին տես **Բադալյան Գ.**, Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ.- «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2005, N 1 (105), էջ 212-220:

7 Տես **Սաֆրաստեան Ա.**, Խոյթ-Բռնաշէն գաւառները. Ուղևորական տեղեկագրութիւններ.- «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1933, N 1-2, 9-10, 1934, N 1-2, 5-7:

8 Տես **Սրվանձտյան Գ.**, Երկեր, հատ. 2, Եր., 1982: Խուլփի և Խիանքի եկեղեցիների ոչ-լրիվ ցանկը տես նաև «Էջմիածին», Սբ Էջմիածին, 1965, N Բ-Գ-Դ:

թյունը, որտեղ, կարելի է ասել, եզակի տվյալներ կան **Խութ–Բոնաշենի**, **Շատախի**, **Ծովասարի**, **Գավառի** և **Մոտկանի** գյուղական եկեղեցիների մասին[9]: Բացառիկ են բնիկ սասունցի **Մկրտիչ** քահանա **Մուրադյանի** տեղեկությունները՝ նվիրված հայրենի Փսանքի ուխտատեղիներին և այլ սրբավայրերին[10]: Հարկ է նկատի ունենալ, որ դրանք հիմնականում եզակի են և չեն հանդիպում որևէ այլ աղբյուրում: Սասունի վանքերի մասին ուշագրավ տվյալներ են հաղորդում **Գեղամ Տեր–Կարապետյանի** երկերը[11] և Մխիթարյան միաբան **Համազասպ Ոսկյանի** հանրահայտ մատենաշարը[12]: Հոդվածը կազմելիս մեր ուշադրությունից չեն վրիպել նաև **Ղ. Ինճիճյանի** հայտնի աշխատությունը[13], ինչպես նաև ձեռագրական այլևայլ նյութեր, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել **Խութի Սուրբ Աղբերիկի** և **Տարոնի Սուրբ Հովհաննեսի** կամ **Եղրդուտի** նշանավոր վանքերի կոնդակները[14]:

Ավելացնենք նաև, որ հոդվածում օգտագործել ենք Սասունի տարբեր բնակավայրերի մասին մեր կողմից հավաքված մի շարք տեղագրական բնույթի նյութեր: Այս առումով առանձնանում են հեթինքցի **Արշակ Հովհաննեսի Բաղդասարյանի** (1906–1996) հայրենի գյուղի վերաբերյալ անձամբ մեզ հաղորդած հազվագյուտ և խիստ արժեքավոր տվյալները, որոնք գրանցել ենք Պռոշյան ավանի (նախկին Նահրիի շրջան) նրա տանը 1995 թվականին: Նույն ձևով 2002 թ. Աղբի գյուղի մասին տվյալներ ենք հավաքել վերին բազմաբերդցի **Հայկ Պարույրի Խամոյանից** (ծնվ. 1930 թ.), որն արմատներով **Գյալառաշ** բնակավայրից է (**Ծովասարի** գավառակ): Սասունի հետեղեռնյան ժամանակաշրջանի վերաբերյալ արժեքավոր տվյալներ ենք հայթայթել 2011 թ. հուլիսին Երևանում կայացած համահայկական խաղերի ընթացքում Ստամբուլից ժամանած սասունցիների պատվիրակության անդամ օրիորդ **Բեսսե Կաբակի** հետ հանդիպման ժամանակ: Վերջինս միաժամանակ ուշագրավ տվյալներ փոխանցեց նաև իր հայրենի Կուսգետ գյուղի վերաբերյալ[15]:

1. Առաջավոր գյուղեր

Սասունի ծայր հյուսիսային մասում բարձրացող **Սիմ** կամ **Կուռտիկ** (իմաստավորված՝ **Կորդուք,** 2729 մ) լեռնագագաթից հարավ տարածվող բնակավայրերը մտնում էին «**Առաջավոր գյուղեր**» հավաքական անունը կրող գավառակի մեջ (հանդիպում է նաև **Առաջավորաց Սասուն** ձևը): Այն կազմում էր Սասունի առաջապահ պաշտպանական շրջանը, որը մշտապես առաջինն է դիմակայել թշնամուն և հակահարված հասցրել նրան: «**Առաջավոր գյուղերն**» աշխարհագրական առումով կարելի է բաժանել 2 խմբի: 1-ին խմբի մեջ էին մտնում **Կողբաջրի** կամ **Խուլփի** ակունքների շրջանում (այդ մասում՝ **Սեմալ**) գտնվող **Ալիանք**, **Գյալեգյանման** (քրդ.՝ «Ցորնաձոր»), **Շենիկ**, **Մնրաձոր** (**Գյալեմսուր**) և **Սեմալ** գյուղերը: 2-րդ խումբն ամբողջությամբ զբաղեցնում էր **Վերին** Սասունի կենտրոն **Ընկուզաձոր–Գյալեգուզանը**, որի գյուղակները («թաղերը») սփռված էին **Անդոկ** լեռնագագաթի արևելյան լանջերից

9 Տես **Արիստակես Տևկանց**, Այցելություն ի Հայաստան: 1878 թ., Եր., 1985:

10 Տես **Մկրտիչ քհն Մուրատեան**, Սասնոյ սրբավայրերն ու աւանդութիւնները.– «Բազմավէպ», Վենետիկ–Ս. Ղազար, 1934, N 2–3: **Նույնի**՝ Սասնոյ աշուղները.– Ն. տ., N 11–12: Նույնի՝ Դրուագներ Սասնոյ յուշերէս.– Ն. տ., 1936, N 1–2: **Նույնի**՝ Գայլ Վահանի բերդը.– Ն. տ., 1938, N 4–5: Պահպանվել է նաև Մ. Մուրադյանի կողմից կազմված վիճակագրական նյութերը հայրենի գավառի մասին: Տես «Պատմութիւն Տարօնի աշխարհի», պատմագրեց **Կ. Սասունի**, Պէյրութ, 1957, էջ 382:

11 Տես **Գեղամ Տէր Կարապետեան (Մշոյ Գեղամ)**, Տարօնի վանքերը: Ուղևորի յիշատակներ, Եր., 2003:

12 «Տարօն–Տուրուբերանի վանքերը», գրեց դկտր. **Հ. Համազասպ Ոսկեան** Մխիթարեան ուխտէն, Վիեննա, 1953:

13 Տես **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Առաջին: Ասիա, հատ. Ա, Վէնէտիկ–Սբ Ղազար, 1804:

14 Տես **Գարեգին Ա. Կաթողիկոս**, Ցիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա (Ե. դարից մինչև 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 179/180–189/190: **Սահակ Ա. Մուրատեան**, **Նազարէթ Պ. Մարտիրոսեան**, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց–Թարգմանչաց Վանքի և շրջակայից, Երուսաղէմ, 1967, էջ 199–204:

15 Այս տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև հետևյալ աշխատությունը. **Аванесов С.С.**, Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963:

սկիզբ առնող և **Տալվորիկի ջրի** ակունքները համարվող «**Պայթող աղբյուրի**» (**Պայթակն**, քրդ.՝ Qaniya Bâhjin) ձորահովիտներում (տես ստորև): «**Առաջավոր գյուղեր**» գավառակի ընդհանուր սահմաններն էին հյուսիսից **Հայկական Տավրոսի** կենտրոնական հատվածը կազմող **Սիմսարի** (նաև՝ **Խաչառաջ**) լեռների արևմտյան ճյուղավորումներով՝ **Մուշ–Տարոնը**, արևելքից՝ **Խութ–Բոնաշենը**, հարավից՝ **Ծովասարը** և **Տալվորիկը** (վերջինիս **Գյալեսան–Շնաձոր** լեռնագագաթով), հարավ–արևմուտքից, **Անդոկ** (2812 մ) և **Կեփին** կամ **Կապան** (2734 մ) լեռնազանգվածներով՝ **Իշխանձորը**, իսկ հյուսիս–արևմուտքից՝ **Խուլփը**: Գավառակը Սասունի սիրտն էր, **Հոլոյան** իշխանների կենտրոնը: Այս տոհմի ներկայացուցիչները, որոնք հայտնի էին **Պետոյան** տոհմանունով, այստեղ էին ամրապնդվել 17–րդ դ. սկզբներին՝ տեղափոխվելով հարևան **Խուլփի** հյուսիսային **Շենի** և **Գաբովարտի** (**Կապրնին**) շրջաններից: Ընդհուպ մինչև 20–րդ դ. սկիզբը տեղի հայերն ունեին կիսանկախ կարգավիճակ և զինված պաշտպանում էին իրենց իրավունքները: Որոշ տվյալներով՝ «**Առաջավոր գյուղերի**» զինված ուժը կազմված էր 1000 ռազմիկներից: Տեղի հայ բնակչությունն ամենագործուն մասնակցությունն է ունեցել Սասունի 1894 և 1904 թթ. ապստամբություններին: Չնայած ծանր կորուստներին՝ «**Առաջավոր գյուղերի**» հայերն իրենց արտոնյալ կարգավիճակը հիմնական կողմերով կարողացան պահպանել ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտ: Գավառակի գյուղերն աչքի էին ընկնում բազմամարդությամբ և ավելի շուտ, գյուղախմբեր էին՝ կազմված մի քանի «թաղ»–գյուղակներից: 1914 թ. «**Առաջավոր գյուղերի**» հայ բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 6000–ի: Սասունի հերոսամարտի ընթացքում ևս «**Առաջավոր գյուղերի»** բնակիչներն անվեհեր կերպով դիմակայեցին դարավոր ոսոխին մինչև 1915 թ. օգոստոս՝ շարունակելով դիմադրությունը **Անդոկի** լանջերին: Հերոսամարտի անկումից հետո էլ տեղի վերապրած հայերը դժոխային պայմաններում անգամ շարունակեցին դիմակայությունը մինչև 1916 թ. փետրվար, երբ տեղափոխվեցին ռուսների կողմից գրավված Մուշ, որտեղից էլ՝ Արևելյան Հայաստան: Նշված գյուղերի բնակիչների սերունդներն այժմ բնակվում են **ՀՀ–ի Արագածոտնի** մարզի մի շարք գյուղերում (**Ավան**, **Դիան**, **Ջովասար**, **Իրինդ**, **Լեռնարոտ**, **Ոսկեթաս, Սասունիկ** ևն):

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ալիանք (Ալիանցիք, Ալիանց, Այլանց)	եկեղեցի	1	Ալիանքը մինչև 19–րդ դ. վերջը համարվում էր **Գյալեգուզանի** «թաղերից» մեկը: Սակայն 1890–ական թթ. առանձնանալով՝ այն դիտվում էր ինքնուրույն բնակավայր: Իր հերթին **Ալիանքը** բաժանվում էր մեկ տասնյակից ավելի «թաղ»–գյուղակների, որոնք սփռված էին **Կողբաջուրի կամ Խուլփի** (**Բաթմանաջուր–Քաղիրթ** ակունքների շրջանը), մասամբ՝ **Տալվորիկիջրի** ձորակներում: Այդ գյուղակներն էին՝ **Ալիանցոց–գյալի** (**ձոր**), **Բալոյի արտեր** կամ **Բլոյի գեղ**, **Բողնցի**, **Բոնկե հովիտ**, **Գյաոբսար** (**Գեռհասար**), **Կյավոեսպի** (քրդ. «սպիտակ քար»), **Մամքան** (քրդ. Nâwâle Mamîkan), **Մերկեխոբք**, **Շանփե** (քրդ. Newele Şânpe), **Չայ**, **Սևոբ**, **Տափե** (**Տաբե**), **Քոփ** (**Քոբ**): Հայտնի է նաև **Ալիանքի** մեկ այլ՝ ըստ տոհմերի, ներքին բաժանումը՝ **Ավոյի տներ**, **Հովհաննեսի տներ**, **Մրգոյի** (**Մարգարի**) **տներ, Շարկեի Օվիտ, Մոյի** (**Սանասարի**) **տներ:**
2	Գյալեգյանման (Գելիեգենման, Ցորնաձոր)			Այս և **Մսրաձոր** գյուղերը վարչականորեն երբեմն մտել են **Խուլփի** գավառի մեջ:

3	Գյալեգուզան (Գելիեգուզան, Ընկու–զաձոր)	Սբ Թուխ Մանուկ	3	Եկեղեցում պահվել են ձեռագիր մատյաններ: Գյուղում կար ևս 3 ավերակ եկեղեցի, որոնք ուխտավայրեր էին՝ **Սբ Կարապետ**, **Սբ Կի–րակոս** և **Սբ Սարգիս:** Գյուղախմբի ծայր արևելյան մասում՝ **Տալվորիկիջրի** (**Պայթող**
				աղբյուր) և **Շատախի** (**Սուսանաջուր**) միա–խառնման մոտակայքում պահպանվել էին քարաշեն (բրբռ. «քարկապ») կամուրջի ավե–րակներ: **Գյալեգուզանը** կազմված էր 3 տասնյակից ավելի մանր «թաղ»–գյուղակնե–րից, որոնք շուրջ 20 կմ երկարությամբ սփռված էին արևմուտքից արևելք՝ **Անդոկ** լեռան ստո–րոտից մինչև **Տալվորիկիջուր** գետի գլխավոր հունը: **Գյալեգուզանի** հիմնական «թաղերն» էին՝ **Ալոչակ**, **Ամբար** կամ **Ամբարներ** (բրբռ.՝ **Ամբրբրնին**), **Բունգեղ** կամ **Եկեղեցութաղ** (ուր գտնվում էր գործող եկեղեցին), **Դհոլ** կամ **Դեհոլներ**, **Խարիբշան** կամ **Ղարիբջան**, **Խարձնգոմ(եր)**, **Խասոյ մզրե** (**Մզրե Խասո**), **Խոշոք(ներ)**, **Կավրտի(կ)** կամ **Գաբրդիկ**, **Հարմոգոմեր** կամ **Գյալեսան** (քրդ. «Շնա–ձոր»), **Հոսել** կամ **Հոսլներ** (բրբռ. «ոսկոր–ներ», այստեղ էր հին գերեզմանատունը), **Հուսենցիք**, **Մազրեսա(ն)**, **Մերգեր**, **Մխիթար, Պալո գոմեր** (բրբռ. **Փալո գոմանին**), **Ռաշրկ կամ Ռաշոքներ, Տաղվընիկ** կամ **Դաղբրնիկ:** Գոյություն ունեին նաև ավելի փոքր «թաղեր», որոնք ավելի շուտ վերոհիշյալների մասերն են եղել՝ **Ավիախանի**, **Բայարներ** (բրբռ. **Բա–յարնին**), **Գեոիկ** կամ **Գյառրկ**, **Լիսրկ**, **Խա–ջրկ**, **Կյավռեսպի** (քրդ. «Սպիտակ քար»), **Մաժդրկ**, **Միջելներ** (**Մեջլնին**), **Միրդաուր**, **Շիրնիկ**, **Ռաջալներ** (**Ռաջալնին**), **Վերի Գյա–լին**, **Տալասև** կամ **Տահլասև**: Եվս 2 «թաղ»՝ **Կատվի գաժը** և **Շամոյ գաժը**՝ անբնակ էին (բրբռ. «գաժ»–«սար»): Իր ողջ գյուղակներով **Գյալեգյուզանը** 1914 թ. ուներ ավելի քան 2000 բնակիչ (250–300 տուն, կա ավելի բարձր ցուցանիշ՝ 350 տուն):
4	Սնրաձոր (Ներքին Գելի, Գյալեմսուր, օտար հորջորջմամբ՝ Gelimansur կամ Kelimosur)	Սբ Աթանաս (Սբ Անթանիա) Ս. Կիրակոս		2 եկեղեցիներն էլ կիսավեր էին:
5	Շենիկ (Շենրկ)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	1	**Շենիկի** շրջակայքը հարուստ էր պատմա–կան հուշարձաններով: Գյուղից շուրջ 1 կմ հս–արևմուտք՝ բլրի վրա, երևում էին **Սբ Աստվածածին** վանքի (բրբռ. «**Տեր Մայրամ**» < քրդ. Dera Mâryam) ավերակները: Ոչ շատ հեռու **Սբ Գևորգ** մատուռն էր, ուր ուխտի էին գալիս նաև քրդերը: **Շենիկից** արմ՝ **Շեղդան–ցիք** և **Գուռձոկնին** հողամասերի միջև ընկած մի բարձունքի վրա գտնվում էր ամայի **Սբ Կարմրակ** (**Կարմիրակ**) վանքը: Մինչև 1915 թ. պահպանվել էր հին գերեզմանատունը՝ կանգուն խաչքարերով: Մեկ այլ՝ **Սբ Թեո–դորոս** վանքի ավերակները տեսանելի էին գյուղի հվ–արևմտյան կողմում: Այստեղ ևս պահպանվել էին խաչքարեր, շենքերի մնա–ցորդներ: Վանքից մինչև **Կուռտիկ** լեռան **Սևքար** տեղամասը երևում էին ժողովրդի շրջանում «**Քառասուն մանկանց առու**» անունը կրող հին ջրանցքի հետքերը: Ուշա–գրավ հուշարձան էր նաև գյուղից շուրջ 4 կմ արևմուտք՝ **Սեմալի** և **Ալիանցից** ջրերի միա–խառնման վայրում, եռանկյունաձև դժվա–րամատչելի քարաժայռի վրա կառուցված

				«**Ալկունյաց բերդը**» (քրդ. Qâlâ Sîlîng): Շենիկը ևս կազմված էր 4 «թաղ»–գյուղակներից՝ **Բուն Շենիկ**, **Գուռճոք(նին)**, **Մզրեսորք** (այլ տարբերակով՝ **Մզրեսորփ**), **Տապե** կամ **Տաբի**: Տեղանվանագիտության տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում գյուղի հողակտորների (բրբռ. «գդորնի») և արոտավայրերի անվանումները՝ **Ալըջեք**, **Ախոյի արտ**, **Բաբըջանցից արտեր**, **Բաժեք**, **Գազգազկընին**, **Գեղաղբյուր** (գյուղի կենտրոնական աղբյուրը), **Գյուլու արտեր**, **Գուռճոքնին**, **Խրժկրկնին**, **Մերգեմոզան**, **Շեղտանցիք**, **Ջուլրկնին**, **Սարու արտեր**, **Վարի** և **Վերի ճամ** (քրդ. ĉâm–«գետ»), **Տապեի արտեր**, **Քընֆանու արտեր** (համանուն աղբյուրի շրջանում): **Շենիկը** Սասունի բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. շուրջ 100 տուն բնակչով (ավելի քան 900 անձ):
6	Սեմալ	Սբ Գևորգ	1	**Սեմալում** և շրջակայքում պահպանվել էին մի շարք սրբավայրերի մնացորդներ: Գյուղից մի փոքր հս գտնվում էին **Սբ Հռիփսիմե** (**Սբ Հռիփսիմյանց**) եկեղեցու ավերակները: **Սեմալից** շուրջ 3.2 կմ հս–արևմուտք՝ **Ծիծառնուձոր** (բրբռ.՝ **Ջիզառնու գյալի**) գետակի ափին գտնվում էին պատմական **Ծիծառնո վանքի** ավերակները և մեկ տասնյակ խաչքարեր, որոնք հայտնի էին «**Ներքին Ջիզառնու խաչեր**» անունով (ուխտատեղի էր): Ոչ շատ հեռու՝ **Կուռտիկ** լեռան ստորոտին ընկած երբեմնի բնակավայրի (ժողովուրդն այն կոչում էր «քաղաք») տեղում, գտնվում էր «**Դընքանե զիվկրան**» (քրդ.՝ «ոսկերիչների խանութ») կոչվող վայրը, ուր արհեստանոցներ են եղել (ոսկերիչների շարքեր, դարբնոցներ): **Սեմալը** նույնացվում է պատմական **Սերեմավայրի** հետ: 1904 թ. հերոսամարտի ճնշումից հետո գյուղի վերապրած բնակիչները տեղափոխվել են **Սեմալի գետի** ափին (**Բաթմանաջրի** ակունքները) ընկած **Դաշտոքի** հովիտ՝ հիմնելով նոր բնակավայր: **Հին Սեմալում**, որ տեղացիները կոչում էին **Ֆատագուրմ,** շարունակել է ապրել 3 գերդաստան (որոնցից մեկը հայտնի **Քոթանենց տունն** էր): Հին գյուղը ժամանակին կազմված է եղել **Վերին**, **Միջին** և **Ներքին** թաղերից: Նոր գյուղը ևս ուներ մի քանի թաղ՝ **Վերին** և **Ներքին Դաշտոք**, **Բլուրիկ** (բրբռ. **Պլուրիկ**) և **Բշարատկան կամ Բշարեթկան**: Ընդ որում, վերջինս գտնվում էր հարևան **Գեղաշենից** (**Շատախի գավառակ**) գրավված հողակտորում, և տեղի **Պոլկնու տուն** գերդաստանի բնակիչները **Սեմալի** հասարակության անդամ չեն դիտվել: **Սեմալը** Սասունի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. 1300–1400 հայ բնակիչներով:

2. Շատախ և Ծովասար

Այս 2 գավառակներն ընկած էին «**Առաջավոր գյուղերից**» հարավ: Առաջինը համապատասխանում է հնագույն «**Արջուց կողմն**» գավառակին, որը, ժողովրդական ավանդազրույցի համաձայն, տեղի **Գևորգ Շատախոս** իշխանի անունով վերանվանվեց **Շատախ:** Շատախի գյուղերը՝ **Գեղաշենը**, **Գերմավը** (**Ջերմաջուր**), **Իրիցանքը** (**Երիցանք**), **Շուշնամերկը**, **Տափիկը**, **Քոփը** և **Ջայնըկցիքը** (վերջինս **Քոփի** «մեզրե»–ագարակն էր), գրավում էին **Սիմսար** (**Սևսար**, նաև **Խաչառաջ**)

լեռների հարավային ստորոտներից բխող **Շատախ** կամ **Սուսանաջուր** գետակի հովիտը՝ **Սուսանքի ձորը**: Կենտրոնը **Տափիկ** կամ **Տափրք** գյուղն էր, որը, ի դեպ, 20-րդ դ. սկզբին պաշտոնական վարչական բաժանմամբ **մտնում էր Մշո** գավառի կազմի մեջ և այսպես կոչված **Գյալեգուզան** գյուղախմբի (թրք. nahiye) կենտրոնն էր: Նշված վարչամիավորի մեջ էր ընդգրկված նաև «**Առաջավոր գյուղերի**» գավառակը:

Ծովասարը տարածվում էր **Շատախից** հարավ՝ ընդգրկելով համանուն սրբացված լեռնագագաթի (2721 մ, քրդ. Zupsâr < հյր. «**Սուրբ սար**») արևմտյան լանջերից բխող **Տալվորիկիջրի Աղբի** (**Աղբու ջուր**), **Գյալառաշ** (**Սևձոր**) և **Հեթինք** (**Հիթսից ջուր**) վտակների ձորահովիտները: Գավառակի հիմնական գյուղերը՝ **Աղբին** և **Հեթինքը**, կառուցվածքով հիշեցնում էին **Գյալեգուզանը** կամ «**Առաջավոր գյուղերի**» բնակավայրերը, քանի որ վերջիններիս նման կազմված էին «թաղ»-գյուղակներից: **Ծովասարի** կենտրոնական բնակավայրն էր **Աղբին** (տես ստորև):

1914 թ. վերոհիշյալ գավառակներն ունեին ավելի քան 5000 հայ բնակիչ (550-580 տուն): Բոլոր գյուղերը զուտ հայաբնակ էին՝ բացառությամբ **Իրիցանք** և **Տափիկ** գյուղերի, ուր բնակվում էին փոքրաթիվ քրդեր (շուրջ 200 մարդ):

Շատախի և **Ծովասարի** հայերը նույնպես մեծ ավանդ են ունեցել 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկ. հայ ազատագրական շարժման մեջ: 1915 թ. Սասունի հերոսամարտի ընթացքում քաջարի դիմադրության շնորհիվ տեղի հայերի զգալի մասին հաջողվեց խուսափել լիակատար բնաջնջումից և հետագայում ապաստանել Արևելյան Հայաստանում: Նրանց սերունդներն այժմ ապրում են ՀՀ-ի **Արագածոտնի** մարզի **Ագարակ**, **Վերին** և **Ներքին Բազմաբերդ**, **Դիան**, **Ջովասար** ու **Կաքավաձոր** գյուղերում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Աղբի (Աղբիկ, Աղպիգ)	Սբ Թորոս	1	**Աղբին** կազմված էր **Վերին** և **Ներքին** թաղերից, որոնք իրենց հերթին բաժանվում էին ավելի մանր «թաղիկների»: Դրանք էին՝ **Ջիվրոաշ** կամ **Սևարտ**, **Իսախ** կամ **Իսախու հովիտ** (**Շառո տներ**), **Խաչնար** կամ **Խաժնարտ** (կոչվել է նաև **Խաչգրրտ, Հովհաննեսի տներ**), **Շրլֆեք** (**Շրրֆո տներ**), **Շեկար** կամ **Թորիկ** (**Թորկրցի,** իմա՝ **Թորիկյան-Թորոսյաններ,** տոհմի մի մասը բնակվում էր **Ջիվրոաշում**), **Փարսեղցի** (իմա՝ **Բարսեղյաններ**), **Ֆերոկներ: Ներքին Աղբիում** գտնվում էր **Խումարավանքը** (քրդ. Dera Xima կամ Deyri), որն այդպես է կոչվել **Գյալառաշ** և **Աղբի** գյուղի հիմնադիր, **Խիանքի Հեղին** գյուղացի (որոշ տվյալներով՝ խութեցի) մի կնոջ՝ **Խումարի** պատվին: Մեկ այլ ավանդության համաձայն **Աղբիի Մեթուկի տներ** տոհմի հիմնադիրը գյուղում հաստատվել էր **Կիլիկիայի Զեյթունից**: Գյուղից հս՝ **Հողսորորիկ** վայրում, ոսկու հանք կար: **Աղբին** Սասունի բազմամարդ բնակավայրերից էր և իր «թաղ»-գյուղակների հետ 1914 թ. ուներ 1250 հայ բնակիչ (150 տուն):
2	Գյալառաշ (Կելռաշ)	եկեղեցի		**Գյալառաշը, Թխիկը** և **Խատանն Աղբիի** «թաղ»-գյուղակներն էին: Այս գյուղակներում եղել են **Սբ Մարիամ** և **Սբ Սարգիս** եկեղեցիներ, սակայն անորոշ է, թե նշված սրբավայրերը որ բնակավայրում են գտնվել:
3	Գեղաշեն	Սբ Ստեփաննոս	1	**Գեղաշենի** դպրոց էին հաճախում նաև հարևան **Շուշնամերկի** երեխաները:

4	Գերմավ (Ջերմաջուր)	Սբ Թուխմանուկ		**Գերմավից** շուրջ կես կմ արլ երևում էին **Տապե** (քրդ. Çîlhâvŕuni–«Քառասուն ձվաձեղ») գյուղի ավերակները: Գյուղի անունը (քրդ. gârmav կամ avagârm–«տաք ջուր» կամ «ջերմուկ») առաջացել է մոտակա հանքային աղբյուրից:
5	Թխիկ	եկեղեցի		**Թխիկում** հաստատվել էր **Քոմանցի տոհմը,** որի ներկայացուցիչները բնակվում էին նաև բուն **Աղբիում**:
6	Խատան			
7	Իրիցանք (Երիցանք)	Սբ Աստվածածին		Եկեղեցին նախկինում վանք է եղել՝ կառուցված ինքնատիպ ճարտարապետությամբ: Սիրված ուխտատեղի էր: Ավանդության համաձայն, գյուղի անվան առաջացումը կապվում է **Սասունցի Դավթի** «իրիցանք» [իմա՝ «այրվեցինք (բարկ արևից»)] արտահայտությունից:
8	Հեթինք (Հիտինք)	Սբ Մինաս		**Հեթինքը** կազմված էր **Վերին** և **Ներքին** թաղերից (բնակչության մեծ մասը կենտրոնացած էր վերջինում): Գյուղն ուներ էլ ավելի փոքր «թաղ»–գյուղակներ և «մեզրեներ»՝ **Ավարակս**, **Գյալառաշ**, **Գոգբվտիք** (**Կոկվրտիք**), **Թխիկ** (**Ավեր Թխիկ**), **Լեռնգոմեր**, **Կանաչ գրդոր** (իմա՝ «հողակտոր»), **Հաքըրվունք, Չորուտ: Հեթինքի** «թաղերից» էր նաև **Նոնան** (տես ստորև): Ինքնատիպ և ուշագրավ են **Հեթինքի** շրջակա ամառանոցների («յայլաների») անունները՝ **Արբնի**, **Բրագովշաշ**, **Գյառագունի**, **Գրանեզ**, **Խորկուփ** (բրբռ. «խոր գուբ կամ փոս»), **Կիշկանք**, **Ձոխիր**, **Շոռնանք**, **Սար** կամ **Ծովասար** (**Հեթինքն** ընկած էր վերջինիս հս–արևմտյան լանջերից սկզբնավորվող ձորահովտում), **Օձով գոհար**, **Օղընիր** ևն: **Հեթինքը** Սասունի բազմամարդ գյուղերից էր և 1914 թ. իր գյուղակներով ուներ շուրջ 1000 բնակիչ:
9	Նոնա			**Նոնան Հեթինքի** գյուղակն էր և իր հերթին նույնպես կազմված էր **Վերին** ու **Ներքին** «թաղերից»:
10	Շուշնամերկ	Սբ Մինաս		Գյուղի հս–արևելյան կողմում՝ **Շատախ** կամ **Սուսանաջուր** գետակի **Անթանիուջուր** օժանդակի ափին գտնվում էր **Սբ Աթանագինեի** (**Անթանիա**) հինավուրց վանքը: Վերջինս հիմնադրվել էր Կապադովկիայից (Գամիրք) **Սուրբ Գրիգոր Լուսավորչի** կողմից այստեղ փոխադրված **Սուրբ Աթանագինեի** (**Անթանիա**) մասունքներն ամփոփող վկայարանի տեղում: Պատմիչ **Ագաթանգեղոսի** տվյալներով՝ այստեղ էլ տեղի է ունեցել Հայքի մկրտության առաջին խոշոր արարողությունը (19 «բիւր», իմա՝ 190000 մարդ): Վանքը հայտնի էր մոտակա բուժիչ ջերմուկի աղբյուրով: Մենաստանը գործել է մինչև 19–րդ դ. 70–ական թթ., երբ ավերվել է քրդերի կողմից: Կարևոր ուխտատեղի էր:
11	Տափիկ (Տափրք)	եկեղեցի (ավերակ)		**Տափրկից** հարավ՝ **Ծովասարի** հյուսիսային լանջերին գտնվում էր **Սուսանց** (**Սուսնաց**, **Ջոզկանց**) ավերակ բերդը: Փաստերը թույլ են տալիս ենթադրել, որ այն կառուցված էր կիկլոպյան ամրոցի հիմքի վրա: Ժողովրդի մեջ շրջանառվող ավանդության համաձայն՝ բերդի մոտ գտնվում էր **Սուսանք** «քաղաքը»: Ավելի բարձրադիր մասում պահպանվել էին **Սուսնաց** (**Սուսանց**) կամ **Ջոզկանց** (**Ջոզկնաց**) վանքի ավերակները:

				Այն հայտնի էր նաև **Բարձր Սբ Աստ–վածածին** (քրդ. Dera Soradâri – «Կարմրադուռ վանք») անունով, որը, ըստ տեղացի հայերի շրջանում պահպանված ավանդապատում զրույցի, կառուցել էր տաղանդավոր «մեկ–թևանի» լեգենդար վարպետ **Կուռտը** կամ **Գերթոն՝ Բաթմանաջրի** վրա գտնվող «**Գերթոյի կամրջի**» ճարտարապետը: Այլ պատումի համաձայն՝ **Սուսնաց** (**Զոզկանց**) վանքը կառուցվել է հայ «թագավորի» կողմից: **Ծովասարի** հյուսիսային լանջերին գոյություն ուներ **Կուլեդի** անունով ևս մեկ ավերակ բերդ:
12	Քոփ և Զայնըկցիք (Զայնրքնին)	Սբ Կարապետ		**Քոփի** մոտ՝ **Շատախ** գետի վրա, պահպան–վել էին քարաշեն կամրջի մնացորդներ:

3. Տալվորիկ (Քարակ)

Սասունի գրեթե կենտրոնում՝ **Տալվորիկիջրի** աջափնյա խիստ դժվարա–մատչելի ձորահովիտներում, տարածվում էր Սասունի «սիրտը»՝ **Տալվորիկը** (**Քա–րակ**): Գավառակը սահմանակից էր հյուսիսից՝ **Սխտորքար** լեռներով՝ **Իշխանձորին** և **Ընկուզաձորին** (**Գյալեգուզան**), արևելքից՝ **Տալվորիկիջրի** կիրճով՝ **Գավառին**, հարավ–արևելքից՝ նույն գետի ձախափնյակում ձգվող **Զանդուսի ձորով՝ Փսան–քին**, հարավ–արևմուտքից՝ **Սպիտակ սարով՝ Խիանքին**: Տալվորիկի կենտրոնն Էգուտուն ավաններ էր, որից էլ, ըստ ավանդության, առաջացել էին մյուս գյուղերը (հաճախ դրանք համարվում էին **Էգուտուն**–«**Բուն**» **Տալվորիկի** արվարձանները կամ «թաղերը»): Ջուտ հայաբնակ Տալվորիկը մինչև 20–րդ դ. սկիզբը գրեթե ինքնիշխան էր: Պահպանված ավանդազրույցների համաձայն՝ տեղի հայ իշխանները սերում էին զեյթունցի **Ծուռ Ղազարի** (կամ դարձյալ զեյթունցի **Սուքիասի**) տոհմից: Որպես կանոն նրանք տասնամյակներով հարկ չեն մուծել թրքական իշխանություններին և շրջակա քուրդ ցեղապետերին: Որոշ տվյալներով՝ Տալվորիկի կռվող ուժը հասնում էր 500 մարտիկի: Միևնույն ժամանակ տալվորիկցիները հմուտ դարբիններ և զինագործներ էին, իրենք էին պատրաստում իրենց զենքերը, ինչի համար հումք էին ծառայում շրջակա երկաթի հանքերը: Գավառակի բնակչությունն ամենագոր–ծուն մասնակցությունն է ունեցել Սասունի 1894 և 1904 թթ. հերոսամարտերին: Թրքական բանակը կարողացել է միայն ծանր կորուստներով ներխուժել Տալվորիկ և վայրագաբար ավերել վերջինիս բնակավայրերը, եկեղեցիներն ու դպրոցները: Դրա հետևանքով Տալվորիկի հայ բնակչության թիվը, որը 1890–ական թթ. սկզբին կազմում էր շուրջ 5000 մարդ, 1914 թ. հասնում էր 3500–ի: Տալվորիկը դիմադրության կարևոր կենտրոններից էր նաև 1915 թ. Սասունի հերոսամարտի ժամանակ: Վերապ–րած հայերն իրենց մյուս հայրենակիցների հետ 1916 թ. տեղափոխվել են Մուշ, որ–տեղից՝ Արևելյան Հայաստան: Տալվորիկցիների սերունդներն այժմ բնակվում են **ՀՀ**–ի **Արագածոտնի** մարզի **Աշնակ**, **Ավան**, **Իրինդ**, **Լեռնարոտ**, **Շղարշիկ**, **Պռոշյան**, **Սասունիկ** և այլ գյուղերում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Արտխոնք (Հարթխո)	Սբ Մարիամ		Գյուղում և շրջակայքում կային մեծ թվով սրբավայրեր՝ մի քանի ավերակ եկեղեցի, **Սբ Թալըլուկ**, **Մարտարուս**, **Սբ Խազ–օղլան** ուխտավայրերը: Արտ–խոնքից հս՝ **Կտրածքար** լեռնագագաթի ստորոտին, ընկած էր **Շլեմիր** քաղաքա–տեղին, որը ենթադրաբար նույնացվում է պատմական **Քղիմար** (սեպագրային՝ **Կուլիմարա**) քաղաքի հետ:
2	Դվալենք (Տվալինք)	եկեղեցի		
3	Եղգարդ (Էղկարթ)	Սբ Կույս Մարիամ (ավերակ)		

4	Էգուտուն(Այգուտուն, Բուն Տալվորիկ)	Սբ Սարգիս	1	**Էգուտունը** բաղկացած էր **Էրած** (**Այրած**) և **Կոտրած** թաղերից: **Մար Սմոնկա** վայրում ժամանակին վանք է եղել: Նրա «թաղ»-գյուղակներն էին դիտվում **Կտանքը, Մերգերը** և **Վերինգեղը**: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում **Էգուտուն** ավանի մանրատեղանունները (ագարակ-«մեզրե», հանդամաս, աղբյուր ևն). **Աղբրդուռ** (գլխավոր աղբյուրի մոտ), **Դանդամուր**, **Դաուդիկ**, **Մրձուց**, **Պաղաղբյուր**, **Պողնուտ**, **Վերսկուտ**: **Տալվորիկի** գլխավոր բնակավայրը հռչակված էր խաղողի այգիներով և գինեգործության կենտրոն էր:
5	Խլիովիտ			
6	Կտանք	Սբ Կարապետ		**Կտանաց Սբ Կարապետը** հայտնի ուխտատեղի էր:
7	Հագմանք (Հըքմանք)	Սբ Կարապետ		
8	Հավկունք (Հավկոնք)	եկեղեցի (ավերակ)		Հոլոյենց իշխանական տոհմի նախնական կենտրոնն էր:
9	Հարթք		1	**Հարթքի** մոտ՝ **Տալվորիկի ջրի** անդնդախոր ժեռուտ քարափներին, ցցված էր տավորիկցիների կարևոր մարտական դիրքերից մեկը՝ «**Արծվի բույն**» ժայռը: Գետի հանդիպակաց ափին գտնվող **Ներքին Հարթք** թաղամասի վրա իշխում էր «**Զկնգոլ**» քարանձավը, որի միջից հորդացող աղբյուրի ջուրը հոսում և թափվում էր **Տալվորիկիջուր:** «**Զկնգոլում**» վտանգի պահին ապաստանում էին **Հարթքի** ծերերը, կանայք և երեխաները:
10	Հլողինք (Հլորինք)	Սբ Մամաս	1	Հնում այստեղ եղել է բերդ, որը 7-րդ դ. բյուզանդացի պատմիչ **Գևորգ Կիպրացին** հիշում է աղավաղված **Ֆլորիանոն** (հունարեն՝ Φλωριανόν) ձևով:
11	Հոսնուտ			
12	Զորեր (Ծորիր)			
13	Մեզրե (Սզրեն)			
14	Մերգեր (Սարգեր)			
15	Վերինգեղ			
16	Սպաղանք (Սըբղանք, Ասպականք)	Սբ Մարուքե (Սբ Մարութա ձգնավոր, Մար-Ապպա)		Նախկինում եղել է վանք: **Սպղանքից** արևելք՝ **Տալվորիկիջրի** վրա, կառուցված էր գավառակի երկրորդ նշանավոր՝ «**Մազի կամուրջը**», որը **Տալվորիկը** կապում էր **Գավառի** (**Բուն Սասուն**) հետ: Աշխարհացույցյան **Տուրուբերանի Ասպակունյաց ձոր** գավառի կենտրոնն էր:
17	Փուրխ (Փորխ)	Սբ Ստեփաննոս (վանք)	1	**Փուրխ** և **Խլիովիտ** գյուղերի միջև **Տալվորիկի ջրի** ժեռուտ ափերն իրար էր կապում նշանավոր «**Սատանի կամուրջը**», որն այդպես էր կոչվում իր դժվարամատչելի և սարսափազդու դիրքի համար: Բանն այն է, որ կամրջի համար հենակ կամ խել ծառայող ժայռը 10 մ-ով ցածր էր աջից: 1904 թվականից հետո տալվորիկցի նշանավոր վարպետներ **Հազոյի Դավոն** (**Դավիթ**) և **Ուստա Գասպարը** գետի ձախափնյա մասում քարե պատ են շարել և հավասարեցրել աջին: «**Սատանի կամրջով**» **Տալվորիկը** հարավից միանում էր արտաքին աշխարհին: Գյուղի հյուսիսում՝ **Հոսնուտի** ճանապարհին՝ ուղիղ գետի ափին, գտնվում էր ամեհի **Ֆրֆլոռքարը**, որն այդպես է կոչվել հաճախակի քամինեռից առաջացող ձայներից: Այս ժայռը ևս տալվորիկցի ռազմիկների կարևոր պաշտպանական դիրքերից էր:

18	Քորախու	եկեղեցի (ավերակ)		Գտնվում էր **Տալվորիկի ջուր** գետի ձախ ափին և համարվում **Արտխոնքի** «թաղ»-ը: Մոտակա **Բորնջիկ** երկ-գագաթանի լեռան վրա գտնվում էր **Բորնջիկի** կիսավեր վանքը, որը հայտնի ուխտատեղի էր: Ի դեպ, սրբավայր էր նաև լեռը՝ իր նշանակությամբ հավասար հռչակավոր, դարձյալ երկկատար **Մարաթուկին**:

4. Իշխանձոր

Սասունի առավել անառիկ շրջաններից էր **Իշխանձորի** գավառակը (բրբռ. **Իշխնձոր**), որը գրավում էր կենտրոնական Սասունի արևմտյան հատվածը: Գավառակի բնակավայրերը սփռված էին **Տալվորիկիջրի** վերին հոսանքի **Իշխանձոր** (**Սևիթու ջուր**) և **Մեղրաձոր** (քրդ. Gâliyehîngîv) օժանդակների ձորահովիտներում, որոնք միախառնվելով՝ կազմում են **Բալորոնքի** (քրդ. Balurka) վտակը, որն էլ **Ղայսեր** կամ **Խայսեր** գյուղից հարավ թափվում էր մայր գետ: Պաշտոնական վարչական բաժանմամբ թեև **Իշխանձորն** ընդգրկված էր **Խուլփի** գավառի (թրք. kaza) **Խիանքի** գյուղախմբի մեջ, բայց իրականում կապված էր հարևան **Տալվորիկի** հետ (ի դեպ, պատահական չէ, որ որոշ աղբյուրներում հիշվում է վերջինիս կազմում): Սահմանակից էր արևմուտքից և հյուսիսից **Կողբի** կամ **Խուլփի** լեռներով՝ **Խուլփին**, հյուսիս-արևելքից սասունցիների պաշտելի **Անդոկ** (2812 մ) և **Կեփին** (**Կապան**) կամ **Սուրբ Հակոբ** (2734 մ) լեռնազանգվածներով՝ **Ընկուզաձոր-Գյալեգուզանի** գյուղախմբին, հարավ-արևելքից՝ **Սխտորքար** լեռնապարով՝ **Տալվորիկին**, իսկ հարավից՝ **Խիանքին**: Կենտրոնը համանուն ավանն էր, որը կազմված էր մի քանի «թաղ»-գյուղակներից (տե՛ս ստորև): **Իշխանձորի գավառակը** կառավարվում էր հայ իշխանների կողմից և մինչև 20-րդ դ. սկիզբն օժտված էր լայն ինքնավարությամբ: Տեղի հայերն ամենագործուն մասնակցությունն են ունեցել Սասունի 1894 և 1904 թթ. հերոսամարտերին: Թուրքական բանակի և քրդական համիդիեների վայրագությունները զգալի կորուստներ պատճառեցին նաև տեղի բնակչությանը: Խիստ տուժեցին մասնավորապես **Սևիթ** և **Կռանոս** գյուղերը, ուր 1894 թ. ապրում էր 65 տուն բնակիչ, մինչդեռ 1914 թ. մնացել էր միայն 11-ը: Նկատելիորեն նվազեց նաև գավառակի մյուս գյուղերի բնակչությունը: Դրանով հանդերձ **Իշխանձորը** Մեծ եղեռնի նախօրեին զուտ հայաբնակ էր՝ ավելի քան 2700 բնակչությամբ (300-310 տուն): Գավառակի բնակիչները մասնակցեցին նաև Սասունի 1915 թ. հերոսամարտին: Չնայած նոր, սարսափելի կորուստներին, տեղի հայերի մի մասին հաջողվեց վերապրել և 1916 թ. անցնել ռուսների կողմից գրավված **Մուշ**, որտեղից՝ տեղափոխվել Արևելյան Հայաստան: Այժմ **Իշխանձորի** գավառակի տարբեր գյուղերից դուրս եկած բնակիչների սերունդները գերազանցապես բնակվում են **ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի** շրջանի **Ավան** գյուղում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Արտկունք (Արտկոնք)	Սբ Հակոբ	1	Եկեղեցում պահվել են ձեռագիր մատյաններ: Կազմված էր մի շարք «թաղ»-գյուղակներից, որոնք սփռված էին **Իշխանձոր** (**Սևիթու ջուր**) գետակի միջին ավազանի ձորահովիտներում: Այդ գյուղակներն էին. **Դաղբրներ** (բրբռ. **Դաղբրրնիր**), **Ընկուզեք**, **Ծմակձոր**, **Կուպ** (< **Գուբ**, «փոս»), **Կպովիտ** (< **Գուբովիտ**), **Հեղինկպագ**, **Ձորեր**, **Միջին թաղ** (**Բուն Արտկունք**), **Միրանգեր** (բրբռ. **Միրանգին**): **Արտկունքի** գյուղակներից էր նաև **Խաչուկները**: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում **Արտկունքի**

				«մեզրե»–ագարակների և հողակտոր–ների անվանումները՝ **Ազդարնիկ**, **Ամուց ձոր** (քրդ. Âmoka), **Առհնձիկ, Ասրոդա–լեն, Դարմո կամ Դարմոյի գոմ Ջար–դուզ, Ծոտիկ, Կաժիկուպ** (բրբռ. «վեռ–նափոս»), **Կոշիկ, Կարթակ, Կոմա, Գուբեր** (բրբռ.**Կուպեր**), **Հորասկ**, **Պա–բադոզ**, **Փալավուզիկ, Սմնադ** ևն: Այս տեղավայրերը հիմնականում ընկած էին **Արտկունքից** արլ՝ **Տալվորիկի** սահմա–նագլխին գտնվող **Ամուց ձոր** գետակի հովտում:
2	Ընկուզնակ (Ընկուզտինակ)	Սբ Մամաս		Գյուղից շուրջ 2 կմ հարավ՝ **Իշխանձոր** (**Սևիթու ջուր**) գետակի ափին, անտառոտ վայրում գտնվում էր **Ապաղթու** կամ **Աբեղթու** (**Ապաղաթ**) ավերակ վանքը՝ **Սբ Հակոբ** և **Սբ Ստեփաննոս** մատուռներով («լուստուն»), որոնք ուխտատեղիներ էին: Շրջակայքում ևս հանդիպում էին բազ–մաթիվ՝ սրբազան 7 թվով, մատուռների ավերակներ և բնակատեղի (ավանդա–բար՝ «քաղաք»): Վերոհիշյալ սրբավայրի անունով **Ընկուզնակի** շրջանը 15–րդ դ. կոչվել է «**Աբեղթու գաւառ**»: Հայտնի սր–բատեղիներ էին նաև գյուղի շրջակայքում բխող **Թլնա** և **Մեծակ** աղբյուրները:
3	Իշխանձոր (Իշխնձոր)	Սբ Աստվածածին, Սբ Մամաս	1	**Իշխանձորը** բաղկացած էր համանուն գետակի վերին ավազա նի ձորահո–վիտներում ցրված հետևյալ «թաղ»–գյուղակներից՝ **Բունգեղ** կամ **Միջին թաղ, Գալինք** կամ **Կալիք, Խրվարդ, Նորհան, Խզրկու արտեր** (վերջինիս մասին տես ստորև): Գյուղում կային 4 սրբավայր–«լուստուններ»՝ **Սբ Թլրլա**, **Սբ Թուխ Մանուկ**, **Խոռուս Մամաս** (**Խորուս Մամաս**) և **Սբ Մամաս,** որոնք ավանդաբար կոչվել են **Իշխանձորում** ապաստանած 4 քրիստոնյա միանձնուհի քույրերի անուններով (հիշեցնում է **Սբ Հռիփսիմյանց** կույսերի ավանդազրույցը): Ավելի ուշ վերջիններս տեղափոխվել են **Անդոկ** լեռան **Սբ Անտոն ճգնավորի** ճգնարան: **Սբ Մամասի** հարևանությամբ՝ «**Օսկի թրի տեղ**» վայրում, կար մեկ այլ ավերակ եկեղեցի: Ըստ ժողովրդի շրջա–նում տարածված զրույցների, ավերակի դիմաց գտնվող ժայռի տակ թաղված էր «ոսկե թուր», ինչը, կարծում ենք, որոշա–կի աղերսներ ունի **Սասունցի Դավթի** առասպելական «**Թուր Կենձակիի**» հետ: **Իշխանձորից** շուրջ 6 կմ հս բարձրացող **Կեփին** (**Կապան**) լեռնագագաթի լանջին գտնվում էր **Սբ Հակոբ** վանքը: Վեր–ջինիս անունով սարը կոչվում էր նաև **Սբ Հակոբ**: **Իշխանձորը** Սասունի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. ավելի քան 1300 բնակչությամբ:
4	Խզրկու արտեր			Գյուղը համարվել է **Իշխանձորի** «թա–ղերից» մեկը:

5	Հեղին	Սբ Աստվածածին		Գյուղի մոտակայքում գտնվում էր Սասունի առավել նշանավոր վանքերից մեկը՝ **Սբ Եղիա Մարգարեն**, որը միաժամանակ սիրված ուխտատեղի էր: 7 տարին մեկ անգամ՝ **Խաչվերացի** (**Սբ Խաչ**) տոնի օրն այստեղ էին ժամանում բազմաթիվ ուխտավորներ ոչ միայն հարևան գյուղերից, այլև Սասունի մյուս գավառակներից: Հարևան սուրբ անտառակից կտրված և կանաչ տերևներով պատված ճյուղերով ուխտավորները ծածկում էին («թամբում էին») վանքի գմբեթն այն պատճառաբանությամբ, որ Սբ Եղիան համբարձել է երկինք, հետևաբար՝ չի թաղվել և հող չի ընդունում: Ուշագրավ է, որ ուխտագնացության ընթացքում **Սբ Եղիա** մենաստան արգելված էր կանանց մուտքը:
6	Սևիթ	Սբ Մինաս		Գյուղի մոտ գտնվում էր **Սբ Աստվածածին** (**Սևիթի** կամ **Սևթաս Սբ Մամաս**) վանքը, որը հայտնի ուխտատեղի էր: **Սևիթի** «թաղ»-գյուղակն էր **Կոռանոսը** (**Կոռնոս**):

5. Գավառ (Կավառ) կամ Բուն Սասուն

Սասունի կենտրոնական գավառակն էր, որը տարածվում էր **Սասնաջրի** ակունքների շրջանում, ինչպես նաև վերջինիս **Ծովասարի** (2721 մ) հարավային լանջերից սկիզբ առնող **Կապածգետ** (**Կապաս**, քրդ. Qâvâstîk) և **Կուսգետ** (քրդ. Bozîkan) աջակողմյան վտակների ձորահովիտներում, որոնք կազմում էին **Հռեցվարի** բարձրավանդակի հյուսիսային հատվածը: Սահմանակից էր հյուսիսից **Ծովասարի** լեռնազանգվածով՝ համանուն գավառակին, մասամբ՝ **Խութ-Բռնաշենին**, արևելքից՝ **Սասնաջրի** վերին հունով՝ **Մարաթուկին**, հարավից՝ **Փսանքին**, արևմուտքից՝ **Տալվորիկին**: Կենտրոնը հնագույն **Սասուն** (**Սասնա**) կամ «**Դավթի**» բերդն էր (քրդերը ևս նույն ձևով են կոչել՝ «Berde Davit»): Վերջինս կառուցված էր վերոհիշյալ 2 վտակների միախառնման դժվարամատչելի վայրում՝ **Քաղքիկ** գյուղի մոտ, որը միջնադարում բերդի արվարձանն է եղել: Պահպանվել էին այս հնագույն բերդաքաղաքի տների և այլ շինությունների ավերակները, սալարկված փողոցների մնացորդները ևն: Ինչպես հայտնի է, «Սասնա ծռեր» դյուցազնավեպում **Սասունի** հիմնադիր են համարվում **Սանասար** և **Բաղդասար** երկվորյակ եղբայրները: Նրանց պատմական իրական նախատիպերը հայրասպան **Շարաշարա** (=Սանասար) և **Ադրամելեք** կամ **Աբամելիք** (=Բաղդասար) եղբայրներն են, որոնք պետական հեղաշրջում կատարելու նպատակով սպանել էին իրենց հայր, Ասորեստանի **Սինախերիբ** (**Սենեքերիմ**) արքային և փրկվելով պատժից՝ ապաստանել էին Հայոց երկրում (Ք. ա. 7-րդ դ. սկ.): Իրականում **Սասունը** (հնագույն ձևը՝ **Սանասունք**, ինչպես արձանագրված է «Աշխարհացոյց»-ում որպես գավառանուն) Հայաստանի հնագույն բնակավայրերից է և չի բացառվում, որ կառուցվել է կիկլոպյան ամրոցի հիմքի վրա: Ուշագրավ է, որ մինչև 1915 թ. տեղի հայերի մոտ պահվում էր բերդի «Հիշատակարանը», որը Եղեռնի ժամանակ **Գենջո** և **Հակոբ Գրիգորյան** եղբայրները թաքցրել էին **Կապածգետի** ափին գտնվող «**Մուրադի քար**» քարանձավում (հետագա ճակատագիրն անհայտ է): Բերդաքաղաքը **Սանասնյայք** կամ **Սասունցի** նախարարական տոհմի իշխանանիստ կենտրոնն էր, որի ներկայացուցիչները **Սանասարին** համարում էին իրենց նախահայր: Նրանք այստեղ կառավարել են մինչև 17-րդ դ., երբ հարևան շրջաններից («**Առաջավոր գյուղեր**», **Ընկուզաձոր**, տե՛ս վերը) մուտք գործած **բոզկցի** (**բոզբկի**) քրդական ցեղը տիրացել էր **Սասնա բերդին** և հաստատվել **Գավառի** տարածքում: Սրա հետևանքով նրանք ժամանակի ընթացքում սկսեցին զգալի թիվ

կազմել մասնավորապես **Կապածգետի** ձորահովտում՝ **Գավառի** հյուսիսարևմտյան հատվածում: Հատկանշական է, որ **Գավառի** բնակավայրերի մի մասը դիտարկվում էր որպես **Սասուն** բերդաքաղաքի արվարձաններ (**Անձղանք**, **Բոզկանք**, **Դարբնկանք**, **Ծառկանք** կամ **Սարեկան**, **Ճախրկանք** կամ **Ճախրակ**, **Մաղենք**, **Մթրբանք**): Ինչպես ցույց են տալիս որոշ գյուղանուններ, այստեղ բնակվել են համապատասխան մասնագիտության տեր արհեստավորները: Ի դեպ, **Սասուն** բերդաքաղաքի բնակիչների մի մասը եղել են բոշաներ, ինչպես ցույց են տալիս **Մթրբանք** (**Մտրբրան**) և **Մաղենք** (իմա՝ «մաղագործների գյուղ») անվանումները:

1915 թ. Գավառի 1000–1200 հայ բնակչության մի զգալի մասը կարողացել է փրկվել և հետագայում տեղափոխվել Արևելյան Հայաստան: Նրանց սերունդները հաստատվել են **ՀՀ Արագածոտնի** մարզի **Դավթաշեն**, **Լեռնարոտ**, **Ներքին** և **Վերին Սասնաշեն** գյուղերում: Ի դեպ, փոքրաթիվ հայեր մինչև 1960-ական թթ. դեռ բնակվում էին Գավառի **Անձղանք**, **Քաղքիկ** և այլ գյուղերում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Անձղանք			
2	Արքիկ (Արգիկ)	եկեղեցի (ավերակ)		
3	Բոզկանք (Բոզըկան)	եկեղեցի (ավերակ)		
4	Բրդանք			
5	Դարբնկանք			
6	Խան	եկեղեցի (3, ավերակ)		Գյուղը գտնվում էր **Ծովասարի** արևելյան բարձրադիր ստորոտին: Այստեղ կառուցված էր քարե իջևանատուն («խան»), ուր բնության արհավիրքներից ապաստանում էին ճանապարհորդները:
7	Խոծոծվանք (Խոցոցվանք, Խողց)			Գյուղն այդպես է կոչվել Սասունի նշանավոր **Խոծոծվանք** կամ **Սբ Աստվածածին** (**Սբ Թումա Առաքելո**) բարձրարվեստ ճարտարապետությամբ կառուցված վանքի անունով:
8	Ծառկանք (Սարեկան)			
9	Հարկուռք (Հարկորք)	եկեղեցի (ավերակ)		Մոտակայքում պահպանվել էին **Գոմեր** գյուղի և վերջինիս եկեղեցու ավերակները:
10	Ճախրկանք			Գյուղում էր գտնվում «**Դավթի ջրաղացը**», որի «անմաշ» քարը, ըստ ավանդության տեղադրել է սիրելի դյուցազունը: Այս գյուղից էր «Սասնա ծռերի» ասմունքող **Թամո Դավթյանը**:
11	Մաղենք (Վերին և Ներքին)			
12	Մթրբանք (Մտրբրան)	եկեղեցի (ավերակ)		
13	Քաղքիկ			
14	Քաշքշենք			

6. Փսանք (Փսանաց կամ Բուսանաց գավառ)

Փսանքը (**Փսանաց** կամ **Բուսանաց գավառ**) գտնվում էր Սասունի կենտրոնում՝ զբաղեցնելով **Ծովասարից** սկզբնավորվող գեղատեսիլ **Հռեցվար** լեռնապարի հարավային ծյուղավորումների ձորահովիտները: Ժողովուրդը գավառի անունը բացատրում էր անտառապատ, ճոխ բուսականություն ունեցող տարածքի առկայությամբ: Սահմանակից էր հյուսիսից **Գավառին** (**Բուն Սասուն**), արևելքից՝ **Սասնաջրի** միջին ձորահովտով՝ **Մարաթուկին** և **Հազո-Խաբլջոզին**, հարավից և հարավարևմուտքից՝ **Խիանքին**, հյուսիս-արևմուտքից, **Ջանդուսի ձորով՝ Տալվորիկին:** Կենտրոնը **Գոմոց** կամ **Մատին Առաքելո** վանքն էր՝ Սասունի առավել նշանավոր

ուխտավայր-մենաստաններից մեկը (տես ստորև): **Փսանքի** տարածքը հռչակված էր բազմաթիվ սրբացված լեռներով և քարաժայռերով, երևույթ, որը հատուկ էր ընդհանրապես ողջ Սասնա աշխարհին: Տեղացի հայրենասեր քահանա **Մկրտիչ Մուրադյանի** շնորհիվ պահպանվել են դրանց մեծագույն մասի ուշագրավ անուն-ները՝ **Արծվիքար**, **Դեղինքար**, **Խոսունքար**, **Կիրակմտիքար** (կազմված էր օրվա ժամերը խորհրդանշող 24 քարակարկառներից, «կիրակմուտ» – բրբռ. «շաբաթ»), **Կործովքար**, **Կռնկիքար**, **Հեղթի քար**, **Հիթոցքի քար** («խիթերը» բուժող), **Պոլոզ-քար**, **Մնկթոր**, **Սուրբ Թորոսի քար**, **Սուրբ Հեղինեի քար**, **Փարախքար**, **Փեթակքար** (ավանդության համաձայն՝ այստեղ էին փակված Դավթի Քուռկիկ Ջալալի «հրեղեն» նժույգն ու «անժանգ» Թուր Կեծակին), **Քառորիքար** և այլն: Մեծ եղեռնի նախօրեին ավելի քան 5000 հայերը կազմում էին **Փսանքի** բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Քրդերը բնակվում էին միայն առանձին գյուղակնե-րում կամ հայերի հետ խառն:

Փսանքը հայ ազատագրական շարժման կենտրոններից էր: 1890-ական թթ. սկզբին **Փսանքի Խնձորիկ** և **Միջգեղ** (**Մըշկեղ**) գյուղերի հայերը մի քանի անգամ հետ են մղել թրքական կանոնավոր ուժերի և քրդական հրոսակների հարձա-կումները: Գավառի **Մկթենք** (**Մկթինք**) գյուղում է ծնվել լեգենդար **Գևորգ Չա-վուշը** (**Ղազարյան**, 1870-1907): 1915 թ. գավառը, հատկապես **Գոմոց վանքի** շրջանը («**Յոթը թաղ գավառ**») Սասունի պաշտպանության հարավարևմտյան ուղղության կենտրոնն էր: Մեծաթիվ թշնամական ուժերի դեմ մայիս-հունիս ամիսներին այստեղ ծավալված մարտերը ղեկավարում էին **Միջգեղի** (**Մըշկեղ**) գյուղապետ, իշխան **Շառո Մրտիկյանը** (**Մրտկա Շերրո**), **Գոմոց վանքի** վանահայր **Ստեփան** վարդապետ **Բաղդասարյանը**, **Միջգեղի** տեր **Գասպար** քահանա **Սի-մոնյանը**, **Քելլո Աղջեն**, **Գենջո Մուրադյանը**, **Միծո Միսաքը**, **Դավիթ Երեցյանը** և ուրիշները: Մինչև ատամները զինված թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ **Փսանքի** ինքնապաշտպանական ջոկատները հարկադրված էին մարտերով նա-հանջել **Անդոկ,** ուր հավաքվել էին Սասունի մյուս շրջաններից կենտրոնացած մարտիկները և խաղաղ բնակչությունը: Սակայն զինամթերքի և սննդի խիստ ան-բավարարությունը, որևէ կողմից օգնության հույսի իսպառ բացակայությունը, թշնամական անընդհատ սեղմվող օղակն ի վերջո խեղդեցին նաև տեղի դիմա-դրության վերջին օջախները: Իրենց մյուս հայրենակիցների հետ ահավոր կո-րուստներ կրեցին նաև **Անդոկում** հավաքված փսանցիները: Հարկ է նշել, որ **Փսանքից** հեռանալ չհասցրած հարյուրավոր բնակիչներ (ծերեր, կանայք, երե-խաներ) ապաստանել էին **Տալվորիկի** սահմանագլխին գտնվող **Գոնիկ** հսկա քա-րանձավում: Ցավոք, նրանք գրեթե ամբողջությամբ բնաջնջվեցին ջարդարարների կողմից: Միայն 1916 թ. փետրվարին վերապրածներին հաջողվեց տեղափոխվել ռուսական բանակի կողմից գրավված Մուշ, որտեղից էլ՝ Արևելյան Հայաստան: Ներկայումս **Փսանքի** այլևայլ գյուղերից փրկվածների սերունդներն ապրում են **ՀՀ Արագածոտնի** մարզի **Աշնակ**, **Ներքին Բազմաբերդ** և **Ներքին Սասնաշեն** գյու-ղերում, որոշ ընտանիքներ կան նաև **Սիրիայի Հալեպ** քաղաքում: Հարկ է նշել, որ կոտորածից փրկված փոքրաթիվ հայերի, այնուամենայնիվ, հաջողվեց վերահաս-տատվել ամայացած որոշ գյուղերում (**Գոմք**, **Դալիոր**, **Թաթանք**, **Թարուք**, **Խնձո-րիկ**, **Միջգեղ, Փշուտ, Փսանք** ևն), ուր լիակատար մեկուսացման պայմաններում ապրում էին մինչև 1970-ական թթ.: Հետագայում նրանց մեծագույն մասը ևս ստիպված էր վերջնականապես լքել բնօրրանը՝ տեղափոխվելով Ստամբուլ:

Գոմոց կամ Մատին Սրբո Առաքելո Պետրոսի վանք

Մնկթոր լեռնագագաթից շուրջ 4 կմ հարավ-արևելք գտնվում էր Սասունի առավել նշանավոր վանքերից մեկը՝ **Գոմոց** կամ **Մատին Առաքելո Սրբո Պետրոսի** վանքը: Կոչվում էր նաև **ձկույթ վանք** (ժողովրդի շրջանում՝ «Ոսկեձկույթ»), **Սուրբ**

Աստվածածին կամ **Գոմընծայրո վանք**: Նշանավոր և սիրելի ուխտավայր էր: Ի դեպ, հարգի էր նաև քրդերի շրջանում, որոնք այն կոչում էին Bukê Jânnâtê (քրդ. «Դրախտի հարս», թերևս՝ Աստվածածնի քրդերեն պատվանունը): Մենաստանի անվանումը կապվում է տեղացիների շրջանում լայնորեն տարածված ուշագրավ մի ավանդազրույցի հետ, որի համաձայն՝ **Գոմքի** ոմն «մեղավոր» տանուտեր, ի նշան ապաշխարության, **Հռոմ** քաղաքից Սասուն է տեղափոխել Սուրբ Պետրոս Առաքյալի ճկույթը՝ այն ի պահ տալով մենաստանում: Ուշագրավ է, որ այդ ավանդությունը դեռ 1622 թ. տաղի է վերածել գրիչ **Հակոբ** եպիսկոպոս **Արծկեցին** (գրանցված է ներկայումս **Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց** վանքի ձեռագրատանը պահվող գրչագիր մի Տաղարանում): Վանքը միաժամանակ Փսանքի և **Քաջարենց** («**Քաջիայրենց**») տոհմի պարոնտերության կենտրոնն էր, որի ներկայացուցիչները միջնադարում նույնիսկ ժառանգաբար էին ստանձնում **Սասունի** առաջնորդության աթոռը: **Գոմոց վանքի** թեմը Սասունում և հարևան **Բշերիկում** ժամանակին ունեցել է ավելի քան 100 (որոշ տվյալներով՝ անգամ 200) հարկատու գյուղ: Առաքյալի ճկույթից բացի՝ որպես պաշտելի սրբություն մենաստանի գանձարանում պահվել է նաև **Վահան Մամիկոնյանի** «պողպատե» վահանը: Վանքում կար փոքր ձեռագրատուն՝ շուրջ 3 տասնյակ մատյաններով, վանական դպրոց: Իր հայրենանվեր գործունեությամբ հայտնի է **Գոմոց վանքի** վերջին վանահայր **Ստեփան** վարդապետ **Բաղդասարյանը**, որին հաջողվել էր Մեծ եղեռնի նախօրեին զգալիորեն բարելավել մենաստանի տնտեսական դրությունը՝ վերանորոգելով վանքի ջրատար խողովակաշարը, ինչպես նաև կասեցնել շրջակա քուրդ աղաների նկրտումները վանական կալվածքների և հողատարածքների նկատմամբ: Հայրենասեր հոգևորականն իր անմիջական մասնակցությունը բերեց նաև Սասունի 1915 թ. հերոսամարտին և նահատակվեց հայրենի լեռներում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Բվի	Սբ Աստվածածին (նախկին վանք)		Գյուղում հռչակված էր **Մուրադատուր Սբ Սարգիս** սրբավայր-ուխտատեղին: Հայտնի էր նաև մեկ այլ ուխտատեղի՝ **Շեղդարը: Բվիից** հվ գտնվող **Բողքար** լեռնագագաթը նույնպես համարվում էր սիրելի սրբավայր, քանի որ ժողովրդի պատկերացմամբ նրա վրա «դրոշմված էին» **Սասունցի Դավթի** երկաթե կոշիկների հետքերը:
2	Գոմք	Սբ Քառասուն Մանուկ		Եկեղեցին նշանավոր ուխտատեղի էր: Հայտնի ուխտավայր էր նաև գյուղից շուրջ 3.5 կմ արմ. բարձրացող **Մնկթոր** լեռը: **Գոմքի** շրջանը հայտնի էր «**Յոթը թաղ գավառ**» անունով:
3	Ջանդուս			
4	Թաթանք			
5	Թալիոր (Դալիոր)	եկեղեցի (ավերակ)		Գյուղից հարավ բարձրանում է **Տղամանուկ** լեռնագագաթը (1610 մ), ուր գտնվում էր նույնանուն սրբավայր-ուխտատեղին: Այստեղ ուխտի էին գալիս անպտուղ կանայք:
6	Թաջպատրիկ (Թաշպատրիկ)			
7	Թարուք (Թարոնիկ)	եկեղեցի (2)		Գյուղի մոտակայքում էր **Սբ Հակոբի** (**Սբ Էկոբ**) բուժիչ ջերմուկը, որը միևնույն ժամանակ հայտնի ուխտատեղի էր:
8	Լբսոնք			
9	Խնձորիկ (Խնձորենք)	Սբ Աստվածածին		Ժողովրդի կողմից **Խնձորեց Սբ Աստվածածին** կոչվող եկեղեցին ուխտատեղի էր:
10	Կոռնգես (Կորնկես)	եկեղեցի (ավերակ)		
11	Կրեձոր (Կրիձոր)			**Կրեձորը**, **Ճամը** և **Մեզրեն Գոմոց** վանքի ագարակներն էին:

12	Հոսներ	Սբ Եղիա		Գյուղում և շրջակայքում պահպանվել էին ևս 3 եկեղեցիների ավերակներ:
13	Ճամ (Ճըմ, Ջորնթամփ)			
14	Մարբսթո	Սբ Խաչ		
15	Մեզրե (Միզրեն, Վանից թաղ)	եկեղեցի (ավերակ)		
16	Միջգեղ (Միշկեղ)	Սբ Գևորգ	1	Եկեղեցին հայտնի ուխտատեղի էր: **Միջ-գեղի** արևմուտքում բարձրացող **Սուլթան-աղբյուրի** սարը (1979 մ) նույնպես ուխտա-գնացության վայր էր:
17	Մկթինք	Սբ Աստվածածին	1	
18	Պազեիտուն (Պսետուն)			
19	Պալոյենք (Բալոյենք)	Սբ Վարվառա		Եկեղեցին հայտնի ուխտատեղի էր:
20	Ջամալենք (Ջմալենք)			Գյուղի մատուռը («լուստուն») սրբավայր-ուխտատեղի էր նաև տեղի քրդերի համար (քրդ. ziyarât):
21	Ջոջենք			
22	Ջրթնիկ (Ջրթինք)	Վիշապասպան Սբ Գևորգ		Եկեղեցին հայտնի ուխտատեղի էր, ուր այցելում էին նաև քրդերը:
23	Սիսոռնք			
24	Ցեցնքար (Ցիցքար, Քարերերման)			Գյուղն անվանումը ստացել է մոտակա՝ ու-ղիղ **Սասնաջրի** աջ ափին շուրջ 60 մ բարձ-րացող ժայռաքարից:
25	Փշուտ	եկեղեցի (ավերակ)		
26	Փսանք	եկեղեցի (2, ավերակ)		Կից պահպանվել էին համանուն՝ ժողովրդի կողմից «քաղաք» կոչվող, բնակավայրի ա-վերակները:
27	Քաջառենք (Քաջոինք)	եկեղեցի	1	
28	Քարավանք			Գյուղում գտնվում էր ամայի **Սբ Գևորգ** վանքը (**Քարավանք**):
29	Քիսթաղ (Քիստախ)	Սբ Քրիստափոր		Մի հազվագյուտ հիշատակարանի համա-ձայն՝ 1623 թ. եկեղեցուն ձեռագիր Ավետա-րան է նվիրաբերվել: **Սբ Քրիստափորը** սիրված ուխտատեղի էր:
30	Քսրոնք			
31	Քրդամանք	եկեղեցի (ավերակ)		

Ծնթ.– **Լբսոնք**, **Ջոջենք**, **Սիսոռնք** և **Քսրոնք** բնակավայրերի տեղադրությունը վերջնականապես չենք ճշտել: Չի բացառվում, որ դրանք ավելի բազմամարդ գյուղերի «թաղ»-գյուղակներ են եղել և չեն արտացոլվել ժամանակի քարտեզա-գրական նյութերում:

7. Խութ-Բռնաշեն

Գավառը գտնվում էր Սասունի հյուսիսարևելյան մասում **Սիմսարի** (**Սևսար**, նաև **Խաչառաջ**) հարավային ստորոտներից սկիզբ առնող **Խութաջուր** գետի (այդպես էր կոչվում **Խարզանաջուր-Արզանն** ակունքների և վերին հոսանքի հատվածում) ձորահովտում: Սահմանակից էր հյուսիսից **Սիմսարի** լեռնաշղթայով՝ **Մուշ-Տարոնին**, արևելքից՝ **Վերին Չուխուրին**, հարավից՝ **Մոտկանի** լեռների հյու-սիսային ճյուղերով և **Խարզանաջրի** ձախակողմյան **Գզեխի** (**Երախու**) վտակի հունով՝ **Մոտկանին**, հվ-արևմուտքից՝ **Խութի** լեռներով՝ **Մարաթուկին** և **Գավա-ռին** (**Բուն Սասուն**), իսկ արևմուտքից՝ **Շատախին** (**Սուսանք**): Կենտրոնը **Ռաբաթ**

կամ **Խութա Դատվան** (նաև **Խութաբերդ**) գյուղն էր: Գավառը համապատասխանում է աշխարհացույցյան **Տուրուբերան** աշխարհի **Խոյթ** գավառին: Ավելի ուշ վերջինիս տարածքի հս–արևմտյան հատվածը սկսեց կոչվել **Բռնաշեն** (ժողովրդական ստուգաբանությամբ անունը կապում են գավառի լեգենդար իշխան **Բռնիկի** հետ): **Խութը** գբաղեցնում էր հվ–արևելյան հատվածը: 2 գավառակների մոտավոր սահմանը ձգվում է **Սիմսար** (**Սևսար**)–**Ռաբաթ–Թաղավանք–Աստվածածնի լեռներ** գծով:

Խութ–Բռնաշենի հայերը մինչև ուշ միջնադար պահել էին իրենց թե՛ էթնիկական, թե՛ քաղաքական գերակայությունը: Գավառի տարածքը թեև 15–րդ դ. ընդգրկված էր ռոժըկիների Բիթլիսի (Բաղեշ) իշխանության կազմում, սակայն տեղի հայ իշխանները պահպանել էին իրենց ինքնավարությունն ու արտոնությունները: Խութ–Բռնաշենում հատկապես մեծ հռչակ ունեին **Արծվիք–Կրպնիկ** ավանի «Կարմիր իրիցու տան» ներկայացուցիչները: Չի բացառվում, որ այստեղ ևս գոյություն է ունեցել հայկական պարոնտերություն (կամ վերջինիս մոտ հոգևոր–աշխարհիկ իշխանություն), որը կապված էր գավառի հռչակավոր **Սուրբ Աղբերիկ** կամ **Վանդիր վանքի** հետ: Հատկանշական է, որ մինչև 1870–ական թթ. հայերը և քրդերը (խութեցի և բալաքցի ցեղերից) հավասար իրավունքներ ունեին, և գավառի կառավարիչները փոխնիփոխ ընտրվում էին մերթ հայ իշխաններից, մերթ քուրդ բեկերից: Օսմանյան առաջին պաշտոնյաները (մյուդիր–գյուղապետ) **Խութ–Բռնաշենում** հայտնվել են 1870–ական թթ. կեսերին: Թրքական գերիշխանության հաստատումը խիստ բացասական հետևանքներ ունեցավ գավառի համար՝ խարխլելով և աղճատելով հայ–քրդական երբեմնի հարաբերությունները: 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում, հատկապես 1890–ական թթ. համիդյան «զուլումի» տարիներին, **Խութ–Բռնաշենից** սկիզբ առած արտագաղթի հետևանքով հարյուրավոր հայ ընտանիքներ տեղափոխվեցին **Մուշ**, **Բուլանուխ**, **Մանազկերտ**, **Խնուս**, **Վարդո** կամ Արևելյան Հայաստան: Հետևանքները, անշուշտ, ծանր էին: **Խութ–Բռնաշենի** մի շարք հատվածներում սկսեցին գերակշռել քրդերը, ավերվեցին կամ ամայացան հայկական բազմաթիվ եկեղեցիներ: Միայն 1908 թվականից հետո օգտվելով ստեղծված համեմատաբար տանելի պայմաններից՝ շատ խութեցի հայեր վերադարձան հայրենի բնօրրան՝ վերականգնելով ավերված օջախները: Առաջին աշխարհամարտի նախօրեին **Խութ–Բռնաշենի** հայ բնակչության թիվը կազմում էր շուրջ 5000 մարդ: Եղեռնի տարիներին խութեցիները ևս ծանր կորուստներ ունեցան: Այնուամենայնիվ, որոշ քուրդ ցեղապետերի և աղաների մարդասիրական վերաբերմունքի շնորհիվ գավառի հայ բնակիչներից շուրջ 2000 հոգի կարողացավ փրկվել բնաջնջումից և 1916 թ. անցնել Արևելյան Հայաստան: Նրանց սերունդների հիմնական մասն այժմ բնակվում է **ՀՀ Արագածոտնի** մարզի **Ագարակ**, **Աշնակ**, **Ավան**, **Իրինդ**, **Կաքավաձոր**, **Ներքին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն** գյուղերում: Մեծ թվով խութեցիների ժառանգներ կան նաև **ՀՀ Շիրակի** մարզի **Ոսկեհասկ** գյուղում:

Սուրբ Աղբերիկի (Աղբերկա, Աղբյուրիկի) կամ Վանդիր վանք

Սասունի առավել նշանավոր մենաստաններից էր: Գտնվում էր Խութ–Բռնաշենի հյուսիսարևմտյան հատվածում՝ **Օշուտ** և **Կծանք** գյուղերից շուրջ 2 կմ հյուսիս՝ **Սիմսարի** (**Սևսար**) լեռների ստորոտին: Վանքի հիմնադրումն ավանդաբար վերագրում են Սուրբ Թադևոս Առաքյալին, որը, քարոզչությամբ հասնելով գավառի տարածք, ապագա մենաստանի մոտ հրաշագործությամբ բուժիչ աղբյուր է բխեցրել: Այնուհետև առաքյալը բուժել է գավառապետ **Բռնիկ** իշխանի (ժողովրդական ավանդազրույցում՝ «ամիր») անդամալույծ որդուն, որը թույլատրել է տեղում վանք կառուցել: Առաքյալի պատվին աղբյուրը կոչվեց **Սուրբ Թադևոսի**, իսկ վանքը վերջինիս անունով կոչվեց **Սուրբ Աղբերիկի** կամ **Աղբերկա**: Ավելի

ուշ մենաստանը վերականգնել է **Սուրբ Գրիգոր Լուսավորիչը**, իսկ 9-րդ դ. այն հիմնովին վերակառուցվել է: Վանական համալիրի մեջ էին մտնում **Սուրբ Աստ-վածածին**, **Սուրբ Կարապետ**, **Սուրբ Հոգի**, **Սուրբ Ստեփաննոս**, **Սուրբ Փրկիչ** (ի դեպ, վանքը հայտնի էր վերջին անվամբ ևս) եկեղեցիները: Մենաստանի հռչակի մասին են խոսում այստեղ հնուց պահվող մի շարք պաշտելի սրբություններն ու մասունքները՝ **Սուրբ Խաչ** կամ **Գործելիարույց Սուրբ Նշան** (կոչվում էր նաև «**Աղբայրիկ**» կամ «**Պողե խաչ**», որը, մի ավանդազրույցի համաձայն, այստեղ ի պահ էր տրվել Հակոբ Տյառնեղբոր կողմից), **Սուրբ Խաչափայտի** գամերը (բևեռ-ները, որոնցից մեկը Թադևոս Առաքյալը նետել էր իր սքանչելաբուղխ աղբյուրի մեջ՝ ջրին հաղորդելով հրաշագործ բուժիչ հատկություն), **Սուրբ Գեղարդը** (sic!), Հիսուսի արյունով սրվակը ևն: Պահպանվել էին մի շարք խաչքարեր: Տարածքում կար նաև սեպագիր արձանագրությամբ քար: **Սուրբ Աղբերիկը** եպիսկոպոսանիստ էր և ուներ ընդարձակ ու հարուստ թեմ, որը, համաձայն մեզ հայտնի վանական կոնդակի տեքստի (ոչնչացել է Մեծ եղեռնի տարիներին), հաստատվել է դեռ Հա-յոց **Սմբատ Ա Բագրատունի** արքայի կողմից: Մինչև Մեծ եղեռն մենաստանի թեմի կազմում են եղել **Խութ-Բռնաշենը**, **Մոտկանը**, **Ջոլկանը** (**Դերզնի** կամ **Տերզնի**), **Շիրվանը** (**Շերվանք**), **Սղերդը** (քաղաքը), **Մանազկերտը**, առանձին շրջաններ **Բուլանուխում** և **Մուշ-Տարոնում**:

Վանքը պարսպապատ էր (Ղ. Ինճիճյանի խոսքերով՝ «բերդանման») և 18-րդ դ. 40-ական թթ. խութեցիների կենտրոնն էր Մուշի **Ալադին բեկի** դեմ կռիվների ընթացքում, որի պատճառով խիստ տուժել էր: Ի դեպ, Սուրբ Աղբերիկը հաջորդ հարյուրամյակին ևս ժամանակ առ ժամանակ կողոպտվել և ավերվել է քրդերի կողմից: Սրանով հանդերձ, այն չի դադարեցրել իր գործունեությունը: Վանքում կար վանական գիշերօթիկ դպրոց, փոքրիկ ձեռագրապահոց (միջնադարում գրչության կենտրոն էր): Վանքը նշանավոր ուխտավայր էր: 1915 թ. **Սուրբ Աղբերիկը** հիմնովին կործանվել է, իսկ միաբաններն ու դպրոցի սաները՝ զոհվել: Բարբարո-սաբար ոչնչացվել կամ կողոպտվել են նաև մենաստանում պահվող ձեռագրերը, սրբություններն ու եկեղեցական սպասքը:

ա) Բռնաշեն

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Արինոք (Հարինոք)	եկեղեցի		
2	Արուք (Արունք)	Սբ Մինաս (նախկին վանք)		Հիշվում է նաև Սբ Ստեփաննոս եկեղեցին:
3	Բլոկանք (Պլոկանք)			
4	Բլոկանք (Պլոկանք), Ներքին			
5	Բլրիկ (Բլուրիկ)	Սբ Կարապետ		Գյուղում պահպանվել էր **Բերդգոռ** ամրոցը: Ինչպես այս, այնպես էլ **Ընկուզիկի** (տես ստորև) բերդերը գտնվում էին **Դեղկանց** ջուր վտակի ծաղկավետ ձորահովտի հան-դիպակաց ափերին: 2 ամրոցների կառուցումը վերագր-վում է լեգենդար Բռնիկ իշխանին:
6	Դաշտադեմ	Սբ Մինաս		Գյուղում է ծնվել հայտնի գրող և թարգմանիչ **Խաչիկ Դաշտենցը** (1910-1974)
7	Դաշտամիրան (Մեզրե)	Սբ Կարապետ		Քրդերեն նշանակում է «իշխանաց բերդ», որը գտնվում էր գյուղի շրջակայքում:
8	Եզիանք			
9	Ջորավա(ր)	Սբ Թորոս		Եկեղեցուն կից կային կանգուն խաչքարեր:
10	Ընկուզիկ	Սբ Ստեփաննոս		Պահպանվել էր միջնադարյան ամրոցը (**Ընկուզկա բերդ**):

11	Կծանք	Սբ Գևորգ, Սբ Կարապետ		
12	Կոստ	Սբ Աստվածածին		Գյուղի շրջակայքում հայտնի էին ավանդական 7 թվով հայկական ավերակ վանքեր և եկեղեցիներ, այդ թվում՝ **Սբ Թալիլա, Սբ Կարապետ, Սբ Ստեփաննոս, Սբ Տյառնեղբայր** ևն:
13	Հնդրկնոր (Հինդնոր)	եկեղեցի		
14	Մահբուբանք (Մահբրանք)	Սբ Կարապետ (ավերակ)		Գյուղի մոտ գտնվում էր **Մահբուբանքի** կամ **Ամիրի բերդը**, որի կառավարիչը, ժողովրդական ավանդության համաձայն, **Բռնիկ** իշխանն էր:
15	Շահվերդի			
16	Շամիանք (Շամիրան)	Սբ Հարություն		Եկեղեցին կառուցված էր ինքնատիպ ճարտարապետական ոճով: Գյուղից հյուսիս՝ Սիմսարի ստորոտին գտնվում էին **Գոմրկանք, Արծվիք (Կրպնիկ)** և **Քնոտ (Կիրթնոտ)** երբեմնի հայաբնակ գյուղերը, ուր պահպանվել էին եկեղեցիների մնացորդներ: Չի բացառվում, որ **Արծվիքը** Խութի պարոնտերության կենտրոններից մեկն էր, ուր պահվում էր «Կարմիր իրիցանց» սրբացված տոհմական «**Կոճղեզ**» Ավետարանը, որով երդվել են հայ ռազմիկները, և, ընդհանրապես՝ բոլոր խութեցիները:
17	Շամիանա մեզրե			
18	Շենիստ (Շնիստ), Վերին			Գյուղի մոտակայքում գտնվում էր **Սբ Կարապետ** վանքը:
19	Ուշտափ (Հուշթափ)			
20	Օշուտ (Հուշուտ)	Սբ Կարապետ, Սբ Ստեփաննոս		
		բ) Խութ		
1(21)	Ագրակ	Սբ Առաքյալ (ավերակ), Սբ Աստվածածին		Գյուղի մոտ գտնվում էր **Ագրակա մեզրե** երբեմնի հայկական գյուղը:
2(22)	Ալախ(Ալախկ)			
3(23)	Ավարք (Հավրրք)	եկեղեցի (կիսավեր)		
4(24)	Բաբնթաղ (Պապթաղ)	Սբ Կիրակոս		Գյուղում կար ևս մի ավերակ եկեղեցի՝ **Սբ Կարապետ** անունով:
5(25)	Գելոնք (Գեղոնք)	Սբ Աստվածածին, Սբ Կարապետ		
6(26)	Գործվար			
7(27)	Թաղավանք (Թաղվանք, Անդիի թաղ՞)	Սբ Աստվածածին, Սբ Ստեփաննոս		Գյուղում կային ևս 2 ավերակ եկեղեցիներ՝ **Սբ Զիկրաշեն** և **Սբ Սարգիս**:
8(28)	Թաղվու	Սբ Հակոբ		
9(29)	Թաղվրնոր (Թաղիոնոր)	Սբ Աստվածածին, Սբ Կարապետ		
10(30)	Լորտնոր	Սբ Հովհաննես		Մոտակա լեռան գագաթին պահպանվել էին վանքի ավերակներ:
11(31)	Կոռ (Կորդ)	Սբ Քառասուն Մանուկ		Շուրջ 5 կմ արևելք **Բռնաշեն** երբեմնի հայաբնակ ավանն էր: **Հարավում՝ Մոտկանի** հետ սահմանագլխին, գտնվում էին **Թաղ, Թաղվիկ (Թխպիկ)** և **Խաչթաղ (Խաշթաղ)** երբեմնի հայաբնակ գյուղերը: Կոռում է ծնվել Գլաձորի միջնադարյան հռչակավոր համալսարանի հիմնադիր **Ներսես Մշեցին**:

12(32)	Շեն	Սբ Ստեփաննոս		Գյուղում պահպանվել էին **Սբ Աստվածածին, Կուռ-լանա Սբ Զիավոր** և **Սբ Մարծմետ** ավերակ եկեղեցիները, որոնք հայտնի ուխտավայրեր էին: Եվս մեկը՝ **Սբ Հակոբը**, գտնվում էր գյուղի շրջակայքում: Շենի մոտ պահպանվել էր նաև բնակատեղի: Գյուղը հայտնի էր բուժիչ ջերմուկով: Շենը Խութ-Բռնաշենի համեմատաբար մեծ գյուղերից էր՝ 1914 թ. 80-100 տուն հայ բնակչով: Շեն և Ագրակ գյուղերի միջև գտնվում էր երբեմնի հայաբնակ **Տափ** գյուղը:
13(33)	Շենիստ (Շնիստ), Ներքին	Սբ Աստվածածին		
14(34)	Պարծղենք (Պարզդինք)	Սբ Սարգիս		
15(35)	Ռաբաթ (Խութա Դատ-վան)			Պահպանվել էր ավերակ բերդը (**Խութաբերդ**):
16(36)	Սալապոս(տ)	եկեղեցի (ավերակ)		
17(37)	Սարեգոլե (Սարընգոլե, Սարեկան)			
18(38)	Փիձոնք	Սբ Թովմաս (կիսավեր)		
19(39)	Փղոնք (Փեղոնք)			
20(40)	Փրեվանք (Փիրիվանք)			Գյուղանունը հուշում է, որ մոտակայքում ժամանակին եղել է մենաստան:
21(41)	Քեռվու (Քերվու)	Սբ Սիոն (Սիոնաշեն)		Գյուղում կար ևս մի ավերակ եկեղեցի՝ **Սբ Սարգիս** անունով: Վերջինս հիշատակվում է գրիչ **Մելքիսեթի** կողմից 1428 թ. ընդօրինակված 2 ձեռագիր Մաշտոց-ներում («ընդ հովանեաւ **Սրբոյն Սարգսի** և որդւոյ նորա **Մարտիրոսի** և **Սրբոյն Շամօնի**»): Ի դեպ, ձեռագրերից մեկում **Քեռվուն** նշվում է որպես գյուղաքաղաք, ինչը վերջինիս նշանակալի բնակավայր լինելու ապացույց է:
22(42)	Օխին (Հոխին)			

Ծնթ. Խութ-Բռնաշենի գյուղական դպրոցների մասին տվյալներ բացակայում են:

8. Մոտկան

Մոտկանը գրավում էր Սասունի ծայր արևելյան հատվածը՝ **Խարզանաջրի** վերին, մասամբ՝ միջին ավազանը (այդ մասում՝ **Մեյդանի ջուր**): Սահմանակից էր, հյուսիսից, **Մոտկանի** լեռներով՝ **Խութ-Բռնաշենին**, արևելքից, **Հորմորի** լեռնա-զանգվածով՝ **Բիթլիսի** կենտրոնական գավառին, հարավից՝ **Խարզանին**, իսկ արևմուտքից, **Մարաթուկի** և **Քարմլեճի** լեռնազանգվածներով՝ **Մարաթուկին** ու **Հազո-Խաբլջոզին**: 20-րդ դ. սկզբին տեղացիների շրջանում պահպանված հնա-գույն մի ավանդազրույցի համաձայն, գավառի կենտրոնական հատվածում՝ **Գո-լանց (Քոլանիս)** գյուղից արևմուտք բարձրացող **Խալամսու** լեռան գագաթին է ապաստանել Նոյան տապանը:

Կենտրոնը **Դատվան** ավանն էր (որոշ տվյալներով՝ **Մցուն**), որը 20-րդ դ. սկզբին ամբողջովին զրկվել էր հայ բնակչությունից: Մոտկանը վաղ միջնադարում գտնվում էր պատմական Աղձնիքի կազմում: Նրա տարածքում գոյություն ուներ 2 գավառ: Արևմտյան մասը զբաղեցնող **Սալնոձորը** գրավում էր **Խարզանաջրի** աջափնյա **Շինա** կամ **Մցանաց** գետ և **Երկանգոտի** կամ **Բողնուտի (Բոկնոտու)** գետ վտակների ձորահովիտները: Ուշ միջնադարում գավառը՝ նոր կենտրոնի անու-նով կոչվում էր «**Բողնարդու (=Բողնուտ) երկիր**»: Արևելյան հատվածը զբաղեցնող **Գզեխ** (**Գզեղխ**) գավառն ընդգրկում էր նույն գետի ձախափնյա **Գզեխի** կամ **Երախու**, **Մցու** կամ **Քաշախի**, **Գոլանից**, **Եղիկի** կամ **Եղգիկի** (<**Եղեգիք**) վտակների ձորահովիտները: Այս վարչական բաժանումը գոյատևեց մինչև ուշ միջնադար: Գլխավոր ցեղախմբի՝ մոտկցիների (քրդ. motîki, թրք. mudaki) անունով վերոհիշյալ

վարչամիավորներն աստիճանաբար ստացան **Մոտկան** հավաքական անունը:

15-րդ դ. վերջինիս տարածքում էլ ձևավորվեց քրդական ռոժըկի (ռուզաքի) ցեղային միության կիսանկախ իշխանությունը, որի կենտրոնը հետագայում դարձավ Բիթլիս կամ Բաղեշ քաղաքը: Քրդական այլևայլ ցեղերի մուտքը զգալիորեն աղճատել է տեղի ազգացեղային նկարագիրը: Պարբերաբար կրկնվող ցեղամիջյան ընդհարումներն ու կռիվները ծանր հետևանքներ են ունեցել հայ բնակչության համար: Ընդ որում, այս վիճակը շարունակվեց նաև ռոժըկիների՝ Բիթլիսի իշխանության վերացումից հետո: Ընդհուպ մինչև 20-րդ դ. սկիզբը Մոտկանի ռազմատենչ ցեղերն ապրում էին կիսանկախ կյանքով, և թուրքական իշխանությունն այստեղ գրեթե անվանական էր: Շարունակվող միջցեղային կռիվների և օսմանյան պատժիչ ռազմերթերի հետևանքով Մոտկանի մի շարք շրջաններ լիովին հայաթափվել էին: Առաջին աշխարհամարտի նախօրեին հայ բնակչությունը կենտրոնացած էր հիմնականում գավառի արևելյան և հյուսիսարևմտյան հատվածներում: Հայերի թիվը մեծ էր նաև Մոտկանի հարավարևմտյան Կրխու- **Ջրտուի** գյուղախմբում, որը գրավում էր հյուսիսում՝ **Շնազ** (2405 մ) և **Փորակ** (2255 մ), իսկ հարավում՝ **Արծիվ** լեռնազանգվածներով եզերված շրջանը: 1914 թ. **Մոտկանի** հայ բնակչության թիվն անցնում էր 5000-ից (1850-ական թթ. 8000-ի փոխարեն):

Գավառակի հայ բնակչությունը ևս անմասն չմնաց Եղեռնի սարսափներից: Վերապրած մոտկանցիները տեղափոխվել են Արևելյան Հայաստան, և այսօր նրանց սերունդները բնակվում են ՀՀ **Արագածոտնի** մարզի **Ագարակ, Շղարշիկ** և **Ուջան**, ինչպես նաև Արմավիրի մարզի **Ապագա** գյուղերում: Հարկ է, սակայն, նշել, որ Մոտկանի հայերին մասամբ հաջողվեց խուսափել կոտորածից և չգաղթել: Փրկված ընտանիքները մինչև 1960-ական թթ. դեռ ապրում էին **Արփի, Բողնուտ, Կնծու, Մերեթաղ, Մցու, Նիչ, Շեն, Ջրտու** նն գյուղերում: Սակայն թուրքական իշխանությունների և Քրդական բանվորական կուսակցության (PKK) միջև սկսված բացահայտ զինված առճակատումը նրանց հարկադրել է աստիճանաբար տեղափոխվել Ստամբուլ: Որոշ տվյալներով, միայն Նիչ գյուղից այժմ Ստամբուլում ապրում է 100 ընտանիք (տես նաև Մարաթուկի մասում):

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ասպնջեր (Աշըբներ), Ներքին	Սբ Ստեփաննոս		Շուրջ 3 կմ արևմուտք՝ **Գզեխի** վտակի ափին պահպանվել էր **Մեղիքարի** կամ **Մաղիքարի (Մեղվաքար)** ավերակ բերդը:
2	Ասպնջեր (Աշըբներ), Վերին	Սբ Թուխ Մանուկ		Երկու **Ասպնջերների** շրջակայքում հայտնի էր **Սբ Դանիելի** վանքը: Մոտկանի առավել հայաշատ բնակավայրերն էին և 1914 թ. միասին ունեին շուրջ 130 տուն բնակիչ (ավելի քան 1000 մարդ):
3	Արդրեր (Հարդրեր)			
4	Արծվիք (Արծիվ)			
5	Արփի (Հարփի)	Սբ Թուխ Մանուկ		
6	Բողնուտ (Բողնարդ, Բուկնոտ, Պուգնոտ)	Սբ Աստվածածին		Գուղում կար ևս մեկ եկեղեցի: Մոտակայքում գտնվում էր **Բողնուտի** կամ **Բուկնոտի** ավերակ բերդը: Վերջինս ուշ միջնադարում պատմական **Սալնոռորի** կենտրոնն էր, որի համար էլ **Խարզանաջուր (Արզան)** գետի աջափնյակը մինչև **Մոտկանի** և **Սասնո** լեռներ կոչվել է «**Բողնարդու** (=**Բողնուտ** կամ **Բուկնոտ**) երկիր»:
7	Բրուտք	Սբ Հակոբ		
8	Գզեխ (Նիզեն, Գզեղխ)	Սբ Կիրակոս	1	Մոտակայքում պահպանվել էր կիսավեր վանք: Պատմական **Աղձնիքի Գզեղխ** կամ **Գզեխ** գավառի հնագույն կենտրոնը (ուշ միջնադարում՝ «**Գզեկու երկիր**»): **Գզեխի** շրջանում մեծ համբավ ուներ **Սբ Կիրակոս** վանքը, որը հայտնի ուխատեղի էր: Մոտակայքում երևում էին **Գզեխի բերդի** («**Գզխուբերդ**») ավերակները:

9	Խուր (Խուրտյանք)	Սբ Էջմիածին		Գյուղում կար մատուռ՝ **Սբ Ստեփաննոս**:
10	Ծրտուտ (Ցրտուտ)			
11	Կարբ (Կրբը)	եկեղեցի		
12	Կնծու (Գնծու, Կծու)	Սբ Գևորգ	1	Գյուղի դպրոց էին հաճախում նաև հարևան **Քաշախի** երեխաները:
13	Կրխու (Գրխու)	Սբ Հակոբ, Սբ Տյառնեղբայր (Սբ Տերնակ)		19-րդ դ. 60-ական թթ. **Կրխուն** Մոտկանի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 100 տուն հայ բնակչով: Սակայն քրդերի վայրագությունների հետևանքով սկիզբ առած արտագաղթը բացասաբար անդրադարձավ նաև **Կրխուի** վրա, որի բնակչությունը 1914 թ. կազմում էր ընդամենը 60 տուն:
14	Կոռ			
15	Հավութաղ (Աբութաղ)	Սբ Աստվածածին		
16	Հաշկադարան (Ըշկրդարա)			Գյուղի անունը քրդերեն նշանակում է «չոր ծառեր»:
17	Հրորք	Սբ Կիրակոս		Գյուղի շրջակայքում պահպանվել էին մի քանի վանքերի և եկեղեցիների ավերակներ (**Սբ Մար-հանա,Սբ Մանկաս, Սբ Եղիա, Սբ Կիրակոս**): Հրորքի մոտ տեսանելի էր մեծ բնակատեղի (տեղացիների շրջանում հայտնի էր որպես «քաղաք»):
18	Մարմանդ (Նարմանդ)	եկեղեցի (2)		
19	Մեծձոր			1532 թ. **Մահտեսի** («Մուղտասի») **Ղազարը** գյուղի **Սբ Աստվածածին** եկեղեցուն է նվիրաբերել մի ձեռագիր Ավետարան: Ցավոք, գյուղի եկեղեցու մասին այլ տվյալներ չեն հանդիպում:
20	Մերեթաղ (Միրթաղ, Վերին-գեղ)	Սբ Քրիստափոր		
21	Մերքոխ (Վերքոխ)			
22	Մզուք (Մզոք)	Սբ Ստեփաննոս		**Մզուքում** նույն 1452 թ. ընդօրինակվել է 2 ձեռագիր (պահպանվել են հիշատակարանները), ինչը խոսում է միջնադարում գյուղի հայ գրչության կենտրոն լինելու մասին:
23	Մինանք (Միցանք)	Սբ Գևորգ		
24	Մցի (Մծու)	Սբ Սարգիս		Մոտակայքում երևում էին մենաստանի ավերակներ:
25	Նիչ	Սբ Գևորգ, Սբ Սարգիս		Հայտնի էր նաև **Կարմրախաչ** սրբավայրը (վանք՞): Նիչը 13-րդ դ. նշանավոր փիլիսոփա **Եսայի Նչեցու** ծննդավայրն է, որը **Գլաձորի** հռչակավոր միջնադարյան համալսարանի հիմնադիրներից մեկն էր: Գյուղից մի փոքր հվ-արևմուտք գտնվող **Փսխտուր** քարաժայռի (հռչակված էր իր ամեհի ջրվեժով) շրջակայքում էր գտնվում երբեմնի հայաբնակ **Գոմք** ամայի գյուղը, որի քարաշեն եկեղեցին կանգուն էր մինչև 1915 թ.: **Նիչի** հվ-արևելյան կողմում գտնվող **Տափլեր** գյուղում պահպանվել էր համանուն (**Տաբլի**) ավերակ բերդը: 1674 թ. **Նիչի** շրջանի **Նահիայի ձորի Կորկտնոց** գյուղում ծնված **Պողոս Գծողն** Ավետարան է ընդօրինակել:
26	Շեն (Շենը)	Սբ Աստվածածին		Գյուղից հյուսիս համանուն (կոչվել է նաև **Սարեր**) փոքր լեռնապարի վրա էր գտնվում **Սբ Աստվածածին** կանգուն վանքը: 19-րդ դ. 60-ական թթ. **Շենը** Մոտկանի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 200 տուն հայ բնակչով: Սակայն հետագա տասնամյակներին տեղ գտած արտագաղթի հետևանքով գյուղի բնակչությունը նկատելիորեն նվազել էր և 1914 թ. կազմում էր 50-60 տուն:
27	Որձենք (Օրձանք, Հորսենք)	Սբ Գևորգ		Գյուղի մոտ պահպանվել էր նույնանուն ամայի վանքը (եթե գյուղի նույն եկեղեցին չէր):
28	Ուսխա (Օխսա)			
29	Ուրուս	եկեղեցի (կիսավեր)		Գյուղի մոտակայքում գտնվում էին համանուն բերդի ավերակները:
30	Ջրտու (Ճրտու)	եկեղեցի (կիսավեր)		

31	Սալնձոր (Սրաձոր, Սալնձոր)			Պատմական **Աղձնիքի Սալնոձոր** կամ **Սալնաձոր** գյուղը գավառի երբեմնի վարչական կենտրոնն էր՝ **Խարզան (Արզան)** գետի ձախակողմյան **Դատվանի** կամ **Երախի (Էրախու)** օժանդակի ձորահովտում:
32	Սիսար (Սեսոր)			
33	Սղունդ (Սլընտ)	Սբ Հակոբ, Սբ Շմանիկ		Հիշվում է նաև **Սբ Գևորգ** եկեղեցին: **Սղունդ** և **Հրորք** գյուղերի շրջակայքում ժամանակին մեծ համբավ է ունեցել մեկ այլ **Սբ Աստվածածին** վանքը: Ժողովրդական զրույցների համաձայն հատուկ խողովակաշարով **Մարութասարից** ջուր էր մատակարարվում մենաստանին: Անգամ **Սբ Աստվածածնի** զանգակատնից մինչև **Գոմոց** վանք (**Փսանաց** գավառ) ձգված էր բարակ մետաղե շղթա, որով 2 մենաստաններում զանգահարությունը միաժամանակ էր տեղի ունենում: Սակայն Սղերդին ենթակա **Ջոխի** քուրդ բեկերից մեկն ավերել է **Սբ Աստվածածինը**, իսկ միաբաններին, ի թիվս որոնց՝ 2 վարդապետի, գերի տարել, որից հետո մենաստանը վերջնականապես ամայացել ու լքվել է: Նույն ճակատագրին է արժանացել Մոտկանի **Սբ Լուսավորիչ** վանքը, որը հայերի համար շարունակում էր մնալ սիրված ուխտատեղի: Ցավոք, լրացուցիչ տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս ճշտելու վերջինիս տեղադիրքը:
34	Տանձի (Տանձիկ)			Գյուղից շուրջ 2–2.5 կմ արևելք՝ Խարզանի աջ ափին գտնվող **Կալհոք (Կալահոկ, Կելհոկ)** և **Քեբուրցիք (Քերվու)** գյուղերում պահպանվել էին ավերակ բերդեր:
35	Քաշախ	Սբ Հակոբ		

9. Մարաթուկ կամ Խարզանք (Վերին Խարզան)

Գավառակն ընկած էր **Սասնաջրի** վերին ավազանի ձախափնյակում՝ ընդգրկելով վերջինիս բազմաթիվ մանր վտակների (**Արև** կամ **Տնգետ**, **Արծվից ջուր**, **Գետերու ջուր**, **Փիրշնից** կամ **Հաղթի ջուր** ևն) ձորահովիտները: Սահմանակից էր հյուսիսից **Աստվածածնի** և **Խութի** լեռներով՝ **Խութ-Բռնաշենին**, արևելքից՝ **Սասունի** լեռներով՝ **Մոտկանին**, արևմուտքից, **Սասնաջրի** հունով (այդ հատվածում՝ **Հորսանք** < **Հորձանք**?)՝ **Գավառին** կամ **Բուն Սասունին** և **Փսանքին**: Գավառակի հարավային սահմանը հասնում էր մինչև **Խաբլջոզի** շրջակայքը: Անունը կապվում է Սասունի առավել նշանավոր և սրբացված լեռնագագաթի՝ երկկատար **Մարաթուկի** կամ **Մարութասարի** (2967 մ) հետ, որի պաշտամունքն արմատներով հասնում է վաղնջագույն հայկական դիցարան: 7-րդ դ. բյուզանդացի հեղինակ **Գևորգ Կիպրացու** կողմից գրանցված մի հազվագյուտ, բայց արժեքավոր ավանդազրույցի համաձայն՝ տեղի հայերը համոզված էին, որ Նոյյան տապանը հանգրվանել է **Մարութասարի** գագաթին (հեղինակը լեռնանունը գրանցել է **Մարաթկեն** – հունարեն՝ Μαραθκέν, ինչը բխում է ժողովրդական **Մարաթուկ** տարբերակից): Լեռան վրա առ այսօր պահպանվել է **Սուրբ Աստվածածին** մատուռը, որը նախկինում խոշոր վանական համալիր էր: Ըստ «Սասնա ծռեր» դյուցազնավեպի՝ վանքի կառուցումը վերագրվում է **Մեծ Միհերին** (**Առյուծ Միհեր**): Թեև 20-րդ դ. սկզբին սրբավայրը նկատելիորեն անշքացել էր, սակայն չէր կորցրել իր ժողովրդականությունը: Ամեն տարի Վարդավառի տոնակատարությանը այստեղ քառօրյա ուխտի էին գալիս հազարավոր մարդիկ ինչպես Սասունից, այնպես էլ հարևան գավառներից: Առաջին օրը տեղի էր ունենում Մեծ կամ աջ գագաթի, իսկ երկրորդ օրը՝ Փոքր կամ ձախ գագաթի «ուխտը»: Հաջորդ 2 օրերին տեղի էր ունենում պարերով և լարախաղացությամբ ընթացող մեծ տոնակատարություն, կազմակերպվում էր հրաձգություն և այլն: Մարութասարի լանջին գտնվում էր «**Շարան քարեր**» անունը կրող քարակույտը, որը ժողովրդական ավանդազրույցի համաձայն՝ Աստծո հրամանով քարացած երդմնազանց մի հովիվ է՝ իր հոտի հետ:

Միջնադարում **Մարաթուկի** տարածքում գոյություն ունեին 2 վարչամիա-

վորներ՝ **Արծվյաց** (**Արծվեց**) **գավառ** և **Հորսանք**: Քրդական **բալաքցի** (քրդ. bîlîki) արաբախոս ցեղի առանձին ստորաբաժանումների (քրդ. qâbilâ) մուտքը նկատելի փոփոխություններ մտցրեց տեղի ազգացեղային նկարագրում: Հարկ է նշել, սակայն, որ նորեկները հիմնականում զերծ էին մահմեդական մոլեռանդությունից (անգամ չունեին մզկիթներ, թլպատություն չէին կատարում), տիրապետում էին հայերենին: Ըստ այդ ցեղերի բնակության՝ **Մարաթուկի** գավառակը 20-րդ դ. բաժանվում էր 3 գյուղախմբի՝ **ջալալի** (**ջալալիք**), **շեկո** (հայկական աղբյուրներում՝ «**Շեկո տուն**» կամ «**Շեկոյի տներ**») և **բդրցի:** Տեղի քուրդ աղաների համեմատաբար հանդուրժողական վերաբերմունքն էր պատճառը, որ **Մարաթուկի** հայ բնակչությունը խուսափեց 19-րդ դ. վերջի-20-րդ դ. սկզբի զանգվածային կոտորածներից: Սակայն 1915-1916 թթ. երիտթուրքական իշխանությունների հանցագործ հայատյաց քաղաքականությունն այստեղ ևս հայկական կոտորածներ հրահրեց: Տեղի 3000-ի հասնող հայությունը թեև ծանր կորուստներ կրեց, սակայն կարողացավ իր գործուն մասնակցությունը բերել Սասունի հերոսամարտին (ինքնապաշտպանության ղեկավարներից հայտնի է **Քելլո Աղձեն՝ Գոմարտեր** գյուղից): 1916 թ. տեղի վերապրած հայերի հիմնական մասը նույնպես հարկադրված էր հեռանալ բնօրրանից և հաստատվել Արևելյան Հայաստանում: Նրանց սերունդներն այժմ բնակվում են **ՀՀ Արագածոտնի** մարզի **Աշնակ**, **Ներքին Բազմաբերդ**, **Ներքին** և **Վերին Սասնաշեն** ևն գյուղերում: Հարկ է նշել, որ առաջնորդվելով սեփական տնտեսական շահերով՝ քրդական ավագանու որոշ ներկայացուցիչներ, այնուամենայնիվ, պաշտպանեցին հայերին թուրքական և հարևան ցեղակիցների բարբարոսություններից: Դրա շնորհիվ մինչև 1960-ական թթ. վերջը զգալի թվով հայ բնակչություն կար գավառակի **Արեգդեմ**, **Գոմեք**, **Խասոփի**, **Կոշակ**, **Կուռթեր** կամ **Կորդեր**, **Հռուտ**, **Ձորաղբի**, **Ճակուտ**, **Վարդենոց**, **Փիրշենք** և այլ գյուղերում: Սակայն իրավիճակի վատթարացումը, թուրքական իշխանությունների և Քրդական բանվորական կուսակցության (PKK) միջև սկսված բացահայտ զինված առճակատման հետ կապված, հարկադրեց Եղեռնը վերապրած ընտանիքներին աստիճանաբար տեղափոխվել ավելի «ապահով» Ստամբուլ, ուր մեր օրերում սասունցիների բավական ստվար համայնք է ապրում: Բնօրրանի հետ կապը հիմնականում պահվում է **Սուրբ Մարաթուկ** ամենամյա ուխտագնացության և հայրենակցական միության շնորհիվ:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Արջոնք (Արչնոց, Հառչոնք)			Գյուղում հայտնի էին **Սբ Քառասուն Մանուկ** և **Մեղոք քար** սրբավայր-ուխտատեղիները: Վերջինս մի հսկա ապառաժ էր, որը ծառայում էր մեղանչած անձանց «դարձի բերելու» համար: Քարաժայռի վերին, անմատչելի մասում մարդկային էակների տեսքով խորաքանդակներ էին նշմարվում, որոնք կարծես ամոթահար փորձում էին թաքնվել մարդկանցից: Ժողովրդական ավանդության համաձայն դրանք հարազատներ են եղել («սանիկ և սանամայր»), որոնք հանցավոր կապի մեջ են եղել: **Մեղոք քարը** լեռնականների շրջանում ընտանեկան սրբությունն ու բարոյականությունը պաշտպանելու և մեղսագործությունը կանխարգելելու յուրատեսակ սրբավայր էր:
2	Առվտնոց (Առվտոց, Արևտոց)	եկեղեցի		
3	Արեգդեմ	եկեղեցի (ավերակ)		
4	Արծվիք	եկեղեցի (2)		Մոտակայքում պահպանվել էին **Սբ Դանիել** (ասոր. **Մար Դանել**) վանքի ավերակները:
5	Բաղրմուտ	եկեղեցի		
6	Գետեր (Գետկից)			

7	Գոմարտեր (Գոմբրդեր)	եկեղեցի (ավերակ)		Շուրջ 1.5 կմ հս գտնվող **Աղվո** (**Աղվի**) գյուղում 1534 թ. **Աբրահամ** քահանայի ձեռքով ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում պահպանվել է բնակավայրի նախնական անունը՝ **Աղունք** (սխալ ընթերցմամբ՝ «**Ադունք**»):
8	Գոմեք (Գոմեր)			Մինչև 1890-ական թթ. հայաբնակ էին գյուղի հարևան **Վերին** և **Ներքին Ջալալիք** (**Ջալալեք**) գյուղերը:
9	Դալարձոր (Դայրձոր)	եկեղեցի (ավերակ)		
10	Թգի			
11	Իրցանք	եկեղեցի		
12	Խասոփի (Խասոբի)	եկեղեցի (ավերակ)		
13	Խարվեր (Խալվեր, Խարվինք)			
14	Խնձորտա (Խնձորտանք)			
15	Խոփեր (Էրուր)			
16	Խուջարինք (Խոճարենք)			
17	Կոշակ (Գոշակ)	եկեղեցի (ավերակ)		
18	Կորով	եկեղեցի (ավերակ)		
19	Կուռթեր (Կորդեր)	եկեղեցի (ավերակ)		Գյուղում է ծնվել հայ ազգային-ազատագրական շարժման ռահվիրա **Արաբոն** (**Առաքել**, 1863–1893)
20	Հաթնի			Գյուղում պահպանվել էր ավերակ **Սբ Կարապետ** վանքը (**Հաթնուվանք**): Մի փոքր արևմուտք՝ **Սասնաջրի** ձախ ափին, գտնվում էր **Ժրենց** կամ **Ժռեց** վանքը, որը հայտնի ուխտատեղի էր:
21	Հաղթ (Հաղտ)			
22	Հապշտափ (Հապշտուղ)			
23	Հռեկոնք (Հրեկոնք)	եկեղեցի (ավերակ)		
24	Հռուտ (Հրուտ, Հրունտ)	եկեղեցի (2, ավերակ)		
25	Զորաղբի (Ջրաղբի)			
26	Զորք (Ծորք, Զորիկ)			Գյուղում («**Ծորք**») **Մելքիսեթ** սարկավագի կողմից 1493 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանից պարզվել է տեղի եկեղեցու անունը՝ **Մարսխակ** («ընդ հովանեաւ սուրբ տաճարին **Մարսխակայ**», ասորերեն, հայերեն՝ **Սբ Սահակ**): Այլ տեղեկություններ չեն հանդիպում:
27	Ճակուտ (Ջակուտ)			
28	Շնխեղդ			
29	Շիկալենք (Շիկալինք)			
30	Ռըմկանք (Ռըմխանք)			
31	Ռշնիկ			
32	Վարդենոց (Վարդինոց, Վարդինանց)	եկեղեցի (ավերակ)		Հայտնի էր մոտակա **Վարդինանց Սբ Քառասուն Մանկանց** և **Սբ Խաչ** ուխտատեղիներով: Գյուղի անմիջական հյուսիսարևմտյան հարևանությամբ գտնվում էր երբեմնի հայաբնակ **Մանշկուտ** գյուղը:
33	Վիժնանք (Վիժնակ)			
34	Տնգետ(ք)	եկեղեցի (ավերակ)		
35	Փիրշենք	Սբ Խաչ	1	
36	Քարկից			

10. Հազո-Խաբլջոզ կամ Հազվան

Այս գավառը գրավում էր Սասուն պատմաաշխարհագրական մարզի արևելյան խոշոր հատվածը **Խարզանաջրի** (**Արզան**) և **Սասնաջրի** միջագետքում: Սկզբնաղբ-յուրներում կոչվել է նաև **Հազու** կամ **Սուրցվոց երկիր**: Սահմանակից էր հյուսիսից **Մարութասարի** լեռնազանգվածով՝ **Մարաթուկին**, արևելքից՝ **Քարմլեճ** լեռնագա-գաթով և **Խարզանաջրի** գետահովտով՝ **Մոտկանին** և **Խարզանին**, հարավից՝ վերջինիս **Բառընջ** գյուղախմբին (թրք. nahiye), արևմուտքից՝ **Սասնաջրի** հունով՝ **Խիանքին** և **Փսանքին**: Գավառը հռչակված էր իր մեծաթիվ աղահանքերով (հիմնա-կանում հեղուկ տեսքով): Կենտրոնը **Խարզան** գետից 3.2 կմ արևմուտք, վերջինիս աջակողմյան **Շաթ** (**Շատ**, նաև **Մարջու** կամ **Մերգիի գետ**) օժանդակի ափին՝ լեռնային տեղանքում, կառուցված **Հազո** կամ **Հզու** (**Խզու**, նաև **Հզվա քաղաք**) բերդաքաղաքն էր: Մինչև 15-րդ դ. **Հազոն**՝ իր շրջակայքով, **Թոռնիկյան-Զորդվանելյան** իշխանների տիրույթներից էր: Սակայն քրդական ցեղերի աստիճանական ներթափանցումը բացասական հետևանքներ ունեցավ: Քուրդ պատմիչ **Շարաֆ-խան Բիթլիսիի** կողմից գրանցված ավանդազրույցի համաձայն՝ Բիթլիսի քուրդ ավագանու ներկայացուցիչներին (ամենայն հավանականությամբ՝ **Այյուբյանների** շառավիղներից) 15-րդ դ. հաջողվել է տիրանալ Սասունի արևելյան շրջաններին՝ քաղկեդոնական **Դավիթ** իշխանից խլելով նաև **Հազո-Հզուն** (ըստ **Շարաֆ-խանի՝ Սասունի բերդը**): Հետայդու այն դարձավ **Սասունի** (**Հազո**) կիսանկախ իշխանության (օտար հորջորջմամբ՝ hükümet) կենտրոնը: Վերջինս, որը տարածվում էր **Մարութասարից** մինչև **Արևմտյան Տիգրիս**՝ ներառելով նաև վերջինիս աջափնյակում տարածվող **Հիսն-Քեյֆի** շրջանը, 16-րդ դ. կեսերից ընդգրկվեց նորաստեղծ **Դիարբեքիրի նահանգի** (թրք. eyâlet) կազմում: Օտար տիրապետության հաստատումը, սակայն, հայերին լիովին դուրս չմղեց կառավարման ոլորտից: **Սասունի** կամ **Հազոյի** իշխանությունում նրանք օգտվում էին լայն արտոնու-թյուններից, ազատված էին հարկերից, զերծ էին կրոնական հալածանքներից: Ավելին, այստեղ, ինչպես նաև հարևան Մարաթուկում հաստատված քրդական **բալաքցի** կամ **բլբքի** ցեղի ստորաբաժանումները (քրդ. qâbilâ, գլխավորները՝ **մուսեցի**, **սառմնցի, սասունցի** կամ **սուսանի**) բարեկամական հարաբերությունների մեջ էին տեղաբնիկ հայերի հետ, գերազանցապես արաբախոս էին, շատերը լավ գիտեին նաև հայերեն և զերծ էին կրոնական մոլեռանդությունից: Ընդ որում, որոշ տվյալներ թույլ են տալիս ենթադրելու, որ նրանց ցեղային վերնախավն ուներ հայկական ծագում: Համանման իրավիճակ էր նաև **Հազո-Խաբլջոզին** հարավից սահմանակից և իշխանության կազմի մեջ մտնող **Խարզանում (Արզան)**, ուր մինչև 19-րդ դ. 1-ին կեսը գոյություն ուներ եզդիահայկական ինքնավարություն (տե՛ս իր տեղում): **Հազո** (**Հզու**) բերդաքաղաքը 18-րդ դ. վերջին ուներ 1000 տուն բնակիչ՝ կեսը հայեր: Սակայն 19-րդ դ. 40-ական թթ. օսմանյան պետության կողմից քրդական և հայկական իշխանությունների ոչնչացման հետևանքով այն զգալիորեն անշքացավ, իսկ բնակչության մեծ մասը հեռացավ այլևայլ վայրեր: Մինչև 19-րդ դ. 70-ական թթ. վերջը **Հազոն** (**Հզու**) Դիարբեքիրի նահանգի (թրք. vilâyet) **Սղերդի** սանջակի **Սասուն** գավառի (թրք. kaza) վարչական կենտրոնն էր: 1878 թ. վերջինս անցավ նորակազմ Բիթլիսի (Բաղեշ) նահանգին, բայց իր նախկին կարգավիճակը պահպանեց մինչև 1890-ական թթ.: Ճիշտ է, Սասունի 1894 թ. հերոսամարտից հետո վերոհիշյալ նահան-գի Մուշի սանջակի կազմում ընդգրկված Սասունի գավառի կենտրոնը՝ հեռահար որոշակի նպատակներով, փոխադրվեց հայկական ինքնավար գավառների սահմա-նագլխին գտնվող **Ղաբլջոզ** կամ **Խաբլջոզ** ավան (թրք. Kabilcevaz, այժմ՝ Sason), սակայն **Հազոն** չկորցրեց իր կարևորությունը: Ըստ էության՝ այն երկրամասի միակ քաղաքային բնակավայրն էր, արհեստագործական կենտրոնը: Բարձր ժայռոտ վայրում գտնվում էր **Հազոյի Սուրբ Աստվածածին** հսկա եկեղեցին: Վերջինս կոչվում էր նաև «**Քաջ Մուշեղ**»՝ ի պատիվ այստեղ թաղված մի հայ իշխանավորի

(տապանաքարը գտնվում էր եկեղեցու խորանի առջև): **Հազոյում** (**Հզու**) գործում էր Կ. Պոլսի **Միացյալ ընկերության** կողմից դեռ 1880-ական թթ. բացված վարժարան՝ տղաների և աղջիկների համար նախատեսված բաժիններով: Այն Սասունի ամենամեծ ուսումնական հաստատությունն էր, ուր Մեծ եղեռնի նախօրեին դասավանդում էին շուրջ մեկ տասնյակ մանկավարժներ: Ճարտարապետական ուշագրավ կառույց էր **Հազոյի** ժայռափոր բերդը, որին կից պահպանվել էին կիսավեր 2 մատուռներ: Բերդաքաղաքի մոտ կար «**Հաջր-էլ-բեկ**» անունով մի հսկա քարակարկառ, որի վրա երևում էին ջրհորդանների հետքեր: Ժողովրդի կարծիքով՝ ինչպես այս, այնպես էլ ոչ շատ հեռու ցցված «**Սլըմբուկ քարը**» «երկնքից էին ընկել» (արդյոք երկնաքարեր էին): 1914 թ. բերդաքաղաքն ուներ շուրջ 500 տուն բնակիչ, որի գերակշիռ մեծամասնությունը կազմում էին հայերը՝ 250-300 տուն (այլ տվյալներով՝ 350 տուն) կամ 2000-2500 անձ:

Մեծ եղեռնի նախօրեին **Հազո-Խաբլջոզի** գավառակի հայ բնակչության թիվը՝ բերդաքաղաքի հետ, անցնում էր 8000-ից: Հայաշատությամբ աչքի էր ընկնում մասնավորապես **Կուսգետ** կամ **Կուցգետ** գյուղախումբը, որի 1 տասնյակի հասնող գյուղակ-«թաղերը» սփռված էին **Խարզան** գետի (այդ հատվածում՝ «**Ջոջ**» **կամ Սղունդա գետ**) **Կուսգետ** (բրբռ. **Գուսկետ**) **կամ Կուցգետ** վտակի վերին ձորահովտում: Ընդ որում, **Կուսգետի** գյուղախմբի անբաժան մասն էր համարվում նաև նույն գետակի ստորին հովտում (այդ մասում՝ **Ասսու գետ**) ընկած **Ասսին**: Տեղի ռազմունակ հայերը և քրդերը համարվում էին միասնական ցեղի («**աշիրեթ**») անդամներ՝ օգտվելով զգալի ներքին ինքնուրույնությունից և ազատությունից:

1915 թ. Հազո-Խաբլջոզի գավառակի հայ բնակչությունը ենթարկվեց զանգվածային բնաջնջման: Առանձնակի ծանր կորուստներ կրեց **Հազո** (**Հզու**) բերդաքաղաքի հայությունը: **Հազո-Խաբլջոզի** վերապրած բնակիչների զգալի մասը ստիպված էր տեղափոխվել Արևելյան Հայաստան: Նրանց սերունդներն այժմ բնակվում են **ՀՀ Արագածոտնի** մարզի **Ուջան**, **Ներքին Բազմաբերդ** և այլ գյուղերում: Սակայն գավառակի ոչ բոլոր հայերն են լքել բնօրրանը: Մինչև 1960-ական թթ. վերջը **Ասսի**, **Գոմեք**, **Կուսգետ** (առանձին թաղերում), **Հով**, **Նադոբան**, **Նորշեն** գյուղերում և **Ղաբլջոզ** (**Խաբլջոզ,** այժմ՝ Sason) քաղաքում դեռ ապրում էին զգալի թվով հայ ընտանիքներ: Հետագա տասնամյակներին, սակայն, նրանց մեծագույն մասն աստիճանաբար տեղափոխվեց **Ստամբուլ**, թեև առ այսօր պահել է կապը հայրենի եզերքի հետ:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ամերիկ (Այմարո)			
2	Ասսի (Ասի, Ասսու)			Հայտնի էր **Ասսիի** (**Ասսու**) բերդը: Գյուղից շուրջ 3.5 կմ հյուսիս՝ **Կուսգետի** ձախ ափին, գտնվում էր **Ջողուտ** (**Ջողուտ**) երբեմնի հայաբնակ գյուղը: Արծկեցի **Գրիգոր** աբեղան 1502 թ. **Ասիի** տանուտերերի համար («աստուածասէր տանուտէրքն գեղջին **Ասոյ**») մի ճառընտիր է ընդօրինակել:
3	Բաշտըրամ (Պաշտրրամ), Ներքին	Սբ Հակոբ		
4	Բաշտըրամ (Պաշտրրամ), Վերին	Սբ Մինաս		
5	Բնունիկ (Բինունիկ)			
6	Գելիասանան			
7	Գոմեք (Գոմրք)			
8	Դերա			
9	Դերջոջ (Տերձուձ, Ջոջվանք)			Գյուղի անունը հուշում է, որ այստեղ ժամանակին գործել է մենաստան:
10	Ջնգովիկ			
11	Ջոնախեթ			
12	Լրփնեք (Ալրբան՞)			
13	Խաբրլջոզ (Ղաբլջոզ), ավան	Սբ Ստեփաննոս	1	Ավանում եղել է ևս 1 եկեղեցի, որի մասին տեղեկությունները բացակայում են: Սասունի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ շուրջ 400 տուն բնակչով, որից ավելի քան 100-ը՝ հայ: Տեղանունը քրդերեն նշանակում է «**ընկուզագոմ**»:

14	Խորան (Հորանք)			
15	Կգրյա			
16	Կող	Սբ Քառասուն Մանուկ		
17	Կուսգետ (Կուցգետ, Գուսկետ, քրդ. Xîzîxta)	Սբ Աստվածածին		**Կուսգետի** «թաղ»–գյուղակներն էին՝ **Արևկոնք**, **Արմոքնին**, **Գոմք**, **Լիբլանք**, **Կոտրծեր**, **Ներքիթաղ**, **Վերիթաղ** կամ **Վերընթաղ**, **Քարծեր**, **Օղնգեջ**: Գյուղախմբի հայ և քուրդ բնակչության թիվը Մեծ եղեռնի նախօրեին հասնում էր 2600 մարդու, որից հայեր՝ տարբեր տվյալներով, 1200–1500 մարդ (100–150 տուն): **Կուսգետի** արևելյան կողմում բարձրացող **Քարմլեճ** լեռան (2054 մ) գագաթին կար սրբացված աղբյուր–ուխտատեղի, որի հորդացած ջուրն ավազան էր գոյացրել: **Կուսգետի** ակունքների շրջանում՝ **Մարութասարից** արևելք, բխում էր **Վանդիր** հորդ աղբյուրը, որը հայտնի ուխտատեղի էր: Ըստ ավանդության՝ այն առաջացել էր կայծակի հարվածից: **Վանդիր աղբյուրի** մոտ ժամանակին գործել է մենաստան, որի հետքերը չէին պահպանվել:
18	Հով			
19	Զման (Ծման)			
20	Մանկիկ			
21	Մատղի (Մընթղի)			
22	Մերգի (Մարջի, Մերկա)			
23	Մզրեխալք			
24	Մյքեշա(ն)			
25	Մշկատար			
26	Նադրբան			
27	Ներքիթաղ			
28	Նորգեղ (քրդ. Göndênu)	եկեղեցի		Գյուղում կար ևս 1 ավերակ եկեղեցի:
29	Նորշեն			Գյուղը գտնվում էր **Հազոյից** շուրջ 3 կմ հարևելք՝ **Խարզանի** միջին ձորահովտում (այս հատվածում գետը կոչվել է նաև **Նորշինաջուր):** Գյուղում էր գտնվում Սասունի նշանավոր վանքերից մեկը՝ **Սբ Կոնոնոսը** (**Կանանոս,** ժողովրդի շրջանում՝ **Յոթդուռ Կոնոնոս**), որը հայտնի էր նաև **Սբ Խաչ** կամ **Նորշինավանք** անուններով: Մենաստանում պահվել է Քրիստոսի Խաչափայտի մի կտորը, որի համար այն կարևոր ուխտատեղի էր: Ընդ որում, ուխտի էին գալիս նաև քրդերը, քանի որ այստեղ էր գտնվում ժամանակին **Սբ Կոնոնոսը** հարևան քուրդ բեկերից և ավազակաբարո ցեղերից պաշտպանած, բարերար **Շեյխ Օմարի** (**Շեխ Ամար**) շիրիմը: Այդ պատճառով քրդերի շրջանում վանքը հայտնի էր որպես **Dera Şex Âmîr**: **Սբ Կոնոնոսը** 18–րդ դ. ուներ ընդարձակ թեմ, որի մեջ մտնում էր 200 գյուղ **Խարզան**, **Ռեդվան** (**Ռնդվա**ն) **Գուրդիլան** (**Կերտուլան**) և **Հիսն–Քեյֆ** գավառներում: Սակայն 19–րդ դ. 2–րդ կեսին ազդեցությունը կորցրած և նկատելիորեն անշքացած մենաստանը ենթարկվում էր Սասունի **Մատին Սրբո Առաքելո Պետրոսի** կամ **Գոմոց վանքի** վերատեսչությանը: **Սբ Կոնոնոսից** հազիվ 2 կմ հարավ՝ նույն **Խարզանի** և **Շաթի** միախառնման մոտ պահպանվել էին սրբատաշ քարերով կառուցված **Սբ Ատովմյանց** վանքի ավերակները (ժողովուրդը կոչում էր **Քամատուն**): Ըստ ավանդության՝ այստեղ էին նահատակվել նախարարներ **Ատոմ Գնունին** և **Մանաճիհր Ռշտունին**: **Նորշենի** մոտ պահպանվել էին նաև 11–րդ դ. քարաշեն կամրջի ավերակներ:

30	Շելմո			
31	Շեխան(ք)			
32	Պելավ (Բիլավ), Ներքին			
33	Պելավ (Բիլավ), Վերին			
34	Ռաբա (Ռաբաթ)			**Ռաբաթը** հաճախ հիշվում է **Խիանքի** կազմում: Գյուղի շրջակայքի երբեմնի հայաշատության առհավատչյան կարող են հանդիսանալ 19-րդ դ. 70-ական թթ. պահպանված 5 եկեղեցիները (ավերակ կամ ամայի): Գյուղի մոտ՝ իշխող մի բարձունքի վրա կառուցված բերդը տեղացիները վերագրում էին **Գայլ Վահանին**: 20-րդ դ. սկ. **Ռաբաթը Բաքրան** (համանուն վաչկատուն քուրդ ցեղի անունով) գյուղախմբի միակ հայաբնակ գյուղն էր: Շուրջ 2 կմ հվ-արևելք գտնվում էր **Բախոնաս** երբեմնի հայաբնակ գյուղը: Նախկինում հայաբնակ 1 ուրիշ գյուղ՝ **Ջավզիկը** (**Ճաւզիկ**), գտնվում էր **Ռաբաթից** շուրջ 3 կմ հս-արևմուտք: Նշված բնակավայրերը հիշատակվում են **Տարոնի Սբ Հովհաննես** (**Եղրդուտի**) վանքի 1445 թ. նշանավոր կոնդակում:
35	Փափուր(ա)			

Ծնթ. Որոշ աղբյուրներում **Գելհասանան**, **Խորան** (**Հորանք**), **Նորգեղ**, **Շեխան**(**ք**), **Ներքին** և **Վերին Պելավ** (**Բիլավ**) գյուղերը նշվում են **Փսանքի** կազմում:

11. Խիանք

Գրավում էր Սասունի հարավարևմտյան հատվածը՝ տարածվելով հիմնականում **Սասնաջրի** և **Տալվորիկիջրի** միջագետքում: **Խիանքի** մեջ էր մտնում նաև **Տալվորիկիջրի** միջին ավազանի ձախափնյակը՝ **Սպիտակսարից** (արևելքում) մինչև **Կողբի** կամ **Խուլփի** լեռներ ընկած **Փառկայի** ենթաշրջանը: Սահմանակից էր հյուսիսից **Իշխանձորին**, արևելքից՝ **Տալվորիկին**, հարավ-արևելքից՝ **Հոեցվարի** լեռների հարավային ճյուղավորումները կազմող **Բերմի** բլրաշարով՝ **Փսանքին**, հարավից, **Բաթմանաջրի** (**Քաղիրթ**) **Մանիկ** օժանդակի հունով՝ **Սլիվանին** (Դիարբեքիրի նահանգ), իսկ արևմուտքից՝ **Խուլփին**: Ուշ միջնադարում **Խիանքը** մտել է **Կողբի** (**Խուլփ**, **Նահիա**) գավառի մեջ՝ զբաղեցնելով վերջինիս արևելյան հատվածը: Սակայն վերջինիս տարածքում **Սլիվանից** (**Մուփարդին**) քրդական ցեղերի ներթափանցման հետևանքով այդ շրջանն աստիճանաբար առանձնանացավ և գլխավոր՝ խիանցի ցեղի անունն ընդունելով՝ սկսեց կոչվել **Խիանք** (**Խիան**) ու 19-րդ դ. 80-ական թթ. մտնում էր Դիարբեքիրի նահանգի մեջ: 1880-ական թթ. սկզբին նորաստեղծ Բիթլիսի (Բաղեշի) նահանգի կազմում **Խուլփի գավառի** հետ ներառվեց նաև **Խիանքը**՝ դառնալով վերջինիս գյուղախումբը (թրք. nahiye): Կենտրոնը **Փառկա** ավանն էր՝ գավառակի արևմուտքում (տես ստորև):

Ուշ միջնադարում, հատկապես 16-17-րդ դդ., քրդերի ներթափանցումը այստեղ ևս բացասական հետևանքներ է ունեցել: Առանձնապես տուժել է **Խիանքի** հյուսիսարևմտյան **Ջաջասի** (**Ճաճանք**) **գյուղախումբը** (բնակավայրերը սփռված էին **Բազմաքար** (1552 մ) և **Մեյդան** (2078 մ) լեռների միջև ընկած **Տալվորիկիջրի** միջին հովտում): Հայ բնակչությունը հարկադրված հեռացել է նաև գավառակի հարավում ընկած **Խազալիկի դաշտի** գյուղերից: Սրանով հանդերձ, հայերը (6500-7000 մարդ) մինչև Մեծ եղեռն կազմում էին **Խիանքի** բնակչության մեծամասնությունը: Հատկանշական է, որ հայկական բնակավայրերը որպես կանոն ունեին ազգային միատարր կազմ և աչքի էին ընկնում բազմամարդությամբ: Հայաբնակ գյուղերի շարքում առանձնանում էր **Բերմ** կամ **Պերմ** ավանը՝ զգալի ինքնավարությանբ օժտված **Բերմցի** (**Պերմցի**) իշխանական տոհմի կենտրոնը: Հենց **Բերմի** և շրջակա մի շարք այլ գյուղերի հայերի (**Արխունդ**, **Բացի**, **Ռաբաթ**

ևն) մի մասը կարողացավ ինքնապաշտպանության շնորհիվ փրկվել և տեղափոխվել Արևելյան Հայաստան: Ներկայումս նրանց սերունդները գերազանցապես բնակվում են ՀՀ **Արագածոտնի** մարզի **Թալինի շրջանի Դավթաշեն** (**Դավի-թաշեն**) գյուղում:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Արխունդ (Հերենթ)	Սբ Աստվածածին (Սբ Թովմաս)	1	**Արխունդը** հայտնի էր հեղուկ աղի հանքերով: Գյուղից շուրջ 6.5 կմ հս-արևմուտք՝ **Տալվորիկիջրի** ձախ ափին գտնվող **Հրիպ** կամ **Հարիպ** երբեմնի հայաբնակ գյուղը հիշվում է Տարոնի Եղրդուտի Սբ Հովհաննես վանքի 1445 թ. կոնդակում՝ «**Սրէպայ**» ձևով:
2	Արսրկ (Արծվիք, Արքս)	Սբ Աստվածածին		**Արսրկից** շուրջ 5 կմ հվ-արևելք՝ **Տալվորիկիջրի** աջ ափին, գտնվում էր **Մադա** երբեմնի հայաբնակ գյուղը, որը հիշվում է Տարոնի Եղրդուտի Սբ Հովհաննես վանքի 1445 թ. կոնդակում՝ «**Սանտայ**» անունով:
3	Բահմրդանք (Բահմրդա, Պը-համտա)	Սբ Կիրակոս, Սբ Քառասուն Մանուկ	1	1890-ական թթ. ուներ 100 տուն հայ բնակիչ: Համիդյան կոտորածները բացասական հետևանքներ ունեցան նաև այս գյուղի համար, որի բնակչությունը 1914 թ. կազմում էր ընդամենը 30-40 տուն:
4	Բացի	Սբ Աստվածածին		
5	Բերմ (Պերմ, Պարմրզ)	Սբ Աստվածածին, Սբ Գևորգ	1	Գյուղում և շրջակայքում կար ևս 3 ամայի կամ ավերակ եկեղեցի: Հայտնի ուխտատեղիներ էին **Սբ Խաչը** («անձրևաբեր» կոչված) և **Քուռկանք** լեռը, որի ստորոտին էր կառուցված գյուղը: **Բերմը** Սասունի առավել բազմամարդ գյուղերից էր՝ 1914 թ. ավելի քան 1100 բնակչով (120-130 տուն, 1895 թ.՝ 180 տուն): **Բերմից** հս-արևմուտք՝ մինչև **Տալվորիկիջուր,** տարածվում էր **Ջաջասի** գյուղախումբը, որը ժամանակին զուտ հայաբնակ էր: Սակայն 18-19-րդ դդ. վերջինիս բնակավայրերը **խիանցի** քրդերի կողմից աստիճանաբար բռնազավթվել և հայաթափվել էին: Գյուղախմբի նույնանուն կենտրոնը հիշվում է Տարոնի Սբ Հովհաննեսի (Եղրդուտի) վանքի 1445 թ. կոնդակում՝ «**ճաճանք**» անունով (**ճաճանք**> **ճաճանց**> քրդ.-թրք. Jajas կամ Ĉaĉas): 20-րդ դ. սկ. այստեղ պահպանվել էին քարաշեն եկեղեցու ավերակներ: **ճաճաս-ճաճանքի** շրջակայքի հայտնի գյուղերից էին՝ **Գեղանի**, **Հեշտեր** կամ **Վանք**, **Հլիս** կամ **Հելիս** (**Հոիկ**), **Շեխրկան** կամ **Շեխգոմք** (պահպանվել էր ավերակ եկեղեցին), **Սինոռ**: Այս շարքում հարկ է առանձնացնել **Հեշտերը** կամ **Վանքը**, ուր պահպանվել էին ավերակ մենաստանի մնացորդներ, և **Հլիս-Հոիկը:** Վերջիններս հիշվում են Տարոնի Սբ Հովհաննեսի (Եղրդուտի) վանքի 1445 թ. կոնդակում:
6	Գրեխոխի			
7	Խաչուկներ			
8	Կանիփամբու (Գյանջերամիա, Բամբակաղբյուր)			
9	Հրրդա (Արտա, Հարատ)			
10	Հոփեր և Ներքիթաղ			
11	Ձմար (Շմանակ)	եկեղեցի (ավերակ)		
12	Սաղտուն (Սրլտրն)	Սբ Աստվածածին	1	Մինչև համիդյան կոտորածները գյուղն ունեցել է 80-100 տուն հայ բնակիչ: Հետագա տարիներին, սակայն, **Սաղտունը** նկատելիորեն ամայացել էր և 1914 թ. գյուղում ապրում էր 60-70 տուն հայ (շուրջ 600 բնակիչ):
13	Սլոխ (Սլոք, Սլուկ)			
14	Տանձի(կ)			

15	Փառկա (Մեծ Փառկա, Ֆըրկե)	Սբ Կիրակոս	1	Գյուղում կար ևս 2 եկեղեցի, որոնց մասին լրացուցիչ տվյալները բացակայում են: Գյուղը՝ որպես վարչական կենտրոն, 19-րդ դ. 70-ական թթ. բազմամարդ ավան էր (շուրջ 400 տուն հայ բնակիչ): Սակայն համիդյան կոտորածների և զանգվածային արտագաղթի հետևանքով հայերի թիվը խիստ կրճատվել էր՝ 1914 թ. կազմելով ընդամենը 100 տուն:
16	Քարիկ (Խարզըկա)			Չենք բացառում, որ Տարոնի Սբ Հովհաննեսի (Եղրդուտի) վանքի 1445 թ. կոնդակում հիշատակվող «**Փառկայ**» գյուղն է:

12. Խուլփ

Գրավում էր Սասունի արևմտյան ընդարձակ հատվածը՝ տարածվելով **Բաթմանաջրի** (պատմական՝ **Քաղիրթ**) ձախակողմյան **Կողբաջուր** կամ **Խուլփիջուր** վտակի ավազանում: Սահմանակից էր հյուսիսից **Հայկական Տավրոսի Արջիքար** (**Արջքարեր**) ու **Խոզմոսար** ճյուղավորումներով՝ **Մուշին** և **Գենջին**, արևելքից՝ **Անդոկ** լեռնազանգվածից (2812 մ) սկզբնավորվող և դեպի հարավ ձգվող **Կողբի** կամ **Խուլփի** լեռներով (գլխավոր գագաթները՝ **Թաղիգլուխ, Սպիտակ Խազաք**)՝ **Իշխանձորին**, հարավ-արևելքից՝ **Հազո-Խաբլջոզի Բաքրան** կամ **Բաքըրան** գավառակին (նահիե-գյուղախումբ), հարավից, **Բաթմանաջրի Մանիկ** օժանդակի հունով՝ **Հազրոյին** և **Սլիվանին** (**Դիարբեքիրի նահանգ**), իսկ արևմուտքից՝ **Հավեդիկի** կամ **Հավեդանի** լեռնապարով՝ **Փեչարին** և **Հըրդային** (**Գենջի սանջակ**): Կենտրոնը **Կողբաջրի** աջափնյակում գտնվող **Փասուր** կամ **Բասոր** գյուղն էր, որը միաժամանակ Բիթլիսի (Բաղեշ) նահանգի Գենջի սանջակի **Խուլփ գավառի** (թրք. kaza) կառավարիչ-կայմակամի նստավայրն էր: **Խուլփը** հռչակված էր որպես խաղողագործության և գինեգործության կենտրոն:

Խուլփի առաջին հիշատակումը (Ulluba) հասնում է սեպագրական դարաշրջան: Վաղ միջնադարում այն եղել է Մեծ Հայքի **Աղձնիք** աշխարհի **Սանասունք** (**Սասունք**) գավառի կազմում: 8-րդ դ. կեսերից գավառը կազմել է առանձին վարչամիավոր՝ կենտրոն-բերդի (**Կողբաջրի** վերին հովտում գտնվող **Շեն** ավանի մոտ) անունով կոչվելով **Կողբ** կամ «**Կողբայ երկիր**» (արաբ. Կուլբ-Qulb, ասոր. Qulab): Ընդ որում, 15-րդ դ. գավառը կոչվել է նաև **Նահիա:** 12-րդ դ. գավառի տարածքում նշանավոր **Թոռնիկ Մամիկոնյան** իշխանի **Մամիկոն** (**Մամկո**), **Նիկո** և **Սերգո** որդիների կողմից ձևավորվել է հայկական անկախ իշխանություն: Ժողովրդի շրջանում նշված եղբայրները հիշվում էին **Էկին**, **Կիկին** և **Ֆեկին** անուններով, որոնց էին պատկանում **Կողբի** 3 բերդեր: Ի դեպ, գավառում 15-րդ դ. հայտնի էր նաև **Գբրցի** կամ **Ալեքնցի** իշխանական տոհմը, որի ներկայացուցիչները տիրում էին **Կողբաջրի** վերին ավազանում գտնվող **Գաբով արտ** կամ **Կապրնին** (**Գաբռնին**) ավանին և սերում էին էրզրումցի լեգենդար իշխան **Հոլոյից**: Սակայն 15-րդ դարի կեսերից սկսած գավառի տարածք ներթափանցած քրդական ցեղերն աստիճանաբար կարողացան տիրել **Կողբին**, որի հետևանքով տեղի հայության մի զգալի մասը հարկադրված էր տեղափոխվել ավելի անառիկ **Շենիկի**, **Սեմալի** և **Ընկուզաձորի** (**Գյալեգուզան**) շրջաններ՝ այստեղ կազմավորելով **Հոլոյանների** մի նոր ուժեղ հայկական իշխանություն: Այդ գաղթը բացասական հետևանքներ ունեցավ մասնավորապես գավառի հյուսիսային շրջանների համար (**Գաբով արտի** և **Շենի** գավառակներ): Նորեկների կողմից **Կողբի** տարածքում արդեն 16-րդ դ. սկ. ձևավորվեց **Խուլփի** իշխանությունը (օսմանյան թրք. hükümet-i Kulp), որը թեև ընդգրկված էր Դիարբեքիրի նահանգի կազմում, սակայն իրականում անկախ վարչամիավոր էր (որոշ տվյալների համաձայն՝ կենտրոնը **Շուղեքի բերդն** էր՝ **Կողբաջրի** միջին ավազանում, գետի ձախափնյակում): 19-րդ դ. 80-ական թթ. կեսերին **Խուլփը**՝ հարակից մի շարք գավառների հետ, անցել է նորաստեղծ Բիթլիսի (Բաղեշ) նահանգին: Քրդական չդադարող ներհոսքը թեև էապես աղճատել էր գավառի ժողովրդագրական նկարագիրը,

սակայն 20-րդ դ. սկզբներին այստեղ ապրում էր հոծ հայություն: Հատկանշական է, որ գավառում պահպանվել էր միջնադարյան հայ ավագանին, որի ներկայացուցիչները շարունակում էին կրել «իշխան» տիտղոսը և օգտվում էին լայն արտոնություններից: Համիդյան կոտորածների հետևանքները ծանր էին **Խուլփի** հայ բնակչության համար: Մեծ ծավալներ ստացավ արտագաղթը այլ շրջաններ, գլխավորապես Մշո դաշտ: Մեծ եղեռնի նախօրեին հայերի թիվն անցնում էր 5000-ից: Նրանց մեծ մասը զոհ դարձավ թուրքական ցեղասպան քաղաքականությանը: Փոքրաթիվ փրկված ընտանիքների է միայն հաջողվել 1916 թ. անցնել ռուսական բանակի կողմից գրավված Մուշ, որտեղից էլ՝ Արևելյան Հայաստան: Նրանց սերունդներն այժմ ապրում են **ՀՀ Արագածոտնի** մարզի **Ջովասար** և **Ոսկեթաս** գյուղերում: Ի դեպ, վերապրած սակավաթիվ հայեր մնացին բնօրրանում, որոնց ժառանգները մեր օրերում ևս ապրում են գավառի կենտրոն **Փասուրում** (այժմ՝ **Կուլփ**<**Կողբ** քաղաք):

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Ահարոնք (Ահրոնք, Հանձե, օտար հորջորջմամբ՝ Hinzi)	Սբ Յոթն Սանկանց	1	Եկեղեցու պատերին եղել են թռչնաքանդակներ: **Ահարոնքի** դպրոցի դիմաց գտնվում էր 1880-ական թթ. կառուցված 2-րդ եկեղեցին (ցավոք, լրացուցիչ տվյալներ չունենք): Մոտակայքում գտնվում էր կիսավեր **Էզնհարաբերդը:** Գյուղի մերձակայքում նշանավոր էր նաև **Էդինակի** կամ **Հատինակի բերդը** («**Հեթումի բերդ**»): **Կողբաջրի** ափին գտնվել է ևս մի ամրոց՝ օտարահունչ **Կանդալա Հեշին** անունով: Մինչև 1895-1896 թթ. **Ահարոնքը** Սասունի առավել բազմամարդ գյուղերից էր՝ շուրջ 200 տուն հայ բնակչությամբ: Սակայն համիդյան կոտորածների և դրանց հաջորդած գաղթի հետևանքով տեղի բնակչությունը խիստ նվազել էր՝ 1914 թ. կազմելով ընդամենը 70-80 տուն (շուրջ 600 մարդ): **Ահարոնքում** են ծնվել հայ ազատամարտի երևելի դեմքերից **Հրայր Դժոխքը** (**Արմենակ Ղազարյան**, 1864-1904) և **Կարո** (**Կարապետ**) **Սասունին** (1889-1977): Շուրջ 2 կմ հվ գտնվող **Գրնդիս** (**Գիրինդիս**) գյուղը հիշվում է Տարոնի Սբ Հովհաննես (Եղրդուտի) վանքի 1445 թ. կոնդակում «**Կէրէնտիկ**» անունով:
2	Բանոկ (Փանոկ)			
3	Բերոկ (Պեյրոկ)			
4	Գեղերվանք (Գեղրվան)	Սբ Ստեփաննոս (նախկին վանք)	1	Գյուղում հայտնի էին **Սբ Գևորգ**, **Սբ Թուխ Մանուկ** և **Սբ Սարգիս** մատուռ-ուխտատեղիները («լուստուն»): Գյուղը կազմված էր 4 «թաղից»: Մինչև համիդյան կոտորածները, **Գեղերվանքն** ուներ ավելի քան 100 տուն հայ բնակիչ:Սակայն հետագա տարիներին գյուղի բնակչությունը խիստ նվազել է՝ 1914 թ. կազմելով ընդամենը 50 տուն (400 անձ): **Գեղերվանքի** շրջակայքում գտնվող «**Փրփրաղբրան զաղեն**» քարանձավում մի քանի տասնյակ գյուղացիներ դիմադրել են ջարդարարներին և փրկվելով՝ տեղափոխվել Մուշ, ապա՝ Արևելյան Հայաստան:
5	Գոման (Կրման)			
6	Գրեմորի			Առանձին աղբյուրներում գյուղը նշվում է **Խիանքի** կազմում:
7	Դալավաքաժե (Տալավեգոմ)			Գյուղից հարավ, **Անդոկի** ստորոտին փռված գեղատեսիլ դաշտում գտնվում էր երբեմնի հայաբնակ **Շեն** ավանը, որի «թաղ»-գյուղակները սփռված էին **Կողբաջրի** վերին հոսանքի (այդ հատվածում՝ **Բլուր**), ձորահովիտներում: **Դալավաքաժեն** ևս **Շենի** «թաղերից» էր:
8	Դուդարիան (Դուդերվան)			

9	Էհուբ (Իհուպ)	Սբ Աստվածածին, Սբ Սարգիս	1	Գյուղից շուրջ 4 կմ հս-արևմուտք բարձրացող **Ռախման** կամ **Ռահանիկ** լեռան արևելյան ստորոտին գտնվում էին **Ռախմանասարի բերդի** ավերակները: Նույն լեռից արևմուտք գտնվում էին **Արխադին** և **Կակվաս** կամ **Գագվաս** երբեմնի հայաբնակ գյուղերը: Դրանցից վերջինը հիշվում է Տարոնի Սբ Հովհաննես (Եղրդուտի) վանքի 1445 թ. կոնդակում («**Կակուաս**»):
10	Ընձքար	Սբ Գևորգ	1	**Ընձքարը** բաղկացած էր մի քանի «թաղ»-գյուղակներից, որոնց հիմնական մասը սփռված էր **Կողբաջրի** աջակողմյան **Ընձքարիջուր** օժանդակի ձորահովիտներում: Որոշ «թաղեր» ընկած էին **Կողբաջրի** ձախափնյակում: **Ընձքարի** գյուղակներն էին՝ **Բանոկ** (համարվել է նաև առանձին բնակավայր), **Խեչեր** կամ **Խաչուկներ** (քրդ. Xaçuka), **Ձմաթաղ**, **Ձորավանք** (քրդ. Sorevank), **Մազրեք**, **Մնրրձոր** (որպես առանձին գյուղ հիշված է Տարոնի Եղրդուտի կամ Սբ Հովհաննես վանքի 1445 թ. հայտնի կոնդակում), **Ռմբիկ**, **Վանք** (քրդ. Derik, նույնպես հիշված է վերոհիշյալ կոնդակում), **Ցուրտնակ**: **Վանք** «թաղում» էր ուշագրավ ճարտարապետությամբ կառուցված **Սբ Գևորգ** վանքը (բրբռ. **Ընցքրա Սբ Գևորգ**), որի տաճարի ներսում էր գտնվում **Սբ Գևորգ զորավարի** մարմարակերտ շիրիմը: **Սբ Գևորգ** ուխտի էին գալիս ոչ միայն հայերը, այլև քրդերը: Գյուղի մոտ գտնվել է մի ծակված մեծ քար, որին ուխտի եկած ամուլ կանայք պարտավոր էին «անցնել» վերջինիս անցքով՝ զավակ ունենալու նպատակով: **Ընձքարը** Սասունի առավել բազմամարդ բնակավայրերից էր՝ 1914 թ. 1200 հայ բնակչով:
11	Խճրք (Կրժիկ)			
12	Կապրնին (Գաբռնին, Գաբով արտ)			
13	Կոկնաձոր (Կոյնաձոր)			Համարվում էր **Ընձքարի** «թաղ»-գյուղակներից:
14	Մալա Ավդո			
15	Շուղեք (Շուղիկ, օտար հորջորջմամբ՝ Şinaz)	Սբ Աստվածածին	1	Գյուղի մոտ կար կիսավեր բերդ: Մինչև համիդյան կոտորածները **Շուղեքը** բավական բազմամարդ գյուղ էր և որոշ տվյալներով՝ ուներ 70 տուն հայ բնակիչ: Սակայն կորուստների և զանգվածային արտագաղթի հետևանքով 1914 թ. գյուղում մնացել էր ընդամենը 22 տուն: Շուղեքի շրջակայքում հայտնի էին հայանուն որոշ բնակավայրեր, ինչպես՝ **Խնձորակ** (օտարահունչ՝ Hınzırak), **Ձորթաղ** (քրդ. Taĝa Nâwâle), **Նեխիկ**: **Շուղեքից** շուրջ 3.8 կմ հս-արևմուտք՝ **Կողբաջրի** ձախ ափին գտնվում էր 1870–1880-ական թթ. Խուլփի վարչական կենտրոն **Ներջիք** (**Ներջքի**) ավանը (նախկինում՝ հայաբնակ):
16	Փասուր (Բասոր)	Սբ Հակոբ	1	**Փասուրի** շրջակայքում կային մի քանի երբեմնի հայաբնակ գյուղեր՝ **Բերդան** (քրդ. Gâliye Âliyan), **Հարբաթ** («**Հարուիթոյ**» ձևով հիշվում է Տարոնի Եղրդուտի կամ Սբ Հովհաննես վանքի 1445 թ. հայտնի կոնդակում), **Մասրթո** (**Մնրրթո**): Թե՛ **Փասուրում** և թե՛ շրջակայքում պահպանվել էին 7 եկեղեցիների ավերակներ:
17	Փոշկանցիք (Գյալեպոշկանց)			
18	Քևե (Քուե, Քևակ)			Գտնվում էր **Ընձքարիջուր** վտակի աջակողմյան օժանդակի ձորահովտում՝ **Գոմձորի** փոքր լեռնապարից հվ: Գյուղի շրջակայքում կային հայանուն գյուղակներ, ինչպես **Ծմակ** (օտար հորջորջմամբ՝ Zimak), **Կից** (օտարահունչ՝ Kiz, հանդիպում է Տարոնի Սբ Հովհաննես վանքի բազմիցս հիշատակված կոնդակում) ևն:

Ծնթ. **Խուլփի** հարավային սահմանագլխին՝ վարչականորեն հարևան **Սլիվանի** (**Մուփարղին**, **Միյաֆարկին**) գավառի կազմում գտնվող **Մալաբերի** կամ **Մալաբա-դո** գյուղի մոտ՝ **Քաղիրթ** կամ **Բաթմանաջուր** գետի վրա, կառուցված էր հռչակա-վոր **Բաթմանի** միաթռիչք հսկա կամուրջը: Վերջինիս անունը կապվում է լեգենդար **Բաթման** շինարարի հետ: Ավանդության համաձայն՝ վարպետը կամրջի հիմքում՝ վերջինիս մեծ ամրություն տալու նպատակով, «շարել» է իր սիրելի կնոջը, որից հետո նետվել է գետը, որն իր պատվին սկսել է կոչվել **Բաթմանաջուր**:

13. Գազկու գավառ (Գավառ) կամ Հավեդան (Հավեդիկ)

Գազկու գավառը գտնվում էր **Բաթմանաջրի Կողբաջուր** (**Խուլփիջուր**) և **Սա-ռում** օժանդակների միջագետքում, **Խուլփից** արևմուտք: Համարվում էր վերջինիս գավառակներից մեկը: Հարավում **Գազկու գավառի** սահմանը հասնում էր մինչև վերոհիշյալ 2 վտակների միախառնման շրջան, ուր **Մանիկի** վրա՝ **Բաղրկան** գյու-ղախմբի **Գրմհոկ** գյուղի մոտ, կառուցված էր Սասունի 2-րդ նշանավոր քարաշեն **Գերթոյի կամուրջը** (քրդ. Pîra Gerto): Հարավ-արևմուտքից **Գազկու գավառը** սահ-մանակցում էր Դիարբեքիրի նահանգի **Հազրո-Միհրանիկի**, իսկ հս-արևմուտքից, **Հավեդիկի** կամ **Հավեդանի** փոքր լեռնապարով՝ Բիթլիսի նահանգի **Փեչար** գյու-ղախմբերին: Գավառակի կենտրոնը **Հավեդիկի** լեռնապարի հարավային ստորոտին գտնվող **Գազկե** (**Գասկե**) կամ **Կասգե** ավանն էր: Ուշ միջնադարում այն բավական բազմամարդ բնակավայր էր: 17-րդ դ. թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի տվյալ-ներով՝ վերջինս («**Ջեսկե**») 2000 տուն բնակչությամբ գյուղաքաղաք էր, զինագոր-ծության կենտրոն: Ավելին, 17-18-րդ դդ. **Գազկեն Իսյան** կամ **Իսքյան** (անվանումը բխում է արաբ.-թրք. «ապստամբություն» բառից) հայ-դմլիկ-քրդական միացյալ ինք-նիշխան համադաշնության (կոչվել է նաև «**Պանօքցոց երկիր**») կենտրոնն էր**:** Այս ուշագրավ կառուցվածքով իշխանությունը, Ղ. Ինճիճյանի տվյալների համաձայն, **Գազկու գավառից** բացի 18-րդ դ. վերջին ընդգրկել է նաև հարևան **Հազրո-Միհ-րանիկի** և **Լրճեի** (**Իլիջե**) շրջանները: Այն կառավարվում էր «**Իսքյան-աղա**» տիտղոսը կրող կառավարչի կողմից, որը չէր ենթարկվում Դիարբեքիրի թուրք բեյլերբեյ-փա-շային: Ուշագրավ է, որ վերջինիս զորքում տեղի մահմեդականները («տաճիկք»՝ ըստ Ղ. Ինճիճյանի) հիմնականում ծառայում էին հեծելազորում, իսկ հայերը՝ հետևակում: Ընդ որում, բացառապես հայերից էին կազմված իշխանության զինված ուժերի բաղ-կացուցիչ մասը համարվող ռմբանետների («**ռմբաձիգք, այսինքն թիւֆէնկճիք**», իմա՝ **grenadier**) ջոկատները: Հայկական և քրդական կիսանախ իշխանությունների վերացումը բացասական հետևանքներ ունեցավ նաև **Գազկու գավառի** համար, մեծ ծավալներ ընդունեց նորանոր վաչկատուն քրդերի (մասնավորապես բադրկցի կամ բադրկան) ներթափանցումը: Հետևանքը վարչամիավորի տարածքի զգալի մասի հայ-թափումն էր: Ի դեպ, խիստ տուժեց նաև տեղի դմլիկ (զազա) բնակչությունը: 1880-ական թթ. **Գազկու գավառը**, լուծվելով հարևան **Խուլփի** մեջ, անցավ նորաստեղծ Բիթլիսի նահանգին:

Համիդյան կոտորածների ժամանակ տեղի հայերը լուրջ կորուստներ կրեցին, իսկ 1915 թ. գրեթե ամբողջությամբ բնաջնջվեցին: Հատկանշական է, սակայն, որ նույնիսկ մեր օրերում գավառակի օտարացեղ բնակչության շրջանում գործածելի է **Գավառ** հայեցի անվանումը:

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Գազկե (Գասկե, Կասգե, օտար հորջորջմամբ՝ Cıksı:)	Սբ Թեոդորոս	1	Ավանից շուրջ 9 կմ հվ-արևմուտք բարձրանում է **Դերառաշ** սարը: Վերջինիս քրդերեն անունը՝ (Derafâş), որը նշանակում է «սև վանք», հուշում է, որ այստեղ ժամանակին գոյություն է ունեցել հայ-կական մենաստան: **Գազկեն** Սասունի առավել բազմամարդ բնակավայրերից էր և 1914 թ. ուներ շուրջ 1300 բն., որից 760-800-ը (100 տուն)՝ հայեր:

2	Թրլթավ (Թրլթրֆ) Դլերեթավ)			**Թրլթավը** («**Տրլերէթաւ**»), և **Թիախսը** («**Ապտա-կէս**», օտարահունչ՝ **Tiyakus**)՝ **Գազկեի** հետ, հիշվում են Տարոնի Սբ Հովհաննես (Եղրդուտի) վանքի 1445 թ. նշանավոր կոնդակում: Նշված բնակավայրերի շարքում հանդիպում է նաև «**Ապիզողէ**» գյուղ: Որոշ տվյալներով, վերջինս **Գազկեի** «թաղերից» մեկն էր և հայտնի էր նաև **Ավիզողե** անունով:
3	Թիախս			
4	Խրուջ (Խոռոչ)			
5	Հավրրք			
6	Մալա Գրքե			
7	Մաշտակ	Սբ Կիրակոս		

14. Խարզան (Ղարզան)

Խարզանի գավառն ընկած էր Բիթլիսի (Բաղեշ) նահանգի հարավային մասում՝ հիմնականում ընդգրկելով **Խարզանաջրի** (**Արզան**) ստորին, մասամբ՝ միջին ավազանի շրջաններում տարածվող **Բշերիկի** արգավանդ դաշտի արևելյան հատվածը: Սահմանակից էր հյուսիսից՝ **Հազո-Խաբլջոզին** և **Մոտկանին**, արևելքից՝ **Բաղիշոջրի** (թրք. Bitlissuyu) կիրճով՝ **Շիրվանին** (**Շերվանք**) և **Սղերդին**, հարավից՝ **Արևմտյան Տիգրիսի** հունով՝ **Սավուրին** և **Հիսն-Քեյֆին**, իսկ արևմուտքից՝ **Բշերի-կին** (**Բիշերի**, վերջին 3-ը՝ Դիարբեքիրի նահանգում): Պաշտոնական վարչական բաժանումով գավառը թեև ընդգրկված էր **Սղերդի սանջակի** կազմում, սակայն ավանդաբար դիտվել է Սասունի բաղկացուցիչ մասը (**Դաշտային** կամ **Ներքին Սասուն**): Խարզանը, հարևան Հազո-Խաբլջոզի նման, հարուստ էր աղահանքերով: Հանդիպում էր նաև նավթ, ինչի մասին վկայված է դեռ «**Աշխարհացոյց**»-ում: Գավառի կենտրոնը **Խարզանաջրի** ձախափնյակում՝ գետից շուրջ 10 կմ արևելք գտնվող **Զոխ** կամ **Զոկ** ավանն էր, որը նորագույն ուսումնասիրությունների համաձայն համապատասխանում է պատմական **Աղձնիքի Արզան** (ասոր. **Շուկառաբա**) քաղաքին: 19-րդ դ. կեսերին **Զոխը**, որն առանձին աղբյուրներում նշվում է որպես գյուղաքաղաք, զուտ հայաբնակ էր և ուներ 200 տուն բնակիչ: Սակայն քրդերի չդադարող ներհոսքը **Խարզանի** տարածք զգալիորեն ամայացրեց բնակավայրը՝ աղճատելով նաև վերջինիս ազգային նկարագիրը: 1914 թ. գավառի կենտրոնի բնակչության թիվը հազիվ էր գերազանցում 200 տունը: Այնուամենայնիվ հայերը **Զոխում** շարունակում էին կազմել մեծամասնություն՝ որոշ տվյալներով 150 տուն: Նրանք ունեին **Սբ Սարգիս** անունով եկեղեցի և տարրական դպրոց՝ 30 աշակերտով: **Զոխի** մոտ պահպանվել էր հնագույն կիսավեր բերդը («**Խարզանա բերդ**»), որին կից՝ գետափին բարձրացող մի ապառաժի գագաթին, երևում էր **Սուրբ Աստվածածին** (՞) կամ **Դերակերի** վանքը:

Խարզանը 17-18-րդ դդ. եղել է **Հազոյի** (նաև՝ **Հզու**) իշխանության կազմում: Սակայն գավառն ուներ յուրահատուկ ինքնավար կարգավիճակ, քանի որ տեղի բնակչությունը գրեթե առանց բացառության կազմում էին հայերը, ասորիները (հակոբիկյան-յաղուբի և նեստորական) և եզդիները: Վերջիններս բաժանվում էին **աբըկան** (եզդիերեն՝ abîka) և **նակիբան** կամ **նախիբան** (եզդիերեն՝nâqiba) ցեղերի: 19-րդ դ. 1-ին երեսնամյակը՝ եզդի ցեղապետ **Միրզա աղայի** կամ **Շեյխ Միրզայի** (ժողովրդի շրջանում՝ ավելի հայտնի **Միրզըք** անունով) կառավարման տարիները, **Խարզանի իշխանության** առավել հզորության ժամանակահատվածն էր: **Միրզա աղային** հաջողվեց ընդարձակել վերջինիս տարածքը տիրելով նաև **Սղերդին՝ Ազնվացձորի** ստորին հոսանքի շրջանում (այս մասում՝ **Գազր** կամ **Կեզեր**, նաև **Խազլ**): Իշխանության կենտրոնը **Զոխից** շուրջ 22 կմ հարավ, **Խարզանաջրի** ձախ ափին գտնվող **Ռեդվան** կամ **Ռնդվան** գյուղաքաղաքն էր, որը

19-րդ դ. 30-ական թթ. ուներ 800 տուն բնակիչ, հիմնականում եզդիներ, նաև հայեր և ասորիներ: Ուշագրավ է, որ **Միրզա աղային** կից գործել է խորհուրդ, ուր հավասար իրավունքներ ունեին ինչպես եզդի, այնպես էլ հայ, նաև ասորի ավագանին ու հոգևորականությունը: Մեզ է հասել եզդիների ու ասորիների կողմից **«Քեշե Պոլե» անունը ստացած** (ասոր. qâšâ-«քահանա») **Ռեդվանի** ավագ քահանա («աւագերեց») **Տեր Պողոսի,** և **Միրզա աղայի** ռազմական համագործակցությունը նկարագրող պոեմը, որը գրի են առել հայ մշակույթի մեծ երախտավորներ **Խ. Աբովյանն** ու **Գ. Սրվանձտյանցը**: 1828 թ. հայ-եզդիական միացյալ 10000-անոց զորամիավորումը ջախջախել և իշխանության տարածքից դուրս է շպրտել մահմեդական մոլեռանդ հոգևորականության հրահրմամբ «անհավատների» դեմ «սրբազան պատերազմի» դուրս ելած քուրդ ավագանու 30 000-ը գերազանցող բանակը, որն առաջնորդում էին քուրդ **Շեյխ Ղասըմը** և հարևան **Բոհտանի** ցեղապետ **Միր Մեհեմմեդը**: Ըստ էության, հարավարևմտյան Հայաստանում 19-րդ դ. 1-ին տասնամյակներին գոյություն է ունեցել եզիդահայկական (քրիստոնեական) կիսանկախ իշխանություն, որը գրեթե չէր ճանաչում թուրք-քրդական գերիշխանությունը: Ավելին, **Խարզանի (**կոչվում է նաև **Սղերդի)** իշխանությունում հաստատված էր էթնոկրոնական «հանդուրժողականություն» (սա անգլիացի նշանավոր հնագետ և ճանապարհորդ **Օ**. **Լայարդի** բնութագրումն է), ինչն անհավանական էր շրջապատող մահմեդական բռնակալության պայմաններում: Հատկանշական է, որ 1828 թ. օգոստոսին ռուսական բանակի կողմից **Բայազետի փաշայության** գրավումից անմիջապես հետո **Միրզա աղան** փորձել է կապեր հաստատել ռուսների հետ՝ առաջարկելով իր ռազմական համագործակցությունը: Այդ նպատակով նա Պասկևիչի մոտ է ուղարկել ռեդվանցի **Կիրակոս Առաքելովին** (իմա՝ **Առաքելյանց**)՝ ուշագրավ տեղեկություններ հաղորդելով իր իշխանության զինական ուժի վերաբերյալ, որը կազմում էր 1500 հեծյալ և 5000 հետևակ: Նմանատիպ փորձեր են կրկնվել նաև 1830 թ., երբ հայերեն գրված հատուկ նամակով Էրզրում առաքվեցին նույն **Կիրակոսը** և մեկ այլ ռեդվանցի՝ ուսուցիչ **Պետրոս Խազարովը** (իմա՝ **Ղազարյանց**): Քանի որ պատերազմն արդեն ավարտվել էր, **Միրզա աղայի** առաքելությունը որևէ հաջողության չհասավ: Ավելին, օգտվելով 1830-ական թթ. Օսմանյան կայսրության նկատմամբ ռուսական քաղաքականության էական փոփոխությունից ու բացահայտ հովանավորությունից՝ Բ. Դուռը շտապեց «կարգուկանոն» հաստատել արևելյան ըմբոստ տարածքներում և 1833-1836 թթ. առաջին լուրջ քայլերը ձեռնարկեց՝ ընկճելու կիսանկախ իշխանությունները: 1833-1834 թթ. **Միրզա աղան** ևս ստիպված էր ճանաչելու օսմանյան գերիշխանությունը, որի հետևանքը **Ռեդվանում** թուրք կառավարչի (թրք. kaymakam) նշանակումն էր: Իսկ 1837 թ. Դիարբեքիր կանչված եզդի ցեղապետը դավադրաբար սպանվեց: Նրա դիակը թիկնազորի զինվորները կարողացան տեղափոխել **Ռեդվան** և հողին հանձնել: Այս երևելի անձնավորությունը հավասարապես սիրված էր ինչպես ազգակիցների, այնպես էլ հայերի կողմից: Ի նշան երախտագիտության՝ ռեդվանցի հայերն ավանի եկեղեցու ճակտոնին արձանագրություն էին թողել՝ նրա հոգու հանգստության համար: **Միրզա աղայի** մահից հետո **Խարզանի** (**Սղերդ**) իշխանությունը սկսեց թուլանալ: Վերջնականապես այն ոչնչացնելու նպատակով, թուրքական իշխանությունները դիմեցին վաղուց արդեն փորձված միջոցին՝ բացեիբաց խրախուսելով **սլիվանի**, **ալմանցի**, **փանջնարի** վաչկատուն քրդերի **Խարզանում** և շրջակա գավառներում վերաբնակեցումը: Դա առաջ բերեց ոչ մահմեդական ժողովուրդների զանգվածային արտահոսք: Մասնավորապես եզդիների հիմնական մասն աստիճանաբար հեռացավ Հյուսիսային Իրաք՝ **Սինջար** (եզդ. Ṣângal), հաստատվելով առ այսօր եզդի ժողովրդի հոգևոր կենտրոնը համարվող **Լալըշում** և շրջակայքում**: Խարզանում** նկատելիորեն նվազեց նաև հայերի և ասորիների տեսակարար կշիռը**:** Սրանով հանդերձ, գավառի ոչ մահմեդական բնակչությունը շարունակեց պահել իր գերակշռությունը: Անգամ թուրքական անկատար և զգալիորեն աղավաղված մի վիճա-

կագրության համաձայն, 1870-ական թթ. վերջին **Խարզանի** տարածքում (այն ժամանակ՝ բաժանված Դիարբեքիրի նահանգի **Խարզան** և **Նախիբան** գավառների միջև) ոչ մահմեդականները կազմում էին բնակչության 62-63 %-ը: Ընդ որում, հայերն ամենամեծ էթնիկական տարրն էին (ավելի քան 44 %-ը): Իրականում նրանց թիվը, հետևաբար՝ տեսակարար կշիռը, անհամեմատ ավելին էին:

Համիդյան կոտորածների տարիներին **Խարզանի** հայ բնակչությունը ծանր կորուստներ կրեց, ավերվեցին տասնյակ բնակավայրեր, ահագնացավ արտագաղթը: 1915 թ. տեղի 10000-ից ավելի հայ բնակչությունը ենթարկվեց նոր արհավիրքների և զանգվածային կոտորածի: Խարզանցի վերապրած հայերը (ի դեպ, մեծ մասը քրդախոս էր, կային նաև արաբախոսներ) հիմնականում հաստավեցին **Հյուսիսային Սիրիայի Ղամշլի** քաղաքում (պատմական **Մծբինի** մոտ) և հարևան բնակավայրերում: 1930-ական թթ. կեսերին այստեղ տեղափոխվեցին նաև բնօրրանում մնացած փոքրաթիվ հայերը, ընդ որում, նոր կոտորածից խուսափելու համար (եղել են բազմաթիվ սպանությունների դեպքեր):

#	Բնակավայր	Եկեղեցի	Դպրոց	Այլ տեղեկություններ
1	Աբրկա (Ապրկա)			
2	Այնդար (Անդար)			
3	Այնկասր (Այնխասր)	եկեղեցի		Գյուղից մի փոքր հվ-արևելք հայկական վանքի ավերակ կար:
4	Այնչոբկ (Կանիչոբկ, Կանիշրաղ)			
5	Ավիսկ (Ավիշկ), Վերին			
6	Արանզ (Ալանզ, Առնես)			
7	Բալբկա(ն)			Նորագույն ուսումնասիրությունների համաձայն (**Բ. Հարությունյան**)՝ **Բալբկանից** 2 կմ հվ-արևմուտք՝ **Բաղիշոջուր** (Բիթլիս) գետի ստորին հոսանքի շրջանում, նույն գետի աջափնյակում բարձրացող **Բերդ** (թրք. Kale) լեռնագագաթի շրջանում է գտնվել **Տիգրանակերտ** մայրաքաղաքը: Գետի հանդիպակաց ափին գտնվում էր **Բերդակ** (աղավաղված՝ Birta) գյուղը, ուր ևս պահպանվել էին դեպի **Ձորա պահակ** (**Ռահվայի**) լեռնանցք տանող գլխավոր ճանապարհը վերահսկող ամրոցի մնացորդներ:
8	Բաջրֆթ (Բաջութ)			
9	Բառընջ	եկեղեցի	1	Գավառակի (գյուղախումբ-նահիե) կենտրոն էր: Հիշատակվում է պատմիչ **Փավստոս Բուզանդի** մոտ՝ **Բառաէջ** անունով:
10	Բայսրտուն (Բիսրթուն)			
11	Բարզան (Բըրզան), Ներքին			
12	Բարզան (Բըրզան), Վերին	եկեղեցի		
13	Բըվախս (Պեյվահզ)			
14	Բիմեր(իա)	Սբ Կարապետ (ավերակ)	1	
15	Բինարին			
16	Բիրբկ			
17	Բոլընդ	եկեղեցի (ավերակ)		
18	Բրհա (Պարահ)	Սբ Կիրակոս	1	Գյուղում գտնվում էր **Տղա Մանուկ** անունով մենաստան:
19	Բրուքան (Պրուգան)			

20	Բրքե (Պըրք)			
21	Գառնըք (Կառնըկ)			
22	Գյոզալդարա	եկեղեցի		
23	Գուրի (Գըրի)			Գյուղից շուրջ 4 կմ հարավ-արևելք գտնվում էր **Զոխբերդ** (բրբռ. **Զոխպիրտ,** որտեղից էլ թրք. Zokpirt) երբեմնի հայաբնակ գյուղը, ուր պահպանվել էին ամրոցի ավերակներ:
24	Գրեհասան			
25	Դըմսարըկ	Սբ Աստվածածին		
26	Դըլան (Տրիրան), Ներքին և Վերին			
27	Դլբե			
28	Դուսադրք	Սբ Աստվածածին	1	
29	Զվրնկ			
30	Թախարի (Թաղարի, Թխրեկ)			
31	Թափե (Տապի)			
32	Թոժկան			
33	Թրբեսա(ն), Դրբեսա			
34	Լճիկ (Լիչրկ)			
35	Խալրկան			
36	Խենդուկ (Խրնդուկ)	Սբ Գևորգ		
37	Խուբին (Ղուբին)	եկեղեցի (ավերակ)	1	
38	Կանրկ (Խանրկ)			
39	Կանիխուլ (Ծակաղբյուր)			Մոտակայքում պահպանվել էին 2 հայկական վանքի ավերակներ:
40	Կգրյան			
41	Կուլիկ (Խուլրկ)			
42	Հադհադք	Սբ Գևորգ	1	
43	Հալևի			
44	Հաջրե			
45	Հասհաս (Հըզհըզ)	եկեղեցի		
46	Հարֆաս (Հըրֆազ)			
47	Հաքամի(կ), Ներքին			
48	Հաքամի(կ), Վերին			
49	Հաֆրք			
50	Հրզնամիր	եկեղեցի	1	
51	Հոպ(ե)	եկեղեցի		Մոտակայքում երևում էին հին բնակատեղիի ավերակներ:
52	Ճաման (Ճրման)			
53	Մալագոր			
54	Մալաֆան (Մլըֆան, Մյեհվան)	Սբ Գևորգ (կիսավեր)	1	Գավառակի (գյուղախումբ-նահիե) կենտրոն էր:
55	Մամլահա (Սամլայե, Աղահանք)			
56	Մարմարոնա (Մարմարունա)			
57	Մելիա	Սբ Աստվածածին		
58	Մելիքան (Միլրքան)	Սբ Գևորգ		
59	Մզզե (Մզզի)			
60	Միերի(կ), Ներքին և Վերին			
61	Նազդար			
62	Շեխունուս (Շեյխ Յունուս, Գոռտաշեն, Կոտաշեն)			

63	Ջազնի (Ջրզնե)			
64	Ջալդաքան (Ջալդրկա)		1	
65	Ջրմզարիկ (Ճամեզարրկ, Ոսկե-գետակ)			
66	Ջոմանի(կ)	Սբ Աստ-վածածին		Մոտակայքում պահպանվել էին հայկական վանքի ավերակներ:
67	Ջուվեյզ (Ճվահեզ)	Սբ Աստ-վածածին		
68	Ռեդվան (Ռնդվան)	Սբ Գևորգ (Մար Գոր-գիս), Սբ Հակոբ	1	Ինչպես վերը նշեցինք, **Ռեդվանը** 19-րդ դ. նշանա-կալից բնակավայր էր, **Խարզանի** վարչական կենտ-րոնը, որի համար ժողովուրդն այն դիտարկում էր որպես «քաղաք»: 20-րդ դ. սկ. **Ռեդվանը** թեև խիստ ամայացել ու անշքացել էր, սակայն շարունակում էր մնալ **Խարզանի** առավել բազմամարդ բնակավայ-րերից մեկը և համանուն գավառակի (գյուղախումբ-նահիե) կենտրոնն էր: 1914 թ. հայերը կազմում էին **Ռեդվան** ավանի բնակչության շուրջ 60%-ը՝ ավելի քան 150 տուն:
69	Սալաս (Սալանզ)			
70	Սալիբա, Սլիվա (Խաչ)			
71	Սարիբ			
72	Սևդիկ			
73	Սրբիի(կ)			Ուներ հնագույն բերդ:
74	Սրչան (Սրճան)			
75	Վահսրթ (Վասրթ)	Սբ Հակոբ		
76	Տառնո (Դարոնի)			
77	Տրրշան (Դեշան, Դերշվան)			
78	Փալոնի(կ), Պալունի	Սբ Մինաս		Մոտակա լքված բնակավայրը քրդերը կոչել են Bajeřâ Xîrab (իմա՝ «ավեր քաղաք»): Կարծիք կա, որ այդ բնակավայրն է համապատասխանում պատմական **Աղձնիքի Արզան** կամ **Շուկառաբա** քաղաքին:
79	Քյոթիպ (Ղաթիպ)			
80	Քոխան			
81	Քուրդիկ			

19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին հայաթափ եղած բնակավայրեր՝ **Բադան**, **Բեյբու** կամ **Բեդո**, **Բզեզիա**, **Գոլամասիա** (**Զկնալիճ,** ուներ եկեղեցի), **Դյուշա** (XX դ. սկ. դեռ կիսավեր վիճակում պահպանվել էր երբեմնի հայկական եկեղեցին), **Զիա-բաթ** կամ **Վոսըլղոան** (**Վայս-ուլ-Կարանիե**, մահմեդական հայտնի սրբավայր և ուխտատեղի), **Զընանֆ** (ունեցել է եկեղեցի՝ **Սբ Մինաս**), **Խանըկ**, **Խոշյար** կամ **Կշլա, Խրբեդարե** կամ **Խոբե**, **Խրբեկակո**, **Խրբեմըլա**, **Կանիբարազա** (**Վարազաղբյուր**), **Կանիսորիկ** (**Կանիսուրիկ**), **Համդունան** կամ **Հըմդունա**, **Մարիբ** կամ **Մահրիբ**, **Զըմ-սարիբ**, **Ռաշըկ**, **Սեյիդ Մարիամ** (**Մերիեմ**), **Սեհերդան** կամ **Սարդա**, **Սիլախար** կամ **Սիլախոռ**, **Սուլան Ներքին** (XX դ. սկ. դեռ կիսավեր վիճակում պահպանվել էր երբեմնի հայկական եկեղեցին), **Քուշանան**:

Բ. Բաղեշ (Բիթլիս) քաղաքը

Դեռ վաղ միջնադարում Բաղեշը Հարավային Հայաստանի նշանավոր բերդե-րից էր և ուներ բացառիկ կարևորություն Տավրոսի լեռնաշղթայի վրա գտնվող **Զորապահակ** կամ **Բաղիշո** (ավելի ուշ՝ **Ռահվայի**) լեռնանցքով դեպի **Հայոց Միջ-նաշխարհ** ընթացող ռազմավարական և առևտրական մայրուղու պաշտպանության համակարգում: Ուշ միջնադարում **Բաղեշը** վերածվեց բազմամարդ և վաճառաշահ քաղաքի, որը միևնույն ժամանակ որոշակի ավանդ ունեցավ հայ մշակույթի զար-

գացման գործում: 16-րդ դարից սկսած՝ **Բաղեշ-Բիթլիսը** (նաև **Բեդլիս**) Արևմտյան Հայաստանի խոշոր վարչական կենտրոններից էր՝ քրդական **ռուզակի** (քրդերեն՝ ŕożîqi) ցեղի կիսանկախ իշխանության կենտրոնը, ուր մեծ հեղինակություն ուներ նաև տեղի հայ ավագանին: Քաղաքի վերաբերյալ առաջին մանրամասն տվյալներին հանդիպում ենք նշանավոր Մխիթարյան միաբան **Ղուկաս Ինճիճյանի** խիստ շահեկան աշխատությունում[16]: Ուշագրավ տեղագրական և վիճակագրական տեղեկություններ է հաղորդում բժիշկ **Բարունակ** բեյ **Ֆերուխանի** ուղեգրությունը[17]: Կարևոր է նաև Մխիթարյան միաբան **Ներսես Սարգիսյանի** ուղեգրական բնույթի երկը[18]: Սակայն **Բաղեշի** (Բիթլիս) մասին սկզբնաղբյուրների վիճակագրական և տեղագրական հաղորդումները հաճախանում են առավելապես 19-րդ դ. 70-ական թթ. վերջերից: Այս առումով ուշագրավ են Կ. Պոլսո Հայոց պատրիարք **Ներսես Վարժապետյանի** հանձնարարությամբ կազմված տեղեկագրերը[19]: Հետաքրքիր տվյալներ են հանդիպում նաև **Արիստակես Տկանցի** և **Մանվել Միրախորյանի** ուղեգրական ու վիճակագրական բնույթի երկերում[20]: Վերջիններիս գործերը կարևոր են հատկապես **Բաղեշի** հայկական եկեղեցիների ու վանքերի նկարագրության տեսանկյունից: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև **Գարեգին Սրվանձտյանցի**[21] և **Ա-Դոյի** (**Հովհաննես Տեր-Մարտիրոսյան**)[22] տվյալները: Անշուշտ, մեր ուշադրության կենտրոնում են եղել նաև 1912-1913 թթ. վիճակագրական տեղեկագրերը[23]: Մխիթարյան միաբան **Համազասպ Ոսկյանի**[24] և **Տրդատ Պալյանի**[25] աշխատություններում ամփոփված նյութերի համադրումն օգնել է ամբողջացնել և հարստացնել քաղաքի սրբավայրերի վերաբերյալ տեղեկությունները: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև 19-րդ դ. 80-ական թթ. վերջին **Վանում** Ռուսաստանյան կայսրության փոխհյուպատոս **Ա. Մ.Կոլյուբակինի** աշխատության **Բաղեշին** նվիրված հատորը[26]: Օտար հեղինակներից պետք է հիշել նաև անգլիացի **Հենրի Լինչին**, որի ուղեգրական ուշագրավ աշխատության մեջ զետեղված **Բաղեշի** արժեքավոր սխեմա-քարտեզն ուսումնասիրողին օգնում է ավելի լավ պատկերացնելու այն աշխարհագրական միջավայրը, ուր գտնվել է այս հայաշատ քաղաքը[27]:

Բաղեշը կառուցված էր **Հայկական Տավրոսի** արևելյան հատվածում գտնվող **Զորապահակ** կամ **Ռահվայի** լեռնանցքից շուրջ 26 կմ հարավ՝ **Բաղիշոջուր** (թրք. Bitlissuyu, նաև պարսկերենի ազդեցությամբ, Ab-i Bitlis) գետի գեղատեսիլ ձորահովտում: Քաղաքի բնակելի թաղերն ամֆիթատրոնաձև ցրված էին ինչպես վերոհիշյալ գետի հիմնական հունի երկայնքով, այնպես էլ վերջինիս մեջ թափվող

16 Տես **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին: Ասիա, հատոր Ա, Վէնետիկ-Սուրբ Ղազար, 1806, էջ 167-176:

17 Տես **Բարունակ պէյի Ֆերուխան**, ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան, յամի Տեառն 1847, Կ. Պոլիս, 1876, էջ 142-152:

18 «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս», **հայր Ներսիսի Սարգիսեան** Մխիթարեան վարդապետի, Վենետիկ, 1864:

19 Տես «Արձագանք», Թիֆլիս, 1882, N 4, էջ 56-57: «Մարդաթիւ և հարկահամար Բաղէշոյ վիճակի».- Նույն տեղում, 1882, N 18, էջ 278: «Բաղէշ և իւր շրջակայք».- «Լումայ», Տփխիս, 1900, գիրք Ա, էջ 207-209:

20 Տես **Տկանց Արիստակես**, Այցելություն ի Հայաստան: 1878 թ., Եր., 1985, էջ 93-98: **Մ. Միրախորեան**, Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս Արևելեան Տաճկաստանի, Մասն Ա, Կ. Պոլիս, 1884, 53-59:

21 Տես **Սրվանձտյանց Գարեգին**, Երկեր, հատ. 1, Եր., 1978, էջ 411-414:

22 Տես **Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները, Եր., 1912, էջ 81-83:

23 Տես **Թէոդիկ**, Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղէտալի 1915 տարին, Թեհրան, 2014, էջ 87-90:

24 Տես «Վասպուրական-Վանի վանքերը», Գ մաս, գրեց **դկտ. Հ. Համազասպ Ոսկեան**, Վիեննա, 1947:

25 Տես **Տրդատ եպիսկոպոս Պալեան**, Հայ վանորայք, Սուրբ Էջմիածին, 2008:

26 Տես **Колюбакин А. М.**, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том 1, часть 1, Тифлис, 1888.

27 Տես „Bitlis and Environs", Scale: 1 Mile=1 Inch or 1:63360 (էջ 146-147, ներդիրում).-„Armenia. Travels and Studies", by **H. F. B. Lynch**, Volume II. Turkish Provinces, London-New York, 1900.

Խոցերու կամ **Խոսրովու ջուր** (կոչվում էր նաև **Գոմոց ջուր**, արևմուտքում), **Ծապրկորու** (**Ծապոկոր**) կամ **Պոռի ջուր** և **Ավեխու ջուր** (վերջին 2-ը՝ արևելքում) վտակների զառիթափերին: **Բաղեշը** կազմված էր մի քանի թաղերից.

1. **Թաղի գլուխ** (թրք. Taşmahallesi). գտնվում էր քաղաքի հյուսիսում: Այստեղ էր Բաղեշի առաջնորդանիստ **Կարմրակ** (**Կարմիրակ**) **Սուրբ Նշան** կամ **Սուրբ Կիրակոս** եկեղեցին, ուր պահվում էին **Քրիստոսի Խաչափայտի** (**Կենաց Փայտ**) մի կտորը, որին ագուցված էր կարմիր թանկարժեք քար (որտեղից՝ եկեղեցու անվանումը): Հատկանշական է, որ այն սրբություն էր նաև տեղի մահմեդականների համար: Եկեղեցում պահվել են հայերեն բազմաթիվ ձեռագիր մատյաններ: Այս թաղում էին գտնվում քաղաքի գործարար կենտրոնը և շուկան:

2. **Ծապրկորու կամ Ծապոկորու թաղ** (թրք. Sapkör mahallesi). ընկած էր քաղաքի հուսիսարևելյան մասում՝ համանուն գետի ձորահովտում: Ժամանակին առանձին բնակավայր էր՝ **Բաղեշի** արվարձանը: Հայերն ունեին 2 եկեղեցի.

ա. **Սուրբ Սարգիս,** որի եկեղեցու ավագ սեղանի տակից բխող հորդ աղբյուրը՝ հատուկ ստորգետնյա խողովակներով, ջուր էր մատակարարում քաղաքացիներին:

բ. **Սուրբ Հինգխորան** կամ **Սուրբ Աստվածածին**, որը հայտնի էր նաև **Սրբոց Առաքելոց Պողոսի** և **Պետրոսի** անունով իր ճարտարապետական ոճով այս եկեղեցին հիշեցնում էր **Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց** վանքը:

3. **Ավեր** (**Ավել**) **մեյդան.** գրավում էր քաղաքի հարավարևելյան հատվածը **Ծապրկորու ջրի** ձախակողմյան ձորահովտում: Հայերն ունեին **Սուրբ Գևորգ** անունով մի եկեղեցի: Թաղի մի մասը համանուն իսլամական սրբավայրի անունով կոչվում էր **Կզըլմեջիդ** (թրք. Kızılmescit, «կարմիր մզկիթ»): Ժամանակին այն հայոց **Մայր տաճարն** էր, որը, խլվելով հայերից, վերածվել էր մզկիթի: **Ավեր մեյդանում** գոյություն են ունեցել ևս 2 հայկական եկեղեցիներ՝ **Սուրբ Սիմեոն** և **Սուրբ Կղեմես**, որոնք մոլեռանդ մահմեդականների կողմից նույնպես վերածվել էին մզկիթների: Ավեր մեյդանում էին գտնվում բողոքական հայ համայնքի ժողովարանը և հայախոս **հակոբիկյան** (**յաղուբի**) ասորիների եկեղեցին:

4. **Գոմոց թաղ.** ընկած էր քաղաքի հյուսիս-արևմուտքում՝ գրավելով **Խոցերու ջրի** ձորահովիտը: Անունը կապվում է Բաղեշի արվարձանը համարվող **Գոմք** կամ **Գոմս** գյուղի հետ:

5. **Ջեյդանի թաղ.** տարածվում էր **Գոմոց թաղից** հարավ և ընդգրկում **Խոցերու ջրի** աջափնյակը:

6. **Ավեխու թաղ.** գտնվում էր **Բաղեշի** հարավ-արևելքում՝ ընդգրկելով համանուն գետակի ձորահովիտը:

Բաղեշ քաղաքը հայտնի էր իր վանքերով, որոնք, ինչպես նշեցինք, միջնադարում հայ մշակույթի և կրթության կարևորագույն կենտրոններ էին: Առավել նշանավորն **Ամլորդվո** (**Ամիրդոլու**) **Սուրբ Հովհաննես Մկրտիչ** վանքն էր, որը գտնվում էր **Գոմոց թաղի** հարավային մասում՝ **Խոցերու ջրի** ափին, ինչի համար էլ վերջինս կոչվել է նաև **Ամիրդոլու ջուր**: **Ամլորդվո վանքը** հոգևոր-մշակութային մեծ վերելք է ապրել հատկապես 16-17 դդ.: Վանահայրեր **Բարսեղ Աղբակեցու** (**Գավառեցի**) և **Վարդան Բաղիշեցու** օրոք մենաստանը զգալիորեն բարեկարգվել ու ընդարձակվել է (այս երևելի հոգևորականների աճյունները ամփոփված էին նույն մենաստանում): Վանքում գործում էր վանական դպրոց, որի նշանավոր սաներից էին Կ. Պոլսի **Հովհաննես Կոլոտ** (1715-1741) և **Երուսաղեմի Գրիգոր Շղթայակիր** (1715-1749) հայոց պատրիարքները: **Ամլորդվո վանքը** հայ գրչության կարևորագույն կենտրոններից էր, ուր ընդօրինակվել են տասնյակ գրչագրեր: Մինչև 19-րդ դ. 70-ական թթ. վանքը **Բաղեշի թեմի** առաջնորդանիստն էր: **Ամլորդվո վանքին** կից կառուցված էր **Սուրբ Սիոն** տաճարը:

Քաղաքի շրջակայքում հայտնի էին մի քանի այլ վանքեր: **Ավեխու թաղին** կից գտնվում էր **Սուրբ Աստվածածին** մենաստանը (**Սուրբ Թադեի վանք**), որի հիմնադրումը վերագրվում էր Սուրբ Թադեոս Առաքյալին: Մոտակայքում բխում էին

Սուրբ Թադեոսի և **Սուրբ Թովմասի** բուժիչ աղբյուրները, որոնք միևնույն ժամանակ նշանավոր ուխտավայրեր էին: Վանքում 20-րդ դ. սկզբին գործում էին դպրոց և որբանոց («**Ժառանգավորաց**»): **Ավեխու Սուրբ Աստվածածնին** կից գտնվում էր հակոբիկյան (յաղուբի) ասորիների **Մար Խումա** վանքը: Ժամանակին մեծ համբավ վայելող **Ծապրկորու Սուրբ Կարապետ** վանքը 20-րդ դ. սկզբին ավերակ էր և ամայի: Մեծ հռչակ ուներ **Խնդրակատար** (**Խնդիրկատար**) **Սուրբ Աստվածածինը**՝ Բաղեշից շուրջ 4 կմ հարավ-արևելք, **Բաղիշոջրի** ձախափնյակում: Վանքի հիմնադրումը դարձյալ վերագրվում էր Սուրբ Թադեոս Առաքյալին: Այդ իրադարձության, ինչպես նաև մոտակա **Ամպ** գյուղի մասին ժողովուրդը պահպանել էր գեղեցիկ ավանդազրույց: **Խնդրակատարը** նույնպես գրչության կենտրոն էր և հայտնի ուխտավայր: 1881-ից մենաստանում սկսել է գործել որբանոց և դպրոց: **Խնդրակատարի** շրջակայքում էր գտնվում նաև **Շեխիսի վանքը**, որը դեռ 18-րդ դ. բռնագրավվել էր մահմեդական մոլեռանդ հոգևորականության կողմից և վերածվել իսլամի հոգևոր դպրոցի (թրք. medrese): **Սուրբ Գևորգի** վանքը կառուցված էր քաղաքից հյուսիս-արևելք բարձրացող համանուն լեռան վրա՝ **Ծապրկորու ջրի** ձորահովտում: Իր վանքերով նշանավոր էր նաև քաղաքի արվարձանը համարվող **Գոմք** գյուղը, որի մասին խոսել ենք իր տեղում[28]: Քաղաքի եկեղեցիներում և վանքերում պահվող ձեռագիր մատյանների թիվը 20-րդ դ. սկ. հասնում էր 80-ի:

Բաղեշի պատմական մյուս հուշարձաններից հայտնի էր քաղաքի միջնաբերդը՝ կառուցված **Խոցերու ջրի** և **Բաղիշոջրի** միախառնման մոտ բարձրացող դժվարամատչելի քարաժայռի գագաթին: Ուշագրավ է, որ ժողովրդական ավանդության համաձայն վերջինիս հիմնադիր է համարվել **Ալեքսանդր Մակեդոնացին**: **Սուրբ Գևորգի** լեռան գագաթին գտնվում էր **Դերդիվան** («**Տէրտիվան**») դիտակետամրոցը, որը հսկում էր **Բաղեշի** հյուսիսարևելյան մատույցները:

Քաղաքում Մեծ եղեռնի նախօրեին գործում էր 7 հայկական վարժարան (4-ը՝ տղաների, 3-ը՝ աղջիկների), որոնցից հայտնի են **Լուսավորչյան**, **Մեսրոպյան**, **Սուրբ Սարգսի**, **Վարդանյան** դպրոցները: Բաղեշում կար Կ. Պոլսի **Միացյալ Ընկերության** կողմից բացված կրթական հաստատություն: Նախակրթարաններ ուներ նաև հայ բողոքական համայնքը: Ծագումով բաղիշեցի էր աշխարհահռչակ գրող **Վիլյամ Սարոյանը** (1908-1981):

Մինչև 18-րդ դ. կեսերը **Բաղեշն** Արևմտյան Հայաստանի առավել բազմամարդ քաղաքային բնակավայրերից էր: Բացահայտորեն ուռճացված որոշ տվյալներով՝ քաղաքն ունեցել է 20000-25000 տուն բնակիչ: Սակայն քուրդ ավատատերերի պարբերաբար կրկնվող միջցեղային բախումները 18-րդ դ. 2-րդ կեսին բավական ամայացրին քաղաքը, ինչի հետևանքով բնակչությունը զգալիորեն նվազեց: Քաղաքին հզոր հարված հասցրեց նաև 1840-ական թթ. վերջին Բարձր Դռան կողմից քրդական կիսանկախ իշխանությունների դեմ կազմակերպած պատժիչ արշավանքը, որի հետևանքով առանձնակի ծանր կորուստներ ունեցավ տեղի հայ բնակչությունը: 1880 թ. **Բաղեշը** (**Բիթլիս**) դարձավ նորաստեղծ նահանգի կենտրոն:

Մեծ եղեռնի նախօրեին քաղաքի բնակչությունը կազմում էր շուրջ 30000 մարդ, որից 10000-11000-ը՝ հայեր (1500 տուն): Հարկ է նշել, որ 1895-1896 թթ. համիդյան ջարդերն էապես խաթարել էին **Բաղեշի** (**Բիթլիս**) ազգային նկարագիրը՝ ծանր կորուստներ պատճառելով հայությանը (ավելի քան 1000 զոհ): Սրանով հանդերձ՝ Բաղեշի հայերը մինչև 1915 թ. շարունակեցին իրենց ձեռքում պահել քաղաքի արհեստագործությունն ու առևտուրը: Հռչակված էին մասնավորապես բազմահմուտ բաղիշեցի վաճառականները, որոնց գործունեությունը տարածվում էր նահանգի սահմաններից դուրս մինչև Սիրիա և անգամ Կ. Պոլիս: Մեծ համբավ էին ձեռք բերել նաև քաղաքի «**շիլա**» կարմիր գործվածքի վարպետները, որոնց բարձրորակ

28 Տես «ՎԷմ», 2016, N 4 (56):

արտադրանքն արտահանվում էր մեծ քանակությամբ: Բաղեշում լայնորեն տարածված և ամբողջությամբ հայերի ձեռքում կենտրոնացած արհեստներից էին **ջուլհակությունը**, **կաշեգործությունը** (**խաղախորդություն**), **ներկարարությունը**, **զինագործությունը**, **դարբնությունը**, **պայտառությունը**, **ոսկերչությունը**, **դերձակությունը**, **ոստայնանկությունը** ևն:

1915 թ. վաճառաշահ այս քաղաքի հայ բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ շրջակա գյուղերի բնակիչների հետ, տարհանվեց «**Արաբի կարմունջ**» կոչվող վայր (**Բաղիշոջրի** մոտ) և զանգվածաբար բնաջնջվեց: Բարբարոսաբար ոչնչացվեցին հայկական սրբավայրերը՝ այստեղ պահվող ձեռագրերով և եկեղեցական մյուս արժեքներով: Վերջին փրկվածները **Բաղեշը** լքեցին 1916 թ.:

Summary

HISTORICAL AND DEMOGRAPHIC IMAGE OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE

Part eight: The historical and geographical province of Sasun and the city of Bitlis

Gegham M. Badalyan

Key words – Headmost villages, Holoyan–Petoyan, Talvorik, Khut–Brnashen, Hazo city, Khulp, Isyan princedom, Kharzan princedom, Taghi glukh, vicar church of Karmrak Surb Nshan, Aver meidan, Avekhu district, Tsaprkoru district, Gomotz district, St. John The Baptist of Amirdol, Khndrakatar Surb Astvatsatsin.

This article is devoted to the historical–geographical district of Sasun and to the town Bitlis. The district of Sasun, which occupies the most part of the southwestern province of Bitlis, has a unique place in the history of Armenia. Until the beginning of the 20th century, Sasun was the place where fragments of Armenian statehood were preserved. Semi–independent Armenian rule of Sasun was a federation of several noble families, where the dominant family was the Holo dynasty (Peto) with its branches. In Sasun an important role was also played by the Princes (Ishkhans) of Talvorik, Kajarents, Bermtsi and Asetsi. It should be noted that in some parts of Sasun (Khut–Brnashen, Kharzan or inland Sasun) in the 18–19th centuries there were mixed–national autonomous units, where, equally with the Armenians, the Yezidis and Kurds, who had penetrated into Sasun in the 15th and 16th centuries, had managerial rights. It should also be noted that members of the local Armenian council retained their high position and privileges in the west of Sasun (Koghb or Khulp) and in the southeast (Hazo–Khabiljos or Hazvan), where semi–independent Kurdish governments (hükümet) were formed. The most important role of Sasun is also visible in the preservation of the Armenian armed forces. A number of facts make it possible to assert that the military forces of the districts of Upper Sasun (Shatakh, Tsovasar, Talvorik, Psank, Ishkhandzor) reached 4–4.5 thousand as a whole in the 80–90s of the 19th century. Unfortunately, as a result of the treacherous policies of the Ottoman state power in the late 19th century, the Armenian rule of Sasun was significantly weakened and lost its positions. Nevertheless, in the 1890s, the Armenians of Sasun again assumed the role of the flagship of the strug–

gle for freedom, rebelling against the Turkish–Kurdish dictatorship. The tragic events of 1894 and 1904 did not break the rebellious spirit of the Sasun Armenians. Moreover, despite the large losses, the overwhelming majority of the population in Sasun until 1915 was still Armenian, i. e. 55000–60000 people. Meanwhile, the population of Upper Sasun was only Armenian. The tragic year of 1915 was a year of severe trials for the heroic Sasun. The advantage of the enemy did not discourage the freedom–loving inhabitants of Sasun, who had been in battle for life and dignity for the last six months. With terrible losses, 11,000 Armenians from various provinces of Sasun were able to move to Taron in 1916, whence they moved to Eastern Armenia, where they made a great contribution to the noble cause of gaining Armenia's independence. It should be noted that even the infernal conditions could not completely destroy these mighty people of the sacred land. And even today the Armenian highlanders live lives in some parts of Sasun.

The mountainious town of Bitlis (Baghesh) was a well–known handicraft and trade center of Western Armenians. But Bitlis was famous primarily for his spiritual and cultural centers. In the late Middle Ages, the monasteries and churches of St. John the Baptist of Amlordvo (Amirdolu), St. Astvadzedzin (the mother of God) (the monastery of Saint Thaddeus), Surb Karapet Tsaprkoru, Khndrakatar of St. Mary's, Tatraakabnak St. Astvadzedzin (the mother of God) or the monastery Gomots, Karmrak (Karmirak) surb Nshan or St. Kirakos were known here. Turkish–Kurdish violence had serious negative consequences also for this densely populated Armenian city, where in 1915 the Armenian population was sharply reduced to 10,000–11,000 (total of 30,000). Despite this, Armenians were engaged in trade and crafts in the city before 1915. The Armenian Genocide almost completely destroyed this part of the Armenians in their homeland.

This article summarizes the study of the demographic situation in 1914 in the three most important vilayets of Western Armenia – Van, Erzurum and Bitlis. It should be noted that the current study, which covers mainly the borders of Wilsonian Armenia, will be continued. We are planning, after some pause, to proceed to other vilayets in order to complete the study of the historical and demographic image of Western Armenia on the eve of the Armenian Genocide.

Резюме

ИСТОРИКО–ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН

Часть восьмая: историко–географическая область Сасун и город Битлис

Гегам М. Бадалян

Ключевые слова – Передовые деревни, Олоян–Петоян, Талворик, Хут–Брнашен, город Азо, Хулп, княжество Исяна, княжество Харзана, Тахи глух, викарная церковь Кармрак Сурб Ншан, Авер мейдан, район Авеху, район Цапркору, район Гомоц, Святой Иоанн Креститель Амирдола, Хндракатар Сурб Аствацацин.

Данная статья посвящена исследованию историко–географической области Сасун и одному из самых известных центров Западной Армении – городу

Битлис. Сасун, который занимает большую часть юго-западного вилайета Битлис имеет уникальное место в истории Армении. До начала 20-го века Сасун был тем местом, где сохранились фрагменты армянской государственности. Полунезависимое армянское правление Сасуна было федерацией нескольких дворянских семей, где доминирующей семьей была династия Холо (Пето) со своими ответвлениями. В Сасуне важную роль играли также ишханы Талворика, Каджаренц, Бермци и Асеци. Следует отметить, что в некоторых частях Сасуна (Хут-Брнашен, Харзан или внутренний Сасун) в 18-19 вв. существовали смешанные национальные автономные формирования, где на равне с армянами управленческие права имели также езиды и курды, проникшие в Сасун в 15-16 вв. Следует также отметить, что на западе Сасуна (Кохб или Хулп) и на юго-востоке (Азван или Азо-Хаблджоз), где образовались полунезависимые курдские правления (hükümet), члены местного армянского совета сохранили свое высокое положение и привилегии. Наиважнейшая роль Сасуна видна также в сохранении армянских вооруженных сил. Ряд фактов позволяет утверждать, что военные силы уездов или малых уездов Верхнего Сасуна (Шатах, Цовасар, Талворик, Псанк, Ишхандзор) в целом в 80-90-х годах 19-го века достигли 4-4,5 тыс.

Результате политики Османской государственной власти в конце 19-го века. армянское правление Сасуна было значительно ослаблено и утратило свои позиции. Тем не менее в 1890-х годах армяне Сасуна вновь взяли на себя роль флагмана борьбы за свободу, восстав против турецко-курдской диктатуры. Трагические события 1894 и 1904 годов не сломили мятежный дух Сасунских армян. Более того, несмотря на большие потери, до 1915 года подавляющим большинством населения в Сасуне по-прежнему были армяне,- 55000-60000 человек. А население Верхнего Сасуна было только армянским. Трагический 1915 год был годом жестоких испытаний для героического Сасуна. Преимущество врага не обескуражило свободолюбивых жителей Сасуна, которые в течение полгода бились за жизнь и достоинство. Неся ужасные потери, 11 000 армян из различных провинций Сасуна смогли в 1916 году перейти в Тарон, откуда перебрались в Восточную Армению, где принесли большой вклад в благородное дело завоевания независимости Армении. Следует отметить, что даже адские условия не смогли полностью уничтожить этих могучих людей священной земли. И сегодня в отдельных частях Сасуна живет армянин-горец.

Горный город Битлис (Багеш), был известным ремесленным и торговым центром западных армян. Но Битлис был знаменит в первую очередь своими духовными и культурными центрами. В позднее средневековье здесь были известны монастыри и церькви Святого Иоанна Крестителя Амлордво (Амирдолу), Святой Марии (монастырь Святого Фаддея), Сурб Карапет Цапркору, Хндракатар Святой Марии, Татракабнак Святой Марии или монастырь Гомоц, Кармрак (Кармирак) сурб Ншан или Сурб Киракос. Турецко-курдское насилие и погромы 1890-х годов имело серьезные негативные последствия также для этого густонаселенного армянского города, где до 1915 года армянское население было резко уменьшено до 10000-11000 (общее число 30000). Несмотря на это, армяне до 1915 года занимались торговлей и ремеслами. Геноцид армян почти полностью уничтожил и эту часть армян на их же родине.